

914; 915
916; 917
918.

205
9-74

RE 94

AH 1139.

2010

205
2-74 սշ.

ԿՐՈՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԽՈՐՀԻՄԱՆԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՍՏՈՒԱԾՍԻՐՈՒԹԵԱՆ, ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ԵՒ
ԲՈՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՌԱՆԴ ԱՐԾԱՐԾԵԼՈՒ ՀԱՐՄԱՆ

Հ 3802
Հ 3802

ԹԱՐԴՄԱՆԵՑ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԵՑ

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՓԻՐԵԱՆԵՑ

ՄԻԱԲԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՑ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՆՆԻ ԵՒ ՎԱՆԱՀԱՅ
ՎԱՆՈՒՑ Ս. ԹՈՎՄԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ. ՈՐ ՅԱԴՈՒԼԿՈ

ՀԱՏՈՐ Զ. - Հ - Յ - Յ - Ժ - Ժ .

Բ. Ցպագրութիւն

ՀՐԱՄԱՆ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԸՄԵՆԱՑՑ ՀԱՅՈՑ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՑ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՆՆԻ

1897

Ա.

57250-սահ

ԱՇԽԱԲԱՀԻՍ ՄԱՐԴՈՑ ԽԵԼՕՔՈՒԹԻՒՆՆ ՈՒ
ՔՐԻՍՏՈՆԵՒ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆՆ:

Մատեն. Ժ. 16.

Ես չեմ խնդրում Քեզանից փող ու բարիք, ով իմ Սաեղ-
ծող, չեմ խնդրում Քեզանից, որ անարտասուք օրեր ունե-
նամ. պարգևիր ինձ, իմ Աստուած, միայն ուրախ սիրտ, որ
ամեն բան համբերութեամբ տանել կարողանամ:

Ինչ որ Դու ինձ տալիս ես՝ ու ինչ որ ինձանից առնում
ես, միշտ Քո ձեռքիդ բարերարութիւնն է ինձ համար. իմ
գլխիս ի նչ դալիք էլ որ ինձ համար որոշել ես, աղաջում եմ
Քեզ, որ մի օր երջանիկ վերջ ունենայ ինձ համար Քո՛ առաջ-
նորդելով:

Պինչև անգամ աշխարիելու ճարտան էլ կարող է
սխալուել, և իւր ընտրած միջոցներովն, որ մի ուրիշ
ժամանակ ամեն մարդ էլ շատ նպատակայարմար էր
համարում իւր բաղդաւորութեան համար, ամենա-
սարսափելի թշուառութիւնն պատրաստել իւր համար:
Ա. Զենաքայիւալը քրիստոնեան անգամ կարող է

Дозволено цензурою. 28 Октября 1896 г. Тифлисъ.

սխալուել ու ճիշդ այն ժամանակ ամենամեծ ձախորդութեան մէջ իրան տանել քցել երբոր կարծում էր թէ ամենաառաքինի կերպով է գործ կատարում։

Որչափ էլ անհաւատալի է երեւում այս ասածաւ որ մարդս իւր բոլոր խելքը բանեցնելովն էլ իրան կորստեան անդունդն է գլորում։ որ մարդս իւր առաքինութեան ամենայն եռանդովն էլ ձախորդութիւն է միայն հնձում, բայց չենք կարող ուրանալ, որ յիրաւի այդպէս է պատահում։ այդպէս է լինում։ Փորձն այդ մասին անհամար օրինակներն է մեր առաջը դնում։ Այդ օրինակներն ինձ աւելի ուշ գնել պիտի տան՝ թէ մտածելուս և թէ գործելուս կերպի վերայ՝ ու միշտ ինձ արթուն և զգոյշ պահեն իմ կեանքում։ Կարելի է, որ շատ անգամ խելօք եմ բայց իմաստութիւնն է ինձ պակասում։ շատ անգամ բարեպաշտ եմ բայց հարկաւոր խելօքութիւնը չունիմ։ Կարելի է, որ ես էլ նորանցից մէկն եմ, որ Քրիստոսի վսեմ առակը չեն հասկանում թէ՝ եղէ՞+ խորագէ՞տ օչէ՞լ նման, «= Ջամիք աղանձնելի նման։

Մահկանացու մարդոց մեծ մասն, Աստուծոյ իմաստութեանը վերայ շատ չմտածելով, անհոգ է գտնվում իմաստուն լինելու համար չանք անելու խելօք մարդ ճանաչուելու, անուն, պատիւ ունենալու ետեկցն են աւելի վազում՝ և իրանց այդ անունովն ու պատուովը փառաւորուելու։ Քիչ մարդիկ կան, որ իրանց բոնած գործի մէջ՝ իրանք իրանց կան, որ իրանց բոնած գործի մէջ՝ իրանցին, որ արգ գործի մէջ՝ այլ աւելի քեզ գատապարտելու համար իրանց վճիռն են տալի քո վերայ։ Նորանք յարգում են քո զգուշաւորութիւնդ, քո յաջողակութիւնդ՝ կամ ճարպիկութիւնդ՝ բան գլուխ

ինձ նման մարդու բարին ևս՝ կամ լաւութիւնը նոյնափ կամենում եմ ու աչքիս առաջն ունիմ, որչափ որ իմ անձնական շահս աչքից չեմ կորցնում։ Կարելի է, որ աւելի մեծ պարտաւորութիւններս անկատար եմ թողնում երբոր վազում եմ աւելի փոքր պարտականութիւններս կատարելաւ ետեկց։ Քիչ մարդիկ կան, որ իրանք իրանց այդ բանը հարցնեն։ Բայց այս՝ շատ և շատ մարդիկ սովորաբար, այն բանի վերայ են ամենից աւելի մտածում ու հոգս անում։ թէ ինչ ճանապարհներով իրանց ցանկացած նպատակին ամենաապահով կերպով հասնեն։ Թէ իրանց ընտրած միջոցների մէջ, կարելի է, սուտ էլ կայ այդ ժամանակ, մի չարամիտ խորամանկութիւն էլ կայ, անպատիւ կերպով բան բռնել էլ կայ, այդ բաներն իրանց շատ հեշտ են ներում։ Մինչև անգամ իրանց դուր է գալիս, երբոր ուրիշներն իրանց համար ասում են թէ՝ «Ետեկած մարդ է, սատանայ մարդ է։ թէև հաւանել չի կարելի ամեն բանն, ինչ որ արեց և ինչ հնարքներ որ գործ գրեց իւր նպատակին հասնելու համար, բայց ինչ կասես, որ արեց իւր սրտի ուզածն ու հասաւ իւր նպատակին։ իսկ թէ ինչպէս, ինչ կերպով, ինչ ճանապարհներով, այդ մի հարցնիր, մի քննիր»։

Զէ, այդպէս չէ։ մի կարծիր, թէ քեզ վերայ այդպէս խօսողները, քո հնարագիտութիւնդ հաւանողները քեզ գովում են, ոչ՝ այլ աւելի քեզ գատապարտելու համար իրանց վճիռն են տալի քո վերայ։ Նորանք յարգում են քո զգուշաւորութիւնդ, քո յաջողակութիւնդ՝ կամ ճարպիկութիւնդ՝ բան գլուխ

բերելուդ մէջ, բայց իսկապէս ատում են քո անխղճմտանքութիւնդ: Դու քո նպատակիդ հասար, բայց քո լաւ քաղաքակիցներիդ քո վերայ ունեցած վրատահութիւնը կորցրիր, քեզ անհաւատարիմ՝ ու իսարդախ մարդ են ճանաչում: Մի անգամ խաբողին՝ մարդիկ, էլ երբէք հաւատ չեն ընծայում: Դու յես լսում, որ քեզ գովելու հետը միասին՝ ետևիցդ աւելացնում են այս խօսքերն էլ թէ՝ լաւ մարդ չէ: Նորանից զգոյշ պէտք է մնալ: Ուրեմն գու աւելի բան կորցրիր, քան թէ ձեռք բերիր, կարելի է, ամենի ու քո իսկ աչքումդ անընդունելի ճանապարհով մի բարիք ձեռք քցեցիր, որ թէ՝ ուրիշների համար և թէ քեզ համար մեռած ու փուչ մի բանի է նման, բայց ազնիւ, կենդանի սրտեր քեզանից հեռացրի՛:

Մի ասիլ թէ «ինձ համար մէկ է, ինչ ուզեն, թող խօսեն իմ վերայ: Անխելք է այն մարդն, որ իւր ձեռքիցն եկածը չի անում, մտածելով թէ՝ մարդիկ ինձ համար ինչ կասեն, կամ ինձ կդատապարտեն: Ես այդ մասին ամենելին հոգս չեմ անում: Ես իմ նպատակիս միայն հասնեմ, ուրիշներն ինչ ուզում են, թող ասեն վրաս»:

Ձէ, չարաչար սխալվում ես, որ ասում ես թէ՝ ես իմ նպատակիս հասնեմ, մարդոց ինձ վերայ խօսածներն, ինձ վերայ արած բամբասանքներն ինձ համար ամենելին նշանակութիւն չունի, մի փողի չեմ առնիլ: Հա՞ խօսել են վրաս, հա՞ չեն խօսել, ինձ համար մի և նոյն է: Ասացի քեզ թէ՝ սաստիկ սխալվում ես, երբոր այդ խելքիդ ես ծառայում, և այդպէս մտածում՝ կամ խօսում, ինչու որ թէև գու

ողորդ է, քո նպատակներիդ հասար, բայց սրտիդ հանգստութիւնը կորցրիր: Դու քո կարծած խելօքութիւնովդ անարդար միջոցներ էիր ընտրել, որ քեզ նպատակիդ հասցրին, բայց Աստուծոյ ընդդէմ շարժեցիր ու մարդոց քեզ վերայ ունեցած հաւատարմութիւնը քո վրայից վերցրիր, նորանց խաբելով ու խաբեբայ մարդ գուրս գալով նորանց առաջը: Դու քո պարզութեան և անմեղութեան գեղեցիկ դրախտից ինքդ քեզ գուրս քցեցիր՝ ու մի ապահով՝ վայրենի տեղ ընկար: Էլ ուրիշ յենարան չունիս քեզ համար: Քեզ մնում է միայն այնուհետեւ քո գլուխտ մի կերպ պահել այս աշխարհումն քո անապահով խելքովդ, որ մարդոց առաջն այլ ևս արժէք չունի:

Մի մտածիլ թէ՝ «Ես իմ գլուխս մի կերպ կառավարել կըկարողանամ»: — Այ ողորմելի մարդ, որ քո ունեցած խելքիդ ես ապահնել իմացիր, որ այդ խելքդ շատ շուտ քեզ անօգնական կը թողնի. մեր կեանքի շատ փորձառութիւններն անհերքելի կերպով ցոյց են տալիս, որ մենք չպիտի պարծենանք թէ՝ մենք խելք, վարպետութիւն, ճարպիկութիւն, սատանութիւն այնքան ունինք, որ երբէք անբաղդութեան մէջ չենք ընկնիլ՝ ու խեղճ չենք մնալ այլ միշտ լաւ կապրենք, լաւ օրեր անց կկացնենք: Նատ սխալվում ես: Մի պատահմունք ամեն ունեցած խելքդ ոչնչի կը հանի, ամեն բան տակն ու վրայ կանի, ինչ որ սրամութիւնովդ ու վարպետութիւնովդ ձեռք ես բերել և ունիս: մի անակնունելի ու սարսափելի դիպուած կարող է ամեն բան քարուքանդ անել, ինչ

որ կարծում ես, որ գուշատ լաւ շինել ես: Բայց
չէ, այնպէս չասացի, ինչպէս որ պէտք է ասէի, անա-
կընունելի դիպուած չէ, այլ Աստուծոյ տիեզերական
կարգադրութիւն է խելքդ գլխիցդ առնողն, որ յան-
կարծ կորցնում ես բոլոր ունեցած չունեցածդ. ինչու
որ չէիր իմանում՝ ու ինքդ քեզ չէիր ճանաչում, որ
մի տկար արարած ես ու միշտ Աստուծոյ տնօրէնու-
թեան տակն ես՝ ու պիտի մնաս: Աստուծոյ հզօր
ձեռքը կարող է քո հպարտութիւնդ կոտրել, որ վիզդ
ծուես, գլուխդ քաշ քցես: Ի՞նչպէս կլինի այն ժա-
մանակ քո բանդ, երբոր տեսնես թէ՝ աւելի կորցրիր,
քան թէ ինչ որ և ինչքան որ խարդախութիւնովդ
ու խորամանկութիւնովդ ձեռք էիր բերել: Ի՞նչպէս
կլինի այն ժամանակ քո բանդ, որ աններելի միջոց-
ներով ինչք ու հարստութիւն էիր ձեռք քցել՝ ու
յանկարծ տեսնում ես, որ յետին մուրացկան աղ-
քատը գարձար, ու քո գլխին էկածի վերայ ուրա-
խանում են, արդարացի կերպով արհամարհում են
քեզ բոլոր քեզ ծանօթ մարդիկ՝ ու քեզ վերայ ցա-
ւելու տեղն՝ ասում են թէ՝ տեղն է, որ յետին
թշուառութեան մէջ ընկաւ, արժանի էր այդ պատ-
ժին, իւր իրաւացի մասն ու բաժինն է. - կամ երբոր
ունայն փառքի և մեծ անուն ունենալու համար քո
խղճմտանքդ արատաւրել ես, ու յետոյ՝ ի վերուստէն
գլխիդ մի մեծ քար ընկնելու նման՝ յանկարծ պա-
տահում է մի յեղափոխութիւն քո կեանքիդ մէջ,
քո ամեն բանդ տակն ու վրայ անում, բարձրու-
թիւնիցդ քեզ գլորում, խոր փոսը քցում, և ամեն
մի մարդ ետևիցդ ասում է թէ՝ տեղն է, այդպէս

պէտք էր նորան, արժանի է. - և ամեն մի մարդ, որ
էլ քեզանից վախենալու բան չունի, գովելու տեղ՝
քեզ խայտառակում է մինչեւ անգամ մեռնելուցդ
յետոյ, որ գերեզմանիդ մէջն էլ քեզ հանգիստ մնալ
չէ թողնում:

Ուրեմն ինչ էր վերջապէս քո խելօքութիւնդ.
մի անխելքութիւն չէր արդեօք: - Ո՞չափ արժանի չէ
գովասանքի այն հնարիմաց ու զգուշաւոր մարդն, որ
շատ կարճատեւ, կարելի է ասել, բոպէական վայել-
չութեան համար խաղի մէջ է դնում իւր կեանքն, որ-
պէս և անցաւոր ու պատահական բանն՝ յաւիտենա-
կան արժէք ունեցող բանի հետ. - որ բաղդաւոր լի-
նելու համար կորցնում է լաւ մարդոց դէպի ինքն
ունեցած պատիւն ու մեծարանքը միանգամայն և
հաւատարմութիւնն, Աստուծոյ իւր վերայ ունեցած
սէրն ու խնամքն, և վերջապէս կորցնում է իւր ու-
րախալից յոյն ու ակնկալութիւնն՝ և իրան դատա-
պարտում է խաւար աշխարհը գնալու՝ իւր մահուա-
նից յետոյ՝ այն կեանքում: - Այստեղ մենք չենք տես-
նում հնարագիտութիւն, զգուշաւորութիւն ու խելք,
այլ ամենայն կերպով պատժուելու արժանի թեթեա-
մութիւն:

Եթէ որ մեր երկրագունդն այն՝ լաւագոյն աշ-
խարհի նման՝ սուրբ արարածներով միայն՝ հրեշտակ-
ների միայն բնակարան լինէր, այն ժամանակ աս-
տուածային իմաստութիւնը մի և նոյն ժամանակ մարդ-
կային գերագոյն խելօքութիւն կընանալուէր: Ամեն
մի մարդ կրքիցը հեռու կըփախչէր, ամեն մի մարդ
մեղքը կանիծէր. ամեն մի մարդ կըհամարձակուէր

անպատրուակ իրան ցոյց տալ, առանց վախենալու, որ չարագործներն ի չարն գործ կը դնեն իւր համարձակութիւնն ու իւր գլուխը փորձանքի կը բերեն:

Բայց, իսկապէս այնպէս չէ: Արդար մարդն այս աշխարհիս մէջ այնպիսի մարդոց հետ է ապրում, որոնք մեծ մասամբ միայն իրանց անկուշտ ինքնասիրութեանն են ուզում յագուրդ տալ. այնպիսի մարդոց մէջ է ապրում, որոնք իրանց շատ անգամ մեծ մարդ են կարծում, երբոր կարողանում են, սատանութիւն բանեցնելով իրանց պատուաւոր, անկեղծ ու անխարդախ եղբօր գլխին, նրան վնաս հասցնել, իսկ իրանք շահուել. այնպիսի մարդոց մէջ է ապրում, ասում եմ, իրանց նման մարդոց հաւատացող, խղճմտանքի տէր ու ճշմարիտ մարդն, որոնք որ՝ իրանց նման մարդոց՝ իրանց համար միայն խաղալիք ու գործիք են տեսնում. որոնց իրանց օգտին պէտք է բանեցնեն. որոնք թէւ գիտաւորութեամբ էլ վնաս չեն տալիս նորանց, բայց իրանց չափից դուրս թուլութիւնովը կարող են վնաս հասցնել: Սորա համար ասաց աստուածային Ուսուցիչն իւր աշակերտաց, երբոր նորանց պատրաստում էր իրանց կեանքի մէջ տեսնելու բաների համար՝ «Ահա՝ զրկում եմ ես ձեզ՝ իբրև գառներ՝ գայլերի մէջ»:

Այսպիսի մի աշխարհի մէջ, այսպիսի մարդոց մէջ, ինչպէս որ միանգամ կան արդէն ու ապրում են, բաւական չէ Աստուծոյ օրէնքները կատարելն, որ առաքինի լինի մարդո. ամենելին հերիք չէ ուրիշներին էլ իրան նման բարեխիղմ ու ճշմարիտ մարդիկ ճանաչելն, այլ պէտք է զգուշաւորութեամբ էլ բան

բռնել, պէտք է իմանալն էլ ուղիղ կերպով գործադրելն առաքինութեան օրէնքներն. և ով որ այս բանը չգիտէ, կամ իւր չափից դուրս ջերմեռանգութիւնից իմանալ չէ ուզում, կարող է՝ ընդդէմ իւր կամքին՝ մեղքի թագաւորութիւնն ընդարձակել այնտեղ, ուր որ մտածում էր մեծացնել Աստուծոյ թագաւորութիւնն:

Օրինակի համար ասենք, ճշմարիտ է, պէտք է խեղճերին, աղքատներին օգնես, կարօտներին ողորմութիւն տաս. բայց առանց խելօքութեան արած ողորմութիւնովդ երես տանրդ, անգործ կեանք անցկացնող մուրացկանին՝ իւր ծուլութեան ու մոլութեան մէջ աւելի ես միայն կը հաստատես:

Ոզո՞րդ է, ճշմարտութիւնը պէտք է խօսես. բայց ոչ առանց զգուշութեան: Կան այնպիսի ճշմարտութիւններ, որ ժամանակից առաջ յայտնելն՝ արդար և անխարդախ մարդոց բաղդաւորութիւնը կարող է վտանգի մէջ դնել: Կան կեղծաւորներ, որոնք որ քո առաջդ ձեւանում են քեզ անկեղծ բարեկամներ, քեզ բարի ցանկացոլներ, ճշմարտութեան նախանձաւորներ՝ և իրանց կեղծ վարմունքովը քեզ հետ՝ քո սրտիցդ գաղտնիքներ են որսում ու դուրս քաշում, հանում որոնցով քո և ուրիշ մարդոց գլխին չափատուելու փորձանքներ կարող են բերել:

Ստոյգ է, ոչ մի մարդու պիտի չը վիրաւորես, ոչ ոքի համար վատ չխօսես, ոչ ոքի հակառակ պիտի չգնաս, չկոռւես. բայց խորամանկ ու չարահոգի մարդկիը կը ցանկանային, որ շատ բարեսիրտ մարդուն կորցնել տան, իւր ունեցած չունեցածից ու պատուից որպէս և ունեցած իրաւունքիցը զրկեն խաթեբայու-

թիւնով. զուր տեղն ես դու նրանց առաջը պարզ սրտով և արդարացի կերպով ցոյց տալի քո ճշմարտութիւնդ, շուտ կակլելով ու ականջ անելով նորանց խօսքին: Նորանք քո հոգիդ չունին, նորանք ծաղր են անում քո առաքինութիւնդ, նորանք այն մարդիկն են, որ առանց խղճահարուելու, յափշտակել են ու կըյափշտակեն թէ՛ քո և թէ՛ քո մերձաւորներիդ ունեցած չունեցածն էլ, եթէ որ ամեն բան աչքիդ առաջը չառնես ու սիրա չանես նորանց դէմ դնելու և վերջապէս՝ օրէնքի պաշտպանութեանը չդիմես նորանց դէմ:

Իրաւ է, ամեն բանից աւելի ցանկալի չպիտի համարենք երկրաւոր հարստութիւնն այս աշխարհիս մէջ՝ որպէս և փափուկ ու հանգիստ կեանք ունենալն, որոյ համար հոգի տայինք, այլ գլխաւոր բանը մեզ համար պէտք է լինի մեր սիրտն ազնուացնելը: Մենք պէտք է աշխարհիս վերայ ամեն ջանք անենք գործ կատարելու, և ետեից ընկնենք այն բանի, որ մեր ունեցած սեպհականութեան հանգամանքների մէջ՝ մինչեւ անգամ մեր հարստութիւնն աւելանայ ու չպակասի: Այսպէս անելով, ամեն մի մարդ իւր անդուլ գործունէութեամբ՝ կարող է՝ ձեռքիցն եկածի չափ՝ գործել ու մի և նոյն ժամանակ ուրիշների բարօրութեանն ևս նպաստել:

Սուտ չէ, պէտք է մենք Աստուծոյ առաջնորդութեանը հաւատանք. բայց մեր հաւատը մեզ պիտի չտանի յոյլ անգործութեան ու ծուլութեան: Մենք պէտք է մեր անզգոյշ վարմունքովն ինքներս մեր մեծ անբաղդութեան պատճառ չդառնանք, ու ինք-

ներս մեզ չհանգստացնենք թէ՛ այդպէս պէտք է լինէր, Աստուծոյ այդպէս էր կամեցել: Մեզ աստուծանից բանականութիւն է տուած, որ մեր խելքովը վտանգները մեզանից հեռացնենք:

Այսպէս ամեն աշխարհային ու երկրաւոր խելօքութիւն՝ առանց քրիստոնէական իմաստութեան՝ անխելքութիւն է, և ամեն առաքինութիւն, որ առանց լաւ մտածելու ենք անում, արժանի է վերջապէս ամենախիստ պարսաւանաց: Սորո համար պէտք է մենականագույն լինին+ խելքութեանով՝ խելքու լինին+ իմաստութեանով:

Խելօքութիւնն այն յաջողակութիւնն է, որ մենք ունենում ենք փորձառութիւնով, որով մենք մեր ամեն գործերի մէջ միշտ ամենանպատակայարմար միջոցներն ենք ընտրում մեր նպատակին հասնելու համար: Խելօքութիւնն ամեն հանգամանքներին ծանօթանում է, ամեն հանգամանքները քննում, կշռում ու նրանց համեմատ՝ անելու բանն անում. նա այն հանգամանքներից միայն օգուտ է քաղումն և ջանք է անում: որ ամենապահով ճանապարհները ձեռք առնի:

Ընդ հակառակն իմաստութեանն այն ջանքն է, որ ամենայն կերպով աշխատում է անել միայն այն բանն, ինչ որ Աստուծոյ պատուիրանն ու մեր մարդկային արժանաւորութիւնը մեզանից պահանջում է՝ կամ մեզ ցոյց տալիս: Իմաստութիւնն իւր համար ոչ մի օգուտ չէ ուզում. նա ոչ թէ իւր օգուտը միայն մտքումն ունի, այլ և մտածում է այն ամեն բանն, ինչ որ աղնիւ և բարերար բան է, ում էլ որ յետոյ

օգուտ բերի: Նա միայն փափագում է, որ իւր հոգին սուրբ լինի, իւր սիրտը՝ մաքուր: Իւր ամեն արած բանի մէջ հոգի է տալի միայն Աստուծոյ սիրոյն համար՝ և իւր նման մարդու բարւոյն համար:

Խելօքութիւնն իւր համար ընտրում է և իւր աչքի առաջը դնում այնպիսի մի բան, որ միայն իւր օգտին, իւր շահուն համար պէտք է անի. բայց իմաստութիւնն ասում է ներելի՝ է արդեօք քեզ այդ միջոցն, որ ընտրել ես ու գործ պիտի դնես: Այնպիսի մի միջոց ընտրել ես, որ Աստուծոյ համելի լինի: Այդ ընտրած միջոցդ քեզ համար է միայն, թէ քեզ նման մարդոց բարին ու օգուտն էլ աչքիդ առաջն ունիս:

Խելօքութիւնն ընտրումէ իւր նպատակին ծառայելու երեցող միջոցներ, որ իւր սրտի ուզած բանին համնի: Բայց իմաստութիւնն ասում է. այդ ընտրած միջոցներդ, այդ բռնած ճանապարհդ ամեն բանից առաջ բարոյապէս բարի՝ պէտք է լինին. ուրեմն արհամարհիր այն ամեն բանն, որ դու պէտք է չհաւանէիր, երբոր ուրիշների վերայ տեսնէիր: Տնով տեղով չուներին զզուելի վաշխառութիւնովդ մի՛ խեղդիր, որ աղքատներին առատ ձեռքով ողորմութիւն տաս: Սուտ մի՛ խօսիր, կեղծաւորութիւն ու շողօքորթութիւն մի՛ անիր, որ բարձր դիրք ունեցող մարդոց համելի ու հաւանելի լինիս ու սիրուիս. քեզ նման մարդոց մէկին մի՛ զրպարտիր, որ ուրիշների աչքումը մի անուն ստանաս:

Այս է ուրեմն աշխարհումն գլխաւոր առաջերանիւնը խելօքի և խառապոնի մէջ: Խելօքը՝ յոյս դնում է

իւր խելքի վերայ, իմաստութիւնը հիմնվում է խըղձմտանքի ճշմարտութիւնների վերայ: Խելօքը փոխում է իւր մի բան անելու կերպը, հանգամանքներին մըտիկ տալով, իսկ իմաստունն ամեն ժամանակ և ամեն տեղ անփոփոխ է մնում, որովհետեւ միայն մշտական նշանակութիւն ու արժէք ունեցող բանն է ուզում, որ լինի: Աշխարհիս խելօքութիւնն ոյժ ու գորութիւն է ստանում կեանքի փորձառութիւններից. իսկ իմաստութիւնը՝ խելքի ուղիղ համոզմունքներից, աստուածային կամքի ճանաչողութիւնիցն, ինչպէս որ մեր Փրկիչն յայտնել է մեզ: Խելօքութիւնը կարծ ժամանակ է մեզ օգուտ բերում, իսկ իմաստութիւնը մեզ պարզեցում է մնայուն բազդաւորութիւն, այսինքն է՝ սրտի գոհութիւն, հոգւոյ հանգստառութիւն, յարգանք դէպի մեր անձն, ուրախ կերպով մոիկ տալ Աստուծոյ և յաւիտենական կեանքի վերայ: Խելօքութիւնը հոգս է քաշում երկրաւոր բարիքների համար, իսկ իմաստութիւնն՝ երկնաւոր երջանկութեան համար:

Խշուն-Եկանն ա- խառապունիւնը մարդս իւր աչքի առաջն ունենալով, երկուսից մէկը պէտք է ընտրի. բայց ո՞րն ընտրի. տեսնում է, որ երկուսն էլ մահկանացու մարդուս աստուածանից պարգևած շնորհքներն են իւր երկրաւոր՝ ժամանակաւոր կեանքում բաղդաւոր լինելուն համար: Ո՞րն ընտրի հարցնողիդ, որ այս տօղերս կարդում ես, ինչ պատասխան տամ ես այստեղ. պէտք է ասեմ, որ մարդս՝ ոչ խելք բանեցնելը և ոչ իմաստութիւնը պէտք է ձեռքից թողնի՝ կամ արհամարհի. երկուսն էլ պէտք են իւր

կեանքի մէջ, երկուսն էլ պէտք է ունենայ ու բանեցնի. ոչ մի ժամանակ չպիտի խելքն ու իմաստութիւնը միւսից ջոկի, մէկը՝ պէտք համարի իւր համար, իսկ միւսն՝ անպէտք, իւր մտքումն ասելով թէ՝ երկուսից մէկն իրան հերիք է աշխարհումն ապրելու համար, առանց միւսին կառավարուել կարող է. ուրեմն մէկը՝ կամ միւսը պէտք էլ չէ. Այդտեղ է, որ նա չարաչար կը սխալուի, նախապատիւ համարելով՝ կամ խելքը՝ կամ իմաստութիւնը. պատճառն, եթէ որ կուզես իմանալ, այն է, որ աշխարհիս Փըրկիչն ասաց թէ՝ Խորտէեա եղէ+ օյէրէ նման, բայց մամիտ՝ տղանինէրէ պէս:

Այժմ նո՞ր եմ հասկանում իմ աստուածային Ուսուցիս յայտնած խօսքերի խոր միտքն ու ճշմարտութիւնն: Այս, ինչպէս շատ անգամ իմ կեանքումն խելօք էի միայն՝ և ոչ իմաստուն: Որչափ բաներ արի, միայն իմ բոպէական օգուտս մտածելով, առանց ինքս ինձ հարցնելու՝ կամ կշռելու թէ՝ իմ ուզեցած և՝ ինձ միայն յայտնի կերպով արածո՝ բարի էր արդեօք, լաւ էր, ազնիւ սրտով էի արել: — Հենց դրանիցն էր, որ իմ կեանքիս մէջ արած գործերումը՝ ոչ մի մնացական շահ չունեցայ. հենց դրանիցն էր, որ իմ արած բաներիս, կատարած գործերիս շատն՝ ինձ հոգս պատճառեց, որն էլ մինչեւ անգամ փոշմանութիւն՝ թէ ինչու իմ բռնած գործերիս մէջ ուղիղ և լաւ ճանապարհը բանի տեղ չըդրի: Հիմա եմ հասկանում, որ առանց քրիստոնէական իմաստութեան մարդուս ունեցած խելքն՝ անխելքութիւն է միայն:

150/38084
Եթէ որ իմ բռնած ամեն մի մեծ նշանակութիւն ունեցող գործի մէջ մի և նոյն ժամանակ մտածած ու կշռած լինէի թէ՝ անելու բանիս մէջ մեղք չկայ արդեօք, արդար բան եմ բռնումն ուրիշ՝ ինձ նման մարդոց՝ ոչ թէ վնաս, այլ շատ օգուտ կըքերի, — այս, եթէ որ այս ամեն բանը միտք արած լինէի, երբէք այնպիսի բան չէի բռնիլ, որ այժմ ինքս ինձանից ամաչէի, արած գործս միտքս բերած ժամանակս որչափ էլ ուրիշներին յայտնի չէ, որ ես իմ արած բանս ամենելին չեմ հաւանում ու ինձ սաստիկ մեղադրում. այժմ նոր խելքս գլխիս գալով թէ՝ այնպիսի կեանք կարող էի անցկացնել, որոյ յիշատակը միայն մեծ ուրախութիւն ու միհթարութիւն կըլինէր ինձ համար, երբոր մտածէի թէ՝ ինչպէս եմ ապրել մինչեւ այս տարիքիս հասնելս: Կըտեսնէի, որ ես բարերար եմ եղել իմ բոլոր լնտանեացս համար, բարերար եմ եղել շատ ու շատ իմ քաղաքակցացս և օտարների համար կարելի է, իմ բոլոր հարենեացս համար էլ: Աւելի լաւ, աւելի ազնիւ, աւելի մեծ մարդ կըլինէի, քան թէ, դժբաղգաբար, այժմ չեմ: Իմ սուրբ սկզբնատպիս՝ իմ Փրկչիս աւելի նման կլինէի, իմ Աստուծուս աւելի մօտիկ կլինէի:

Բայց այն չեմ, ինչ որ պէտք էր լինէի: Ես իմ արած գործերի մէջ խելօք էի միայն, բայց ճշմարիտ իմաստութիւնը, ճշմարիտ և ուղիղ բանի համար ունեցած քնքոյշ զգացմունքս հեռու էր ինձանից:

Քրիստոնէական սուրբ իմաստութիւն, կըթի իմաստութիւնն, այժմ գոնէ միացիր երկրաւոր խելօքութեանս հետ, ինչպէս որ մեր անմահ հոգին մեր հո-

ղանիւթ ու հողանալու մարմնոյ հետ միացած է:—
Ով իմ հոգի, ամեն մի արած բանիդ մէջ մտածիր
թէ կարող ես արդեօք բռնած գործիդ մէջ ամենա-
գէտ Աստուծոյդ առաջ պատասխան տալι Արդեօք
խղճմտանքդ արած բանիդ համար վճռողաբար մի
«այ՛», ասո՞ւմ է քեզ:

Բայց այն ժամանակ քո բարի դիտաւորութիւն-
ներիդ համար ունենալու վարմունքիդ ամենալաւ կեր-
պըն էլ ընտրիր: Մի բանեցնիր ոչ մի անվայել ու քեզ
անպատութիւն բերող խարդախութիւն՝ կամ նեն-
գութիւն, որ քո ցանկութիւններդ կատարել կարո-
ղանաս: Անպիտան ճանապարհներով բարի նպատակի
հասնելն՝ դժոխքի օգնութեամբ երկինք ձեռք բերել
ուզենալ չէ արդեօք:

Աւելի լաւ է, որ ոչ մի բան չանես, երբոր իմաս-
տութեամբ անել չես կարող: Աւելի լաւ է՝ թողնես
քո սրտիդ ամենացանկալի բաղձանքներն անկատար
մնան, երբոր տեսնում ես, որ ցանկութեանդ կա-
տարուիլն ուրիշներին աւելի վնաս կարող է բերել
քան թէ քեզ օգուտ: Մի թողնիր, որ քո տուած
գատողութիւնդ՝ կամ վճիռդ՝ կրքերովդ ու բարկու-
թիւնովդ առաջնորդուելով, քեզ քո փափագիդ հա-
ցընեն: Մի հանգիստ ըովէ ընտրիր քեզ համար մտա-
ծելու՝ սառնասիրտ խոհեմութեամբ՝ ու վճիր քո
անելու գործդ: Երբոր քո ընտրութիւնդ արիր, պըր-
ծար, հոգւոյ անյողողով զօրութիւնով արած անելու
բանդ՝ քո ամենալաւ համոզմունքիդ հաւատարի մ
մնալով:

Եւ երբոր տեսնում ես, որ մեծ փորձութեան

ըովէներ գալիս են,—այն ժամանակ քո հոգւոյդ
ամենամաքո՞ւր մեծութեամբը երեացիր: Կորչի, գնա՛
չնչին բաների ետևից ընկնող քո երկրաւոր խելօքու-
թիւնդ՝ որ միայն իւր օգուտն է հաշուել ուզում՝
ու Քրիստոսի իմաստութեանը հակառակ է գնում:
Այն ժամանակ ստեղծող Աստուծուդ աւելի լսիր,
քան թէ մարդոց, այն ժամանակ Աստուծուդ աւելի
լսիր, քան թէ քո սրտիդ ցանկութիւններին: Խելօքի
անուն ունենան արհամարհիր, ու ստացիր արդար
մարդու, ազնուաչոգի մարդու անունը: Կարելի է,
որ դու կարծում ես թէ՝ քեզ ու քո արած գործդ
ճանաչո՞ղ չի լինիլ: աշխարհը քեզ ու քո արած գոր-
ծիդ վերայ զարմանալու տեղը քեզ համար կասի
թէ՝ անխելք է, յիմա՞ր մարդ է:— Աշխարհը թո՞ղ
իրա՛ համար մնայ: Այն ինչ խելքի տէր մարդ կըլի-
նի, որ իւր հոգւոյ արժանաւորութիւնն ոչինչ գնով
ծախի, ինչ է որ աշխարհիս կարճամիտ մարդոց իւր
վերայ զարմացնի ու նոցայ սովորաբար, շատ անհաս-
տատ, միշտ փոփոխական գատողութեան համեմատ
ապրի: Քեզ տեսնում է երկինքը, քեզ դատում է
ամենաբարձրեալ Աստուածդ:



Բ.

ՏԱԻՖԵՆԱԿԱՆ ԿԵԼՆՔԻ ՄԱՍԻՆ ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀՅՈՒ ՏԵՐ ԳՅԱԼՅՈ

Խաղաղութիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղութիւնս
եմ տալիս ձեզ. չէ թէ ինչպէս աշխարհս է տալիս՝ ես տալիս
եմ ձեզ. ձեր սրտերը թող չշփոթուին ու չվախենան:

Լաեցիք, որ ասացի ես ձեզ, թէ գնում եմ ու էլի կդամ
ձեզ մօտ. թէ որ ինձ սիրեկիք, ապա ուրախ կլինէիք, որ ես
Հօր մօտն եմ գնում. ինչի որ իմ Հայրս ինձանից մեծ է:



Յատ չուզենալով է միայն միտք անում մարդս,
որ մի օր պէտք է մեռնի ու հողը մտնի. բայց ինչ-
քան բան կայ, որ նորան միտք է անել տալիս կա-
մայ ակամայ, որ պէտք է մեռնի ու տանեն, թաղեն
իրան, աշխարհիս երեսումը չպիտի այլ ևս երեւի.
Հողի տակումը պէտք է գնայ, պառկի: Թէ այն ժա-
մանակ, որ մարդս պատահում է մարդոց որ մեռելի
հետ գնում են ու տանում մինչեւ գերեզմանը ճա-
նապարհ ձգելու, կամ թէ այն ժամանակին, որ լսում

է. թէ՝ այս, այն իրան ճանանց մարդը վախճանուել
է, կամ երբոր միտքն են ընկնում իւր իսկ սրտի
սիրեկաններն, որ իրանից բաժանուեցին, գնացին,
հեռացան ու հողը մտան—այս ամեն մի դիպուա-
ծումն միտք ենք անում, որ մենք ևս բնութեան
օրէնքից դուրս գալու չենք, մեզ համար ևս նոյն
օրէնքը կայ, ու մի օր մենք ևս պէտք է հրաժա-
րուենք աշխարհից, բաժանուենք մեր սիրեկաններից,
հեռանանք, օտարանանք մեր տունից՝ տեղից, ազգ
ու ազգականից, բարեկամից ու ծանօթներից: Այն
մարդն, որ ոչ մի ժամանակ չէ մտածել, սարսափե-
լով, իւր մահուան ժամի վերայ, նորա նման է ու
նորա օրին հասած է, ով որ մահ էր ցանկանում
ինքն իրան: Բայց առհասարակ քիչ մարդ կայ, որ
ուզենալով մտածի թէ՝ մի օր պէտք է ինքն ևս մեռ-
նի ու հողը մտնի, այդ բանը մտքին բերելը հասա-
րակ մարդն, աշխարհիս մարդն ամենեին չէ ուզում,
այլ ամենայն կերպով աշխատում է, որ իւր գլխից
հանի, կամ իրանից հեռացնի, որ սիրով չտիրի:
կեանքը չդառնացնի, աշխարհը աչքիցը ըընկնի: Մար-
դիս այսպէս լինելը բնական է ու չպիտի զարմացնի
մեզ: Եթէ որ մահկանացու մարդի մէջն այնչափ
սաստիկ ևս ըլինէր ընդածին (մեզ հետ ծնած)
կեանքի սէրն, որչափ որ է իսկապէս, դարձեալ մի-
թէ պիտի չխորշէինք, հեռու չփախէինք մեռնելու
վերայ մտքեր անելուց, ինչի որ այդ մտքերն ըոլո-
րովին հակառակն են այն ամեն բաներին, ինչ որ
այս աշխարհում մեզ ուրախութիւն է բերում: Մահը
մեր յոյսերին վերջ է դնում, մեր ամեն յոյսերը

կտրում է, մեր մտքումը դրած ամենագեղեցիկ բա-
ները ոչնչացնում, մեր ունեցած ու մեզ համար ամե-
նաքաղցր սովորութիւններից բոլորովին յետ քցում,
մեր ձեռքից առնում, տանում մեր ծնողներին, մեր
զաւակներին, մեր եղբայրներին, քոյրերին, ընկերնե-
րին, բարեկամներին ու մեզ նորանցից զրկում, անո-
զորմալար ոյժ բանեցնելով։ Ա.՝ խ, մեր հոգու կտոր,
մեր սրտին թանկագին մեր սիրեկաններից քանի քա-
նիսին կեանքից զրկել է անգութ մահն ու մեզ սե-
սրտով նստացրել։

սրտով սստացլու է։ Երբոր բանն այսպէս է, այլ ևս ինչի՞ համար ամեն անգամ նոր նորից սեացնենք մեր սիրտը տը- խուր բաներ միտքներս բերելով ու դառնացնենք այն քիչ մեր քաղցր օրերն, որ մեր կեանքի մէջ մեզ ուրախ անցկացնելու համար են մնում։ Քանի որ լաւ օրեր ունենք տեսնելու, քանի որ մեր ձեռքն են այդ լաւ օրերն, խելք կանենք, որ վայելենք, վայել- չութիւններ քաշենք։ Իսկ եթէ զուր հոգսեր անե- լով՝ մեր ունեցած ուրախ օրերն ևս ինքներս տըխ- րութիւնով անցկացնենք, այն ևս մեր խելքիցն իմա- նանք։ — Նատերի բերանից այս խօսքերը կլսես, եթէ որ նորանցից հարցանել ու բան իմանալ ուզենաս իրանց կեանքի մասին, թէ ինչպէս պէտքէ անցկա- ցընեն, կամ թէ ինչպէս պէտք է ապրի մարդս, քանի որ կենդանի է։ Այլ ևս ի՞նչ ասեմ։ Չատ մարդ կայ, որ մինչև անգամ քրիստոնէական հաւատին ևս լաւ ասել չեն ուզում։ Նորանց խելքովը՝ մարդիս սրտին տրամութիւն բերող մի հաւատ է, որովհետեւ միշտ մեզ ասում է թէ՝ մեր կեանքն ու աշխարհս անցա-

ւոր է, այսօր կանք, վաղը՝ չկանք:

Բայց ճշմարիտն այն է թէ, ով որ մահուան վերայ հանգիստ և ուրախ սրտով մտածել չէ կարող, նա ոչ մի ժամանակ գեռ ևս չէ մտածել իւր կեանքի վերայ: Ում համար որ մահը չուզենալու, չախորժելու մի բան է, մի զզուելի պատկերի նման այնպիսի մարդի համար կեանքն մի կնճռուտ, խելք չհասցնելու մի հանելուկ է: և այդպիսի մարդն ինքն իրան ևս գեռ չէ հասկացել, գեռ ևս ինքն իւր խելքին տեղ չէ արել թէ՝ ինչի համար է աշխարհք ծնել ու ապրում և ինչ բանի ետևից պիտի ընկնի, լինի, որ հասնի. հաւատն է, որ կեանքի հանելուկն հանումէ և նորանով մեր ձեռքն է տալի մահուան հանելուկի բանալին. հաւատովն է, որ մենք հասկանում ենք թէ, ինչի համար ենք ապրում ու ինչի ենք մեռնում կամ թէ մեր կեանքն ու մահն ինչ է, ինչ խորհուրդ ունի մեր՝ մի օր ծնելը, մի օր ևս մեռնելը, որ քրիստոնէական հաւատ չունեցողի համար շատ մութ ու անհասկանալի բան է երեսում ու մնում, ինչքան ևս գլուխ կոտրի մտածելով: Ճշմարիտ քրիստոնէական հաւատը՝ ոչ միայն մարդիս որտին աըխրութիւն բերող չէ, այլ ընդհակառակն՝ մահուան վերայ մտածելու ժամանակին՝ ամեն մի ցաւ թեթեացընող է, մարդիս սիրտն բարձր պահող ամեն մի նեցընող է, մարդիս սիրտն բարձր պահող ամեն մի նեցընող է, մեր մահը շռւտ գալու լինի, թէ ուշ սրտով, թէ մեր մահը շռւտ գալու լինի, թէ ուշ որովհետեւ մեզ համար մէկ է՝ շռւտ կմեռնենք թէ

շատ երկար ապրելուց յետոյ, ինչի որ մեր անցկացրած տարիներն մեր աչքին չեն երևում, ու նշանակութիւն կարող են ունենալ մեզ համար այն ժամանակի, երբոր քրիստոնէական կեանքով ու գործով ենք անցկացրել: Եթէ որ Քրիստոսի հաւատն իրօք վայելել է տալի մեզ միշտ հանգիստ սրտով կեանքի տեսակ տեսակ ուրախութիւններն, թէ շատ ապրելու լինենք՝ թէ քիչ, եթէ մեր սիրտը բարձր է պահում աշխարհումն մեր գլխին գալու ամեն նեղութիւններից, եթէ մեր ցաւերը թեթեացնում է, ուրեմն ինչպէս կարող ենք այդպիսի հաւատին վատ ասել, կամ ինչի մեր գլխից պիտի քշենք, հեռացնենք այն մտքերը, որ իրանք իրանց գալիս են մեր գլուխը մտնում: Քո սրտիդ մօտիկներից ումին ես արդեօք կատարելոց կարգումն համարում: Կարելի է հօրդ, որ քեզ համար երկրաւոր պահապան հրեշտակդ էր, քանի որ ողջ էր թէ մօրդ, որ քեզ իւր աչքի լուսի պէս էր սիրում: Կարելի է եղքօրդ, որից հազար ու մի լաւ լաւ յոյսեր կար, երբոր քո աչքիդ առաջին էր, քո հետզ ման էր գալի: Խնչ առեմ քեզ. միթէ սրտիդ սիրեկանի մինին միտքդ բերելդ այլ ես այնքան չես ուզում, որ մինի մահը, որ միտքդ է ընկնում, մենակ եղած ժամերումդ, մահից վախենումը ես:

Մեծ կորուստ ունեցած ժամանակդ՝ սրտիցդ արիւն է գնացել, գեռ ևս սրտիդ խոցը չէ լաւանում: Ախ, այնպիսի խոցեր կան, որ մարդիս բոլոր կեանքին մէջ ևս այնպէս են մնում՝ առանց լաւականութ: Սխալ խօսք է թէ՝ ժամանակը վերջ ի վերջոյ

ամեն բան բժշկում է: Բայց ինչ որ ժամանակը չէ կարող անել ինչ վէրք, ինչ խոց, որ ժամանակը չէ կարողանում բժշկել, Քրիստոսի մեզ պարգևած հաւատը լաւ գիտէ իւր սուրբ բալասանովն նորա ցաւը թեթեացնել, մեղմացնել, այն՝ ամեն ցաւի ճար՝ իւր բալասանովն, որ կաթեցնում է մեր վէրքի, մեր խոցերի վերայ:

Շատ կարելի է, որ մի հանգարտ րոպէումդ քո մահդ ու ոչնչանալդ միտքդ ընկնելով, ակամայ մի սարսափի է գալի վրադ ու բոլոր մարմնովդ դողում, զարհուրում ես, մազերդ բիզ բիզ կանգնում ու մարմնիդ բոլոր թելերին ընդդէմ է թվում ու հակառակ են ուզում կանգնել մեր սիրտն ահ ու գողձող այն մտքին, որ մի օր պէտք է ոչնչանանք: Մի մի ժամանակ միտք կանես, — ինչպէս չէ, — որ աւելի լաւ կլինէր ամենեին աշխարհք ծնած լինէիր, քան թէ մի օր ծնել ես, մի օր ևս պիտի մեռնես. բայց այս անախորժ, այս՝ սիրտ սեացնող զգացումներդ պարզ կերպով հասկացած ճշմարտութեան ներգործութիւններ չեն ամենեին, այլ մի սխալ հասկացողութեան պտուզ: Ի՞սկ քրիստոնէական հաւատն է, որ այստեղ մահուան ամեն զարհուրանքներն ոչնչանում է մեր առաջին, ու մեր աչքը ճգել է տալի այնպիսի ապագայի, յորում կեանքը, գործունէութիւնը և ուրախութիւնը յաւիտեան վերջ չունին: Աշխարհիս ու կեանքի խորհուրդն ու ամենայն հանգամանքները ամենալուսաւոր կերպով մեր առաջը գնող Փրկիչն միթէ զուր եկաւ աշխարհ, որ մեզ այն գեճ բագոյն և անդորրացուցիչ մխիթարութիւնը բերեց:

թէ մենք անմահ ենք, յաւիտենական ու երջանիկ կեանք ունենալու համար ենք ստեղծուած:

Ի՞նչպէս նկարագրեց Քրիստոս մահը. մահը, որոյ արհաւիրքը (զարհուրանքները) ինքն այնպիսի սարսափելի կերպով քաշեց, որ ոչ մի մահկանացու մարդ չէ քաշել. բայց և այնպէս պէտք էր քաշէր՝ այն ևս՝ երբոր գեռ ևս բոլորովին առոյգ հասակի մէջն էր, գեռ ևս իւր ամենալաւ տարիքի մէջն, բոլորովին առողջ և ոյժը ամենևին չկորցրած միջոցին, որ տեսնողին հիացնում էր, և որ շատ լաւ գիտէր իւր անարատ կեանքն ու անմեղութիւնն, որ ունէր. ի՞նչ էր ասում նա մահուան մասին, թէ ի՞նչ է. ասում էր թէ՝ գնում էմ Հօր՝ Տօռ. ահա ինչ է մահն ամեն մի մարդի համար, ով որ մեր Փրկչի ճշմարիտ աշակերտն է ու նորա մեզ սորվնցրածի գոնէ այս խօսքը հասկանում է:

Ինչպէս որ նա էր ասում, այնպէս ևս ամեն մի քրիստոնեայ ասում է իրաւամբ թէ, մեռնելը՝ Հօրը մօտ յետ դառնալ է. ինչի որ Յիսուսի Հայրը մեր հայրն ևս է, ամենայն բան Ստեղծողն՝ իմ Ստեղծողս ևս է: Ի՞նչ քաղցր դաղափար է, որ ունենք մահուան վերայ. մեռնելը հասկանում ենք Հօրը մօտը գնալ: Միշտ այս անունը պիտի տայինք մեր և մեր ընկերաց, բարեկամաց ու սիրելիների մահուանն. այն ժամանակն մահը, որ մեր վախեցած երեւակայութիւնը իբր կմախք (ոսկորտանք) դառնալ է իմանում սովորաբար, մահն, ասում եմ, այն ժամանակը կնմանէր մի սիրելի ոգու, որ իբրև քաղցր բարեկամ մեզ մեր կեանքի սահմաններից դուրս է հանում,

որ մեզ գէպի մեր հայրենիքը տանի: Եւ ճշմարիտ է, որ մահից վախենալը նորանիցն է, որ սխալ ու զարդուրելի անուններ ենք տալի մեր մահուանն, որ մենք ևս այնպէս ենք իմացել ու այնպէս ընդունել: Երբեմն մահ, մեռնել ասելով՝ փտեր, փշանալ են հասկանում: բայց մեր հոգին չէ փտում, չէ փշանում երբէք. երբեմն՝ աշխարհս թողնել, աշխարհից դուրս գալ են իմանում: բայց մենք տիեզերքից երբէք դուրս չենք գալիս. պատճառ որ այդ բանն անկարելի է. երբեմն ոչնչանալ են հասկանում: բայց երբէք կարելի չէ մեր ոչնչանալը: Չէ, մեռնելլ՝ Հօր Տրնակն է:

Գերեզմանի մէջ պառկած դիակի վիճակն ու դրութիւնը՝ մեր դրութիւնը չէ, ինչպէս որ կանք մեր ողջ ժամանակին. մեռած, գերեզման մտած մարդի դրութիւնն՝ իւր պատեանը թողած, իւր հոգու հագուստը հանած դրութիւնն է: Երբոր մենք մկրատով մեր մազերը խուզում, կարճացնում ենք, այն կըտրուած մազերը դարձեալ մեր գլխի վերայ են ու այնպէս ենք համարում, որ իբր թէ չեն կտրուել. արդէն դէն ձգուած չեն իբրև մեզ այնուշետե անպէտք բան: Զինուորը որ պատերազմի մէջ ձեռը, կամ ոտը կորցնում է, ու ինքն աչքովը տեսնումէ, որ թաղեցին. այն կտրուած անդամների դրութեան մէջն է լինում և ինքն. այդ անդամները հորի տակ փտում են իբրև կեանք ու կենդանութիւն չունեցող, իբրև մեռած անդամներ, իսկ ինքն ողջ է, կեանք կայ մէջն ու ապրում է և զգում է, որ փտելու ընդունակ չէ և չէ կարող փտել:

ինչներիս է պէտք մեր մարմնաւոր պատեանն.
ի՞նչ ենք անում նորան. մի հնացած, մի դէն քցե-
լու հագուստ է դարձած մեր հոգու համար: Ինչո՞ւ
դոզ չէ բռնում մեզ, որ մեր մարմնոյ մասերի փո-
խուիլն ենք տեսնում: Այս ասում եմ նորա համար,
որ երեւելի բնագէտների արած դիտողութիւնն որ
կարդում ենք, նորանց գրածիցն իմանում ենք, որ
տարիներ ապրելուց յետոյ՝ զանազան տարիների մի-
ջոցում՝ մարդիս մարմինը շատ անգամ փոխվում է,
այնպէս որ՝ պատանեկութեան հասակին որ գալիս
ենք, մի և նոյն միսն ու արիւնն չենք ունենում, որ
ունէինք մեր երեխայութեան տարիքում. նոյնպէս
և ծերութեան հասակում դարձեալ ուրիշ մարմին,
միս ու արիւն ունենք, և այն չէ, ինչ որ ունէինք մեր
այրական հասակումը: Մենք չենք զգում, չենք հաս-
կանում թէ՝ այդ փոփոխութիւնները մեր մէջն ինչ-
պէս են լինում, որ մենք չենք կարում իմանալ. ին-
չու որ այդ փոփոխութիւնն աննշմարելի կերպով կա-
մաց կամաց է լինում: Ինչո՞ւ համար աւելի մեր աչ-
քին պիտի երեխի, աւելի մեզ թուելի լինի վերջապէս
մեր վերջին փոփոխութիւնը, որ մենք մեր թանձր
պատենից (կճեպից) բաժանվո՞ւմ ենք: Ո՞վ է, որ կա-
րողացել է դիտել թէ՝ ինչպէս է զարթուն մարդը
քունի գնում, որ ինքն ևս չէ իմանում: այժմ դեռ
զարթուն էր, մին ևս տեսար, արդէն քունի է գնա-
ցել. այդ աննշմարելի փոփոխութիւնը ամեն մի մարդ
իւր վերայ փորձած է ու լաւ դիտէ: — Նամատ մարդիկ
են պատահել, որ հոգի տալու միջոցին, խելքները
բոլորովին վրաններն է եղել ու իմացել են, որ մեռ-

նում են: Հանգիստ կերպով վախճանուողներից քիչ
մարդիկ են պատահել որ տեսնէինք թէ՝ հոգին՝
մարմնից բաժանուելու միջոցին՝ մեռնողը չուզենա-
լու, ընդդիմանալու նշաններ է ցոյց տուել: Մինչեւ
անգամ այն մարդն, որ մեռնում է եղել քայքա-
յուած մի մարմնի կրակի պէս այրող ցաւերից, մահը
մօտեցած ու հոգին աւանդելու բոպէումը այդ ցա-
ւերն այլ ևս նա չէ զգում եղել:

Դէն գնան, հեռանան մահուան այն ամեն ան-
միսիթար պատկերներն, որ մեր երեակայութեան մէջ
քաշում ենք. այդ պատկերները մեր հոգւոյ դատարկ,
հնացած, մաշուած, կտրատուած հագուստիցն հանե-
լով, մեր գլխին ցաւ, մեր սրտին մաշուցը են շինում:
Մենք անմահ ենք: Բոլոր բնութիւնն, բոլոր աշխար-
հըս իւր մէջն եղածներովն ու նորա հետ միասին
զարմանալի կերպով համաձայն և միակերպ վկայու-
թիւն տուող Աստուծոյ յայտնութիւնն, որ մենք ըն-
դունել ենք մեր Փրկչից, նոյնն են քարոզում մեզ,
թէ մենք անմահ ենք: Առանց այս հաւատին, որ հա-
ւատ ու հաւատալ եթէ ատենք, քիչ է, պատճառ որ
մեր հոգւոյ ամենաներքին ու ամենագեղեցիկ մի ըզ-
գացմունքն է, որ հոգւոյ օրէնքն է, առանց այս հա-
ւատին, ասում եմ, ոչ աստուածութիւնը աստուա-
ծութիւն կլինէր, ոչ աշխարհը՝ աշխարհ, ոչ բանա-
կանութիւնը՝ բանականութիւն. մեր մոտածելու բոլոր
կարողութիւնն ու մինչեւ անգամ մեր գոյութիւնն
խելքից մաքից դուրս, ոչ մի բանի չնմանող մի սխալ-
մունք կլինէր:

Աշխարհիս ամենահին ժամանակի մարդիկը քա-

զաքներ շինել՝ զէնք հնարել, կտաւ գործել դեռ ևս
չսորված, լաւ հասկացած էին իրանց բանականու-
թեան վկայութիւնովն, որ մի ամենակարող, գերա-
գոյն ու բարի էութիւն կայ. նոյնպէս լաւ իմացած
էին իրանց խելքի զօրութիւնովն, որ անմահ կեանք
կայ: Դարձեալ հազարաւոր տարիներ հազարաւոր տա-
րիների վերայ անց կկենան մեր երկրագունդի վերայ.
նորա մակերեսոյթներն (երկրիս երեսն) կփոխուին.
որտեղ որ այժմ անապատներ են, կարելի է, շատ
հեռու տեղերի վերայ թագաւորական իշխանութիւն
ու զօրութիւն բանեցնող քաղաքներ կծաղկին. իսկ
որ տեղ որ այժմ մահկանացու մարդոց ահագին շի-
նուածքներն են բարձրանում; այն տեղերը նոցա ա-
ւերակները հազիւ ցոյց կտան, որ շէնքեր են եղել
մի ժամանակ այդ տեղերը. բայց մարդիս կեանքի
գոյութեան անվերջանալի կերպով շարունակուելու
կողմանէ, յաւիտենական տեսողութիւն ունենալու
գիտակցութեան կողմանէ, որպէս և Աստուծոյ գո-
յութեան մասին մարդոց ունեցած գիտութեան կող-
մանէ՝ այնչափ քիչ փոփոխութիւն կլինի, ինչպէս որ
քնութեան որ և իցէ օրէնքները չեն փոխվում: այն
օրէնքներն եմ ասում, որով բոլոր աշխարհս իւր գո-
յութիւնն ունի ու շարունակվում է անխոտոր կեր-
պով. Եթէ երբ և իցէ՝ եղել են, կամ թէ այժմն ևս
կան այնպիսի մարդիկ, որ կասկածել են, կամ կաս-
կածում են, կամ թէ՝ ուրացել են բոլորովին և ու-
րանում են որ մարդիս հոգին անմահ է, բայց խըզ-
մըտանքը միշտ և հանապազ ընդդէմ է եղել նոցա
խելքիցը գուրս եկած այդպիսի ունայն ու անհիմն

վճռին, որ մոլորվելով, արել են իրանց համար:

Մեր՝ միայն երկրաւոր կեանք ունենալու համար
աշխարհ եկած ըլինելը, այլ մեր մահից յետոյ ևս
մեր կեանքի շարունակուելը ու յաւիտենական տես-
ղութիւն ունենալը մի քանի իմաստուններ փորձ են
փորձել դատողութիւններով ու աւելի քան հաւա-
նական խօսքերով ապացուցանելու (իսպաթ անելու)
այնպիսի ճշգութեամբ, ինչպէս որ մաթեմաթիկական
խնդիրներն կարելի է ապացուցանել: Բայց անմահու-
թիւնն ապացուցանելու բան (գաղափար) չէ, այլ մեր
բանական էութեան ամենաներքին կողմի երեան
գալն, բացայայտուիլն է. այս բանը, կամ գաղափա-
րը, որ ունինք մենք, չենք կարող գիտնական (գի-
տութեան) ճանապարհով քննել ու իմանալ, ինչպէս
որ չենք կարող ամենայն կեանքի ու կենդանութեան
սկզբնական աղբեկուրը քննել:

Բայց մարդիս համար — իսկը որ մոտիկ տալու լինս
— իւր կեանքը յաւիտենական տեսողութիւն ունենալու
ապացուցներն ու հիմնունքը գտնելն աւելի հարկաւոր
ևս չէ նորա համար, որ առանց այն ևս աւելորդ է,
քանի որ մեր գիտակցութիւնն իբրև մեր ներքին, մեր
հոգւոյ կարիքն է ճանաչում. այլ մեզ հարկաւորն և
ցանկալին իմանալու այն է, որ թէ մեր կեանքի այս
տեսողութիւնն ինչ կերպով պիտի լինի, ինչ վիճակ
պիտի ունենայ մեր հոգին՝ մեր մարմնից բաժանուե-
լուց յետոյ. մեր հոգւոյ այս վիճակը որպիսի պիտի
լինի ու ինչ յարաբերութիւն պիտի ունենայ այն վի-
ճակին հետ, որ մենք յաւիտենակութիւն ենք ասում:

Մոհկանացու մարդո՝ իւր անխորհուրդ (անմիտ)

Հետաքրքրութիւնովն շատ է ետևից ընկնում որ և իցէ կերպով իմանալ, հասկանալ այն գաղտնիքը (մեզանից ծածկուած, մեր խելքը չհասնելու բանն՝) թէ ինչ վիճակի մէջ պիտի լինի մեր հոգին այն կեանքումն, ուր կդնայ և ինչ կլինի մեր մեռնելուց յետոյ, և արդէն շատ տեսակ անհիմն բաներ գլխից հնարած է, մի օր կամ մի ժամանակ մեր ունենալու ապագայ կեանքի մասին։ Բայց երբէք պիտի ըլմուանանք, որ մենք՝ իբրև մարդիկ՝ բոլոր աշխարհս ու նորա մէջ եղածները՝ մեր շատ սահմանափակ՝ ամենեին հեռուները չգնացող, շատ սակաւ բան իմացող հինգ զգացմունքներովն ենք ճանաչում, կամ հասկանում, այն մեր հինգ զգացմունքներովը, որով մենք աշխարհիս արարածների գեռ ևս մի ստոր աստիճանումն ենք գտնվում։ և ինչ որ մեր հոգին իւր բոլորովին նոր յարաբերութիւնների մէջը պիտի տեսնի կամ իմանայ, այդ մասին անկարելի է, որ մենք մի գաղափար ունենալ ու մեզ երեակայել կարողանանք։ ինչի որ դորա համար ինչ որ պէտք է ունենանք մենք, այն չունինք բոլորովին։ Ի՞նչպէս կարող է մի խուլ ու համր մարդ գատողութիւն անել մի երաժշտութեան, մի ներգաշնակ երգի վերայ։ Կարո՞ղ է մի երեխայ, կամ մի բոլորովին տգէտ մարդ՝ մի քիչ գոնէ՝ մի վերի վերոյ կերպով ըմբռնել (հասկանալ) մի աշխարհահոչակ իմաստունի հարուստ գաղափարները։ Ինչ որ յաւիտենական կեանքին է վերաբերում, այդ հասկանալու կողմանէ մենք ամենքս ևս անչափահաս ենք, քանի որ այս աշխարհիս վերայ ենք։

Անմարմին հոգի պիտի լինինք ու յաւիտենական կեանքի մէջն ինքներս շրջենք, որ կարողանանք ուղիղ գաղափարներ ունենալ թէ՝ այն կեանքումն ինչ դըրութեան են փոխվում ու ինչ չոկ վիճակի մէջ են լինում։ քանի որ այս կեանքումն ենք, բաւական է մեզ այնչափ և այն իմանալ, ինչ որ մարդոց մէջ ամենից աստուածայինն Քրիստոս մեզ սորվեցրեց։ Մահուան մասին Փրկիչն ասաց թէ՝ Հօրը Տօռը Գնալ է։

Արդէն բաւական է, որ ճանաչենք թէ՝ Աստուածամենակարող է և ամենազօր սէր ունի մեր վերայ, ու կզգանք, որ գորանով բոլորովին հանգստանում է մեր սիրոլ մեր ունենալու ապագայ վիճակի մասին այն կեանքումը։ բայց ոչ այսչափ միայն, այլ և անպատմելի ուրախութիւն կզգանք մեր սրտումը, երբոր կմտածենք մեր ապագայ վիճակի վերայ այն կեանքումը։ Պատճառ որ՝ Աստուծոյ ամենազօր սէրը մեզ միշտ յայտնվում է գեռ մեր այս աշխարհումն ապրած միջոցին, ինչպէս որ մեր կեանքումն ամեն ժամանակ տեսնվում է։ մի՞թէ այդ սէրը պիտի կտրուէր մեզանից, պիտի գաղարէր, երբոր մեր մարմնի մէջ դադարում է շունչը, դադարում է մեր արիւնը ման գալուց։ ոչ, մեր մարմինն անշնչանալուց և մեր արիւնը սառելուց յետոյ ևս Աստուծոյ ամենազօր սէրը մեզանից չէ հեռանում, մեր վերայ լինելուց չէ դադարում։ ինչի որ Աստուծոյ ամենակարողի ամենազօր սէր չի լինիլ, եթէ որ քիչ բոպէներից յետոյ իւր արարածից կտրուի, վերանայ, վերջանայ։ Աստուած, որին ես ստիպվում եմ ճանաչել մի անսահման կերպով կատարեալ էութիւն, և որոյ վերայ զարմանում

Եմ ու հիանում, նոյն ճանաչելով նորան իւր ըոլոր
արարածների մէջ՝ թէ՝ ամենամեծ և թէ ամենափոքր
իւր գործերումն ու ստեղծածներումն, նոյն Աստ-
ուածս ես ճանաչում եմ՝ իմ հաստատուն ու աներկ-
միտ հաւատովս՝ իմ յաւիտենական, սիրող, խնամող,
երջանկացնող Հայրս, ինչպէս ինքն յաւիտենական է,
ես ևս նորա սիրելի ստեղծուածն եմ:

Ի՞նչ կոզման համար նա ինձ մի օր կկոչի և ես
այն ժամանակ ինչ կլինիմ ու ինձ ինչպէս կլինի -
այդ ես զգիտեմ: Բայց ինչպէս որ ես Աստուծոյ ամե-
նազօր մեծ վայելչութիւնն արդէն այս աշխարհիս
վերայ եղած ժամանակս նկատում եմ ու հասկանում:
այնպէս և ներկայից ապագան ենք իմանում: Տիե-
զերքի մէջ Աստուծոյ կատարելութեան լրութիւնը՝
ինչպէս հայելիի մէջ՝ պարզ երևումէ: Ժամանակա-
ւորի մէջ կան արդէն յաւիտենականի նշաններն: Ո՛ր-
քան որ բոլոր աշխարհիս Հօր ստեղծածները քըն-
նում ենք, ինչպէս որ երևում են մեզ մեր մահուա-
նից առաջ, այնչափ աւելի նշանակներ են մեր
առաջը գալի յաւիտենական կեանքի մասին:

Ով որ այս աշխարհս, այս ծայր ու ճոխ չունեցող աշխարհս ճանաչում է, կամ նորա մասին տեղող պեկութիւն ունի, նա այս աշխարհիցս բաժանուելուց, զեռանալուց չի վախենալ այս աշխարհիցս, որ անհեռանալուց մէջ այնչափ ամենածայր, անսահման տիեզերքի մէջ այնչափ ամենափոքրիկ բան է, ինչպէս որ արեւ ժամանակ երևեցած փոքրիկ բան է, ինչպէս որ արեւ ժամանակ երևեցած շամանդաղը (փոշիի մի հատիկը): Աստուծոյ մեծուշամանդաղը (փոշիի մի հատիկը): Աստուծոյ մեծուշամանդաղը (փոշիի մի հատիկը):

ապրում ենք՝ ամենայն փառքի ու մեծ վայելչութեան
կեղրոնն է համարում որոյ չորս կողմն են պատում
տիեզերքի ամեն աշխարհներն ու արեգակներն։ Բայց
շատ սրամիտ ու խոր մտածող քննիչներն գտել են,
որ մեր այժմեան բնակութեան տեղն՝ երկնքի տա-
րածութեան մէջ շատ փոքրիկ աստղերի բռնած տե-
ղերից մինն է։ որ աիեզերքի մէջ գտնուած մարմին-
ների մէջ այնպիսիները կան, որ իւրեանց մեծու-
թիւնովն ու լուսովն՝ երկրիցս բոլորովին անհամե-
մատ կերպով գերազանց են, որ մենք երկրին հետ
հզօր թագուհի արեգակի չորս կողմը պտտող երկնա-
յին զարդերի զօրութիւնների մէջը նորա մոլորակ-
ների մինն ենք միայն։

Ով որ բալոր աշխարհիս վերայ տեղեկութիւն
ունի, հասկանում է և գիտէ, որ այս անսահման
տիեզերքի մէջ ամենայն բան յաւիտենական տևո-
ղութիւն ունի, ամենայն բան տեսակ տեսակ ուժե-
րի, կամ զօրութիւնների անծայր, անլերջ մի թա-
գաւորութիւն է միայն։ Այս ուժերը միշտ կան, բայց
նորանց երեսումներն են փոխվում միայն։ Այսպէս՝
և մարդիս հոգին ևս մի զօրութիւն է։ Նորա առաջ
բերած բաները կամ նորա արածները, նորա մոռքե-
քը, նորա ցանկութիւնները, նորա վերայ երեւցած,
տեսնուած բաներն անցաւոր են. անց կկենան, կը-
գնան՝ բայց ինքն՝ իւր ասած խօսքերովն՝ կմնայ:
Լոյսն, որ իրանից ճառագայթներ է արձակում, դո-
քանով չէ նուազում։

Ստեղծուած բաների մէջ մի ուրիշ օրէնք ևս
ձանաչում ես թէ, ամեն բան էր նման բաներն էջն

Դարձեաւ լո-ծվ-մ. ջուրը մէգ ու ամպեր է դրկում դէպի երկինքը, ուր դարձեալ ցած են գալի, թափ-վում երկրիս վերայ նոյն մէգն ու ամպերն՝ իբրև ցօղ ու անձրև։ Կենդանին, մարդիս մարմինը, հողի-ցըն յառաջ եկած լինելով ու երկրի հիւթերով սնուած (կերակրուած), իւր ժամանակին դարձեալ հողն են իշնում ու հողի մէջ լուծվում։

Ինչպէս որ գիտակցութիւն չունեցող հիւթերը, տեսակ տեսակ միաւորութիւնների մէջ լինելուց յետոյ՝ կրկին վերադառնում են իրանց առաջին ու սկզբնական գերդաստանին, դարձեալ այն նիւթերը դառնալով, ինչ նիւթեր որ էին առաջ. այս ևս գիտակցութիւն ունեցող, բանական էակները (արարածները) Աստուած ճանաչող, Աստուած մտածող հոգիները դարձեալ յետ են դառնում հոգիների այն գերդաստանին, որոնց դասակարգին որ պատկանում են։ Աստուծոյ ընդհանուր և իշխող պատուիրանին համեմատ, մարդիս մարմինը, մեռնելով, հող է դառնում, բայց իմ հոգիս վերև է թռչում, գնում իրան յատուկ, իւր բնութեանը համեմատ հայրենիքն։ Բնութեան մէջ տարածուած այն ընդհանուր օրէնքը յաւիտենական կեանքի նշմարանք ու ակնարկութիւն չէ արդեօք մեզ համար որ զգանք ու հասկանանք։ Արդեօք լաւ եմ հասկացել։

Արդեօք Քո ասածդ լաւ եմ հասկացել։ ով Փըրկիչ, իմ աստուածային լուսաւորիչ։ այո՛ լաւ եմ հասկացել։ Երբ Դու Քո աչքիդ առաջ եղած մահուանդ համար աշակերտներիդ միտքը պատրաստում էիր, որ նորանց սրտին ծանր չգայ Քո իրան-

Ցից բաժանուիլն, ասացիր. «Ենէ դու-+ ինչ ուրէի+, ու ասացի յեղ նէ, և Հօրս Տօր էմ գնում։ որովհետեւ Հայր Նեժ է, +ան նէ էն»։

Ա-ին, երբոր ինձ ևս խաղաղութեան հրեշտակն մի օր հողի մէջ հանգստանալու տանի, լաց մի լինիք, իմ հոգուս կտորնե՞ր, որովհետեւ ես ևս այն ժամանակ իմ Հօրս, իմ երկնաւոր Հօրս մօտը կգնամ։ Արտասուք մի թափէք իմ անմահ հոգուս հնացած, բոլորովին մաշուած հագուստիս վերայ, որ իմ վրաս էր, որ ինձ ծածկում էր, որովհետեւ ես ևս այն ժամանակը իմ՝ իսկական, յատուկ հայրենիքս, իմ առաջուան գերդաստանիս, երանելի հոգիների գեղեցիկ աշխարհն յետ գնալու կլինիմ ու կվերադառնամ։ Լաց մի լինիք. զուր և անարդար տեղն լաց կլինիք, ինչի որ անիրաւացի կլինի այդ ժամանակն ձեր արտասուք թափելը, ինչպէս որ ես ևս զուր տեղ, հոգուս մեղք արի ու սիրտս ցաւելով ու չդիմանալով, լաց եղայ ինձանից յառաջ վախճանուողների վերայ։ Ինչի որ իմ աչքս այն տեղի վերայ էր մնացել. իմ սիրտս այնտեղ էր. իմ կեանքիս ամենաթանկագին բանն այնտեղ է. այնտեղ է այն ամեն բանն, ինչից որ իմ երկնաւոր Հայրս իմ սիրտս այնպէս է կապել, որ երբէք պոկ չի գալ։ Այնտեղ մեր հայրենիքն է, այնտեղ մեր իսկական ու ճշմարիտ կեանքն է, երանի ինձ, որ գիտեմ թէ՝ մահ ասած բանդ չկայ, այլ Հօրը Տօրը էր միայն։



Պ.

ՎԵՐՋԻՆ ԿԱՄՔ.

Երանի, շատերն ունեոր ու անուանի մարդկանցից արժանի անեին իրանց այն ազնիւ, այն միշտ յիշուելու՝ զգացումն ու մտածողութիւնն ունենալու, որ բարձր լինէին անգէտ, անհասկացող ու միայն բնական, կենդանական սէր ունեցող մարդկանցից. միայն իրանց տան ու զաւակների վերայ չը-մտածէին մինչև անգամ այս աշխարհից հեռանալու րոպէին՝ միայն իրանց տան մեծի ու փոքրի լաւ ու առատ ապրելու մասին հոգս չը քաշէին, ինչ է թէ՝ իրանց մահուանից յետոյ ևս՝ իրանցից յետոյ մնացողներն ու ապրողներն աշխարհիա ամենայն վայելլութիւնները տեսնեն. Երանի, հազար երանի՝ թէ հարուստ ու բարձր մարդիկ իրանք իբրև բարոյական պարտքեր ունեցող մարդկութեան արժանաւոր անդամներ՝ միայն մի տան, մի ընտանիքի հայր ճանաչելը շատ քիչ համարէին, իրանց հոգւովն ևս հարուստ ու բարձր տեսնելով իրանց, և՝ շատ տուն, շատ զաւակներ բազգաւորեցնող հայր լինէին, իբրև արժանաւոր անդամներ իրանց ազգի, որոնք ոչ միայն մի նեղ հայեայցք ունին՝ միայն մի տան վերայ սահմանափակուած ու կենդրոնացած՝ իբրև բնազեցութեան մի շատ հասարակ հետևանք, այլ իրանց լայն հայեացքն իրանց տան նեղ շրջանից գուրս գար, հեռուները տեսներ և հայրական պարտականութեան հետ միասին լաւ ճանաչեին ու գնահատէին իրանց բարձր ու սուրբ բարոյական պարտաւորութիւնը՝

շատերի հայր լինելու, շատերի բարերարը լինելու և անմոռանալի և անմահ անուն թողնէին այս աշխարհումն իրանց մահհուանից յետոյ։ Աստուծոյ բարեկամների հետ անտէր անտիրականներին տէր գառնային. այն զգացումի և մտքի տէրը լինէին, որ ոչ միայն իրանց ողջ եղած ժամանակն, այլ և իրանց հոգին Աստուծոյ ձեռքն աւանդելու րոպէին ու իրանց աչքն այս աշխարհիցը փակելուց շատ յետոյ էլ տխուրներին ուրախացնող, անտէրներին ու անբազզներին տէրն ու բաղդաւորեցնողը լինէին. Այնտեղ՝ երկնային աշխարհումն՝ մեր իսկական ու յաւիտենական հայրենիքումը նոցա բանական հոգին կը ճաշակէր քաղցրութիւնն իրանց բարի գործերի, որով իրանց նման մարդոց, իրանց եղբայրներ են ճանաչել ու նոցագուը վիճակը քաղցրացրել, թեթևացրել, փոխել, նոցա բաղդաւորեցրել են։

Մարմար քարերից աւելի գեղեցիկ, աւելի թանկագին մահարձան է մարդիս համար այն, որ նորա ոսկորները հանգիստ են մնում. ոչ մի յանդիմանութիւն, ոչ մի անարժան խօսք մեռածի ու նորա գերեզմանի մասին ոչ միայն չէ լսվում։ այլ և բոլոր իւրեանց սրտովն օրհնում են մարդիկ նորա յիշատակը մինչև անգամ այն ժամանակը, երբոր տեսնում են, որ պէտք է մեռնեն ու գերեզման մտնեն։

Այն օրերն, որ տեսնում ենք թէ՝ մեր առողջութիւնը, քանի գնում է՝ պակասում է, կամ ողորդ զգում ենք մեր վերայ այնպիսի մի հիւանդութիւն, որ յայտնի երեսում է թէ՝ մեր երկրաւոր կեանքին շուտով վերը պէտք է տայ. նոյնպէս ևս, երբոր տեսնում ենք թէ՝ արդէն հասակներս լաւ առել ենք, շատ ծերացել ենք. ու խելքներս լաւ հասնում է որ էլ երկար տարիներ ապրելու յոյս չկայ. — այսպիսի օրերն՝ Աստուծոյ, մեր բանականութեան, մեր հոգու

Հետ մեր մէջը մեզ հետ խօսելն է ու մեզ լաւ հասկացնելն թէ՝ ժամանակ է, որ պատրաստ պաշենք մեզ գերեզման մտնելու ու յաւիտենական կեանքի համար։ Դժբաղդաբար քիչ մահկանացու մարդ կը գտնես՝ մարդիս թեթևամտութիւնից՝ որ մահ միտքը բերի, կամ իւր մեռնելուն վերայ մտածի, քանի որ մտածելու ոյժ ու կարողութիւն ունի և գեռ յուսահատութիւն չէ եկել վերան ու տիրել կամ մարմնաւոր հիւանդութիւններն իրան շատ չեն յազթել։

Երբոր մարդս այդ իմ ասած դրութիւններին է հասնում, այն ժամանակ նա իւր մտաւոր աչքը դարձնում է լուրջ կերպով այն բանի վերայ, ինչ որ իւր առաջն է ու ինչ որ իրան պէտք է պատահի անպատճառ. այս՝ իւր աչքը դարձնելն իրան համար մութ ապագայի վերայ, որ չէ իմանում թէ՝ ինչ կը լինի իրան իւր մահուանից յետոյ, ինչ վիճակի մէջ կլինի՝ հարկադրում է նորան յետ դառնալու և իւր ունեցած ու անց կացրած կեանքը վերայ մի լաւ քննելու՝ սկզբից մինչև վերջը։ Մահուան դուռը հասած մարդն ինքն իրանից էլ ծածկել չէ կարող, որ այս կեանքում արդէն՝ ինքն իւր գործքովն՝ ինքն իւր համար իւր վիճակը ձգել ու իւր ձեռքովը հանել է թէ՝ որ յաւիտենական կեանքին է ինքն իրան արժանի արել։ Կրօնն ու յայտնութիւնն ասում են իրան այդ բանն. ու եթէ մինչեւ այդ իւր վերջին օրերին հասնելը կրօն ու յայտնութիւն չէ ուզեցել իմանալ թէ՝ ինչ են ու ինչ էին իրան սորվեցնելու, հասկացնելու. եթէ ուզում եմ ասել՝ այդ տեսակի ու աստիճանի

անբաղդ մարդոց կարգումն է եղել ու նոցա նման ապրել կրօնից ու յայտնութիւնից բոլորովին հեռու մնալով իւր ամբողջ կեանքումն, այն ժամանակն իւր խղճմտանքն է իրան ասում նոցա ասելու (սորվեցնելու) բաներն, որ մինչև ցայժմ ինձ բոլորովին կորցրել գրեթէ մեռցրել էիր. բայց այժմ՝ ուզես, չուզես, եկել է այն ժամն որ ինձ հետ միասին պէտք է զարթնեն քո կեանքիդ բոլոր գործերն։

Աշխարհիս երեսին մեր ունեցած կեանքի նպատակն այն պիտի լինի, որ մեր անմահ հոգին միշտ ազնուացնենք ու բարձրացնենք և այս կերպով՝ քանի գնանք՝ մեր աւելի և աւելի Աստուծոյ նման լինիլը յայտնի պիտի լինի մեր գործերից, որ մարդիկ բաղդաւորացնելու մէջն է։ Բոլոր աշխարհիս Դատաւորը կասի որ՝ «ինչ որ արել էք շատ փոքրներից մէկին, ինձ էք արել»։ — Նամ մեզ նման մարդոց ենք բաղդաւորել արդեօք Խորհրդով ու գործով. մեր սեպհական աշխատառւթիւնովն ու մեր անձնանուիրութիւնովը, մեր հեզութիւնովը, խաղաղասիրութիւնովը, միայն բարին կամեցող մեր սիրովը ու հասարակաց օգտին համար մեր ունեցած ազնիւ մտածողութիւնովն։ Եւ եթէ այս աշխարհիս վերայ ոչ ամենայն ժամանակ յաջողել է մեզ այս ու այն բարիքն անել, պէտք է մեր խղճմտանքին հարցնենք թէ՝ յիրաւի անկեղծ կամք ու մաքուր ցանկութիւն ունէի՞նք, ու մեր բարի միտքն ու ցանկութիւնը չկատարեցաւ։ Արդեօք ամենայն ճանապարհներն էլ փորձեցի՞նք, ամեն կերպով աշխատեցի՞նք, ինչպէս որ պէտք էր անէինք, եթէ մեր միտքն ու ցանկութիւնն սրտանց ուզում

էինք կատարուի և ոչ թէ մարդոց աչքին հող վիշենք
միայն ու արժանաւոր մարդիկ ճանաչուենք, առանց
արժանաւոր գործ կատարելու էլ:

Եթէ այդ չենք արել յետոյ զզջալը, ցաւելը
զուր է. անցեալը յետ չի դառնալ: Այս ժամանակ
մեր կեանքի մնացած այն բոպէներն, որ մեր աչքի
առաջն ունինք դեռ ևս ու որոնք չենք ունենալ շատ
շուտով, այդ ժամանակն ասում եմ: Կմնայ մեզ մը-
տածել թէ՝ մեր կեանքի կարձատե բոպէների մէջը
գոնէ ինչ բարի բան կայ, որ կարող էինք անել: Եթէ
մենք մեր ամբողջ կեանքը մարդավայել կերպով չանց-
կացրինք, ինչ անէինք արգեօք, որ կարողանայինք
շատ արժանաւոր կերպով գոնէ վերջացնել:

Մեծ ու հեշտ գլուխ չգալու ձեռնարկութիւն-
ների համար, կամ մեր մտքումը վազուց ունեցած
մի օգտակար ցտնկութիւն կատարելու համար, էլ ոչ
ոյժ ունինք, ոչ էլ ժամանակ: անց են կացել արդէն
մեր կեանքի երկար տարիներն, մնացել են մեզ քիչ
բոպէներն: Զգուշացնող ձայնը մեզ ասում է՝ տանդ
կարգադրութիւնն արա: Կարելի է որ հիւանդն շատ
սակաւ բոպէներ ունի: քանի որ դեռ ուշ չէ իւր
վերջին կամքը յայտնելու, պէտքէ կարգադրութիւն
անի իւր երկրաւոր բարիքի մասին, որ իւր մահուա-
նից յետոյ յայտնի լինի թէ ինչպէս պէտքէ գոր-
ծադրուի իւր ունեցածն, որ իրանից յետոյ թող-
նում է:

Աւշջէ՞ն կամ:—Այդ խօսքը միայն իսկոյն հաս-
կացնում է մեզ թէ՝ ինչ որ անելու ենք, հասարակ
բան չէ: Մի գուցէ մեր այս վշջն կամքով էլ մեր անց-

կացրած օրերի անխոչեմութեան ու կրքոտութեան
նման մի բան լինի: Մի թէ չենք ուզենալ, որ մեր
վերջին կամքը գոնէ շատ բարերար ու շատ գեղե-
ցիկ կամք լինի:— Այս աշխարհքից ոչինչ հետմերս
տանելու չենք, տկլոր եկել ենք, տկլոր էլ պէտք է
դուրս գանք, գնանք: Մեր ունեցածի վերայ պէտք է
կարգադրութիւն անենք. — լաւ մտածենք թէ՝ ինչ որ
մինչեւ ցայժմ գործ ենք ածել միայն մեր անձի հան-
գըստութեան, դիւրութեան, վայելցութեան և ունայ-
նասիրութեան վերայ, իմաստութիւնն, խոնարհու-
թիւնն ու մարդասիրութիւնը մէկ կողմը թողնելով
մի թէ վերջն էլ միանգամ մեր ունեցածի հետ ազ-
նիւ սրտով պիտի չըվարուենք:

Քրիստոնէի վշջն կամքի մշջն էլ պէտք էր և նորա-
ժարդասիրութիւնն ու առարտաժութիւնն: Այս էլ լաւ
պիտի գիտենայ, որ այն է միայն ուրիշներին տա-
լի, ինչ որ ինքը ունենալ կարող չէ: Ուրեմն թող
ցանի օրհնութիւն բերող ողորմածութեան տուրքեր
այն աշխարհի վերայ, որ պիտի թողնի. ուրախու-
թեամբ թող ցանի այդ բարի ու առատ պտուղներ
բերող սերմը ու այն մտքով, որ ուրիշ մարդոց իսկա-
պէս բաղդաւորեցնի: «Ո՛վ որ ճշտելով կըսերմանի»:
ասում է սուրբ գիրքը, «ճշտելով էլ կըհնձի». իսկ ով
որ ուրիշներին օրհնութիւն բերելու, բարիք անելու
մտքով կըսերմանի, օրհնութիւն ու բարիք էլ կհնձի:
Ամեն մի մարդ իւր ազատ կամքով, ոչ թէ ակամայ
կամ ստիպուած անի, որովհետեւ ուրախ սրտով
տուրդին է սիրում Աստուած:

Այսպէս մի ազնիւ սովորութիւն են ունեցել մեր

նախնիքն, որ իրանց կտակների մէջը նշանաւոր գումարներ են բաժին հանել եկեղեցիների, վարժատունների, աղքատանոցների և ուրիշ բարեգործական հաստատութիւններին,—Աստուծոյ իրանց պարգևած կարողութեանը համեմատ։ Շատ ու շատ աստուածահաճոյ շինուածքներ մինչև մեր օրերն անգամ ապահովուած վիճակի մէջ կան ու շարունակում են իրանց գոյութիւնը՝ օրհնութիւն ու բարիք բերելով անթիւ մարդոց, որ այլ և այլ ժամանակների մէջ այդ օրհնութիւնն ու բարիքը փայելում են։ Այն մեր ազնուահոգի պապերը դեռ ևս շարունակում են ապրել մեր մէջը, նորանք չեն մեռած, դեռ ևս ապրում են ու հասարակաց համար դեռ իրանց բարեգործութիւնն անում։

Բայց մեր օրերումը այդպիսի կտակներ ու ապահովուած աստուածահաճոյ շինութիւններ տեղ տեղ պակասել են։ Պատճառը փողի պակասութիւնը չէ, ինչու որ լաւ ուտելու, խմելու համար, ճաշեր տալու համար, տներ շինելու և գեղեցիկ կարասիներով զարդարելու համար, թանկագին հագուստների համար միշտ ու ամեն տեղ փող կայ։ Մեր օրերումը նոյնչափ ու աւելի հարստութիւն կայ, քան թէ առաջուան տարիներում։ Ու տեղ էլ չկայ, որ բարեգործութեան և աստուածահաճոյ հաստատութեան պէտքը չունենայ։ Ինչու որ առաջուան կտակներով աղքատանոցներն ու հիւանդանոցները ըստ մեծի մասին բաւական ապահովուած են արդէն։ բայց իսկ այդ տեղերումը, ուր որ այդպիսի հաստատութիւնները ապահով ու ծաղկած վիճակի մէջ են, դեռ ևս

ինչքան բան է պակաս, ինչքան բան է մնում անելու։ Պէտք է ասեմ, որ այդ պակաս բաները, եթէ լրացնողները չկան, ոչ թէ փողատէր մարդիկն են պակաս, ոչ թէ էլ բարեգործութիւն անելու տեղը չկայ, այլ առաւելապէս քրիստոնէական ազնիւ ու առատ սիրտն ու գեղեցիկ կամքն է պակաս։

Տարակոյս չկայ, որ մեր վերջին կամքը գրով կտակով թողնելու ժամանակը միշտ ամենից առաջ մենք նորանց պէտք է մեր աչքի առաջն ունենանք, որ արենակցութեան կապով մեր սրտին աւելի մօտիկ են, Մեր պարտականութիւնն է մեր կնկան ու զաւակների, մեր սիրելի եղբայրների ու քոյրերի հոգուը քաշենք, որ նոքա մեզանից յետոյ նեղութիւնով չապրեն։ Աստուած մեզ կապել է անմիջապէս նոցահետը։ Մենք նոցա վերաբերութեամբ մեր արած կարգադրութեանը մէջ կրքի պէտք է չհետևենք ու կողմնապահչութիւն չանենք։ մենք աւելի սիրով նոցա վերայ պէտք է մոտածենք, որոնք աւելի կարօտ են մեզ ու մեր օգնութեանը, որ ապրել կարողանան։ Բողոքիչ անարդարութիւն կլինէր՝ նորանց բոլորովին զրոկել ապրուստից, ինչ է որ ուրիշներին ենք տալիս Բայց երբոր նոցա հոգսը քաշել ենք արդէն, այն ժամանակ քրիստոնէական պարտականութիւն է, մեղնման ուրիշ մարդոց վերայ էլ մոտածելու։

Ինչպէս որ մեր ամեն մարդասիրական գործերի մէջը, այնպէս էլ մեր վերջին կամքն ու կարգադրութիւնը կտակով թողնելու կողմանէ՝ բանը նորա վերայ չէ, որ մեծ գումար ենք արդեօք թողնում թէ փոքր։ Բանը այն չէ, որ մի մարդ ինչ է տալի կամ

ինչքան, այլ բանն այն է, թէ ինչպէս ու ինչ մտքով է տալիս, ինչ որ տալիս է. կտակի արժանաւորութիւնը այդտեղ է երևում: Ով որ հարուստ է, թող իբրև հարուստ մարդ տայ. ում ձեռքն որ պակաս է կամ այնչափ կարողութիւն չունի՝ իւր լուման տայ: Ով որ իւր անելու բարիքն իբրև առատ պտուղ բերող սերմ է ցանում, որ օրհնութիւն բերի, ու այն մտքով է անում, որ իւր վերջին կամքի մէջն էլ իւր աստուածահաճոյ կամքը ցոյց տայ, այդպիսի մարդը օրհնութիւն էլ կհնձի, ինչպէս որ ցանել է:

Աշ ոք չէ կարող ուրանալ, որ մեղանից յեռոց նող-
նելու բաների մէջը անպատճառ հանգամանենելը լսու կրտել
պիտի է ու ինելուն բան բանել։ Տալը, հենց լաւ մըտ-
քով տալը հեշտ բան է, մանաւանդ երբոր կտակում
է մարդ այն բանը ինչ որ առանց էն էլ իրան մը-
նալու չէ, պէտք է թողնի ու գնայ. բայց խելօքու-
թիւնով՝ ուզում եմ ասել, իմաստուն կարգադրու-
թիւն անելով տալը դժուար բան է։ Այս պատճա-
ռով մենք մեր ունեցած չունեցածի մասին մեր կար-
գադրութիւնը յարմար ժամանակին պէտք է անենք,
քանի որ գեռ ևս մեր խելքը տեղն է, մեր միտքը
առողջ է։ Շատ լաւ կլինի որ մարդո իւր առողջ
օրերումը այդ բանն արած վերջացրած լինի. քանի
որ մի յանկարծական մահ, կամ մի հիւանդութիւն
իւր տուած նեղութիւններովը մեզ արգելք եղած չէ։
Առաջուանից վճռելը մարդուս թէ՝ ինչ է իւր վեր-
ջին կամքը, այնպէս անել չէ նշանակում, որ շուտով
մեռնի, ուրեմն ինչու համար յետ ձգել իւր կտակը
ու փաղօք չանել։ Ինչ որ մենք կարգադրում ենք

այն մոռքով, որ մահկանացու մարդիկ ենք, այսօր
կանք՝ վաղը չկանք, այդ մեր արած կարգադրութիւ-
նը, քանի որ մենք ողջ ենք, միթէ խլում է մեր
ձեռքից իրաւունքը մեր կարգադրութիւնը փոխելու,
եթէ որ հարկաւոր համարենք: Ել ինչո՞ւ համար ենք
մի օգտակար գործ յետ ձգում օրէցօր, քանի որ
ոչ ոք չդիտէ, թէ ինչքան պէտք է ապրի: Եղել են
մարդիկ, որ մահուան միջոցին սաստիկ ափսոսացել
են՝ թէ ինչո՞ւ մինչեւ այն իրանց դժուար օրը՝ յետ
են ձգած եղել իրանց անելու կարգադրութիւնը.
սրտով ցանկացել են կտակ անելու, բայց ուշ է եղել,
ինչու որ իրանց ձեռքն էլ թուլացած է եղել, իս-
սելու էլ կարողութիւն չեն ունեցել որ իրանց վեր-
ջին կամքը յայտնե՞ն:

Յիսուս Քրիստոս մեր Փրկիչն մեզ պատուիրել է
ամենայն տեղ մեր օգնութիւնը հասցնենք, ուր որ
աւելի կարօտութիւն կայ: Նա ասում էր. «Ինչ որ
կանէք ձեր եղբայրներից ամենափոքրների մէկին, ինձ
արած կինիք»: Երես վերբերող, ըստ մեծի մասին
զուր տեղն ուրիշների վերայ բեռլ դարձող, ծոյլ ու
պարապ սարապ ման եկողների համար ամենալաւ
մտքով արած բարեգործութիւնը վատ գործ է դառ-
նում: Ինչքան ուզես, տուր այդպիսիներին. դոքա-
խրանց աղքատութիւնն իրանց համար վիճակ ար-
հեստ են համարում ու իրանց կրտտած հագուստը՝
միջոց, որ ապրուստ ճարեն: Դուք աւելի զգուշացէք
ու հոգս արեք, որ բարեպաշտ ու պատուաւոր ճար-
դիկն, որոնց բաղդի անիւր շուռ է եկել, իսկական
աղքատներ չդառնան ու վերջապէս ամեն ամօթ ու

պատկառանք մէկ կողմը չդնեն։ Կնկայ՝ ու երեխերքի տէր արժանաւոր մի մարդու, որ չարչարվում է շատ ու չէ կարողանում իւր ընտանիքը պահել տուր մի կտոր փող, որ նորանով կարողանայ իւր պարտերը տալ։ կամ իւր ձեռքի գործն յառաջ տանի ու աշխատանքն աւելացնի։ Ուրիշներին օգնեցէք որ իրանց աշխատութեան համար հարկաւոր նիւթն ունենան, կամ իրանց գործին համար հարկաւոր գործիքները (պարագայքը)։ Անտէր՝ անտիրական տղայոց ու աղջկանց օգնեցէք, որ մի օգտակար բան սորվեն ու ապագայումն իրանց հացը ճարել կարողանան։ Որքան գիպուածներ ունիք գուք՝ ձեր կարողութեան մեծ կամ փոքր մի մասովը ձեր մահուանից շատ յետոյ էլ մարդիկ բաղդաւորեցնելու։

Մի մոռանայք, որ ձեր կարողութեան մի նշանաւոր մասը ժողովրդի աղքատ գասակարգիցն էք աշխատել։ Նորանք են, որ ձեզ համար շինել են ամեն տեսակ շատ օգտակար բաներ։ Հարուստներ, այն շահերն, որով գումարներ էք շինել, նոցանից էք ստացել։ Նոյնպէս նոցա տուած տուրքերովն ու հարկերով տէրութեան, որ առանց նեղութեան չեն հասցրել վայելում էք գուք հասարակաց կարգ ու կանոնի օգուտներն։ Ուրեմն չունեռների համար ձեր արած կտակը մէկ կողմանէ յետ տալ է, այն տուրքերն են, որով նոքա ձեզ ծառայել են։

Սորանով ամեննեին չենք ուզում ասել, որ բարեգործական հաստատութիւնների համար արած կտակները շատ անգամ աւելի օգտակար չեն, քան թէ այս՝ այն ընտանիքի փողով օգնելն։ Ամեն մի հա-

սարակաօգուտ հաստատութիւն ընդհանուր հոգացողութիւն է կարօտեալների համար, ու մենք միշտ հանգիստ կարող ենք լինել սրտով, որ մեր տուրքը տեղը տուինք ու կորած չէ։ Յանկարծ մի լաւ բաժին տալը կտակով մի կարօտ ընտանիքի, որին լաւ չենք ճանաչում թէ՝ ինչ խելքին մտքի տէր է, երբեմն՝ մեր ամենալաւ նպատակին հակառակ՝ կարող է նորանց շռայլութեան տանել։ Փորձով տեսնուած են գժբաղդաբար բաւական այդպիսի օրինակներ։ Բայց ինչ փող որ մենք դուրս ենք գնում՝ կամ կտակում մի բարեգործական հաստատութեան, օրինակ՝ մի աղքատանոցի, հիւանդանոցի, որբանոցի, կամ ուսումնարանի համար, կամ ինչ որ կտակում ենք, որ օգնութիւն լինի այն հաստատութեան, որ հոգ է տանում տարիքներն առած մարդոց կամ կանանց համար, որոնք որ էլ աշխատել յեն կարող, կամ խուլ ու մունջերի ու կայր ծնածների ու միանգամայն չքաւոր դրութեան մէջ գտնուողների համար, այդպիսի տեղերի համար մեր կտակած կամ դուրս դրած փողը միշտ լաւ տեղեր ենք տուած լինում։ Մենք կարող ենք հանգիստ սրտով մեր աշքը փակել, աշխարհին համոզուած լինելով, որ մեր կտակը, կամ բաժին հանած փողը, ինչպէս էլ լինի, մեր մտքումը դրած նպատակիցը երբէք չէ կարող բոլորովին ծռուել։

Կան մարդիկ, որ Աստուծոյ ողորմութիւնովը մի նշանաւոր գումարի տէր են դարձել, բայց իրանց մահուանից յետոյ ուրիշներին բաղդաւորեցնելու ոչ թէ գիպուածներ չեն ունենում շատ անգամ, այլ քրիստոնէական դիտաւորութիւն չեն ունենում և

այդ հարկաւոր բանն է նոցա պակասում, որ չեն ու-
նենում վառ զգացմունք իրանց մարդկային պարտա-
ւորութեանց համար:

Ով որ իւր ցանածն, իւր բարեգործութիւնն ու-
րիշներին օրհնութիւն, բարիք բերելու համար է ցա-
նում, անում, օրհնութիւն էլ կհնձի, բարիք էլ կըս-
տանայ: Քրիստոնեան այն ժամանակ իւր կեանքի ըն-
թացքը աւելի ազնիւ կերպով կատարած կլինի, երբոր
իւր վերջին բոպէն մի գեղեցիկ գործով կազնուացնի,
որ Աստուծոյ առջևն արժէք ունի: Եթէ դու մինչև
ցայժմ քո անձնական օգտիդ ու քո վայելչութեանդ
համար ես արել, քո կեանքիդ վերջումը սկսիր ու-
րեմն նոյնպէս ուրիշների բաղդաւորութեան համար
էլ շունչ քաշել: Բարի բան անելը երբէք ուշ չէ,
բայց չար բան անելը միշտ շուտ է:


Թող ուրիշներն իրանց գերեզմանների վերայ
պղնձի ու մարմարի մահարձաններ շինեն ոսկի գրե-
րով: Անմիտները հող դառնալու համար ապրեցին.
թող իրանց ունայնասիրութեան տխուր յաղթանա-
կովը միխթարուին: Քիչ տարիներ անց կենալուց յե-
տոյ՝ ո՞վ պիտի մտիկ տայ բռած գերեզմանի վերայ,
որոյ տակը փտող ոսկորներ են: Այդ ոսկորներն էլ
հող են դառնալու: Աւելի լաւ է, որ դու շինես քեզ
յիշելու մի արձան հոգիների սահմանի մէջը, քեզա-
նից շնորհակալ սրտերի մէջը, քո երկնաւոր Հօրդ
հաճութեան մէջը: Վերջացուր քո կեանքդ աշխար-
հիս վերայ այնպիսի մի գործով, որ արժանի լինի
աւանդիր հոգիդ Աստուծոյ հայրական ձեռքը:

Բարերարութիւնը՝ մարդիս մահից յետոյ՝ պայ-
ծառացրել է մեր անունը մեզանից յետոյ աշխար-
հումս ապրող մարդոց մէջը, մի օրհնութիւն է մեր
զաւակների ու թուների համար: Ո՞վ գիտէ ինչ կարող
է նորանց պատահել մեր մեռնելուց շատ յետոյ: բայց
ապագայ սերունդի յիշելը մեր արած բարեգործու-
թիւնը՝ մեր վերջին շնչումն եղած ժամանակը՝ նոցա
համար պահապան հրեշտակ կլինի, որ միշտ հետներն է:

Ով որ ցանում է այն մտքով, որ ուրիշների հա-
մար օրհնութիւն բերող պտուղ տայ, ինքն էլ օրհ-
նութիւն կհնձի այս ու այն աշխարհումը: Այս, օրհ-
նութիւն կհնձի միւս աշխարհումն էլ այն սրբա-
վայրերումն, որոց համար ես այստեղ ապրում եմ
ու մեռնում, որոց համար Յիսուս ինձ նախապատ-
րաստեց իւր սուրբ յարութիւնովն ու քարոզած ու-
սումնովն, որոց ես նուիրեցի իմ ստեղծողիցս, ծնուե-
լուցս առաջ:

Բայց ի՞նչ եմ ցանել ես այս աշխարհի վերայ,
որ այնտեղ վերեւումը՝ լաւագոյն աշխարհների մէջը,
Աստուծոյ և ամենայն կատարեալ հոգիների մօտը
ուրախութեամբ հնձել կարողանամ: Ո՞ւր է, ո՞ր ըն-
տանիքներն եմ ես բաղդաւորացրել: Ո՞րն են այն
աչքերը, որոց արտասուրները սրբել եմ: Ո՞ւր են այն
բարեպաշտ, ամենայն ունայնասիրութիւնից հեռու,
ամենայն անձնական օգտիցը հեռու մարդիկը, որոց
արած գործերը այնչափ ծածուկ են կատարուել, որ
ոչ ոք չէ տեսել: Տէ՛ր, ես արժանի չեմ ամենայն
հաւատարմութեանդ ու գթութեան, որ Դու ինձ
ցոյց ես տուել:

Կցանկամ, կփափագեմ իմ երկնաւոր ճանապարհորդութիւնս) իբրև պանդուխտ և անցաւոր՝ չվերջացնեմ, մինչև որ առաջ գոնէ մի ողորմածութեան գործ կատարած լինիմ, որ իմ կեանքիս վերջին ժամն այն գիտակցութիւնովը զիտենալովս լըրանայ, թէ իմ կեանքս բոլորովին անօգուտ չէր: Եւ յիրաւի, ոչ ոքի չէ կարելի երանելի համարել մինչեւ որ նորա վախճանը չտեսնենք:



Այն ժամանակ կային ոմանք, որոնք պատմեցին Յիսուսին այն Գալիլիացիների մասին, որոնց արիւնը Պիղատոս իրանց զոհերի հետ խառնեց. Յիսուս պատասխան տուեց ու ասաց նոցա. կարծում էք, որ այն Գալիլիացիները բոլոր Գալիլիացիներից աւելի մեղաւոր էին, որ այսպիսի բաներ քաշեցին: Ասում եմ ձեզ՝ չէ. այլ եթէ որ չապաշխարէք, ամենքդ էլ նոյնպէս կորչէք. — Կամ կարծում էք դուք, որ այն տասնութը հօդին՝ որոնց վերայ Սելովայի միջի աշտարակն ընկաւու սպանեց, երուսաղէմում բոլոր հրէաներից աւելի՝ պարտաւոր էին. Զէ, ասում եմ ձեզ. այլ թէ որ չը լաւանաք (ուղիղ ճանապարհը չը գաք), ամենքդ էլ նոյնպէս կը կորչէք:



Առաջ Աւետարանի այս կտորի մէջ պատմվում են անբաղդութեան երկու յայտնի գիպուածներ, որով շատ մարդիկ յանկարծ կեանքից զրկուեցին: Այդ գժբաղդութիւնը ժամանակի սնոտիապաշտ մարդիկն Աստուծոյ պատիժ էին համարում: որ նոցա վերայ

Եկաւ իրանց մեծ մեղքերի համար. բայց Քրիստոս
ուղղում է նոցա այդ սխալ միտքը շատ վսեմ կեր-
պով։ Նա ցոյց է տալի՛ որ մահն ամենայն մահկա-
նացու մարդոց վիճակուած բաժինն է, և այդ մաս-
նաւոր դիպուածի մէջ ամենեին մասնաւոր պատիժ
չէ կարող լինելու և հասկացնում է, որ այդպիսի զար-
հուրելի պատահմունքը աւելի յորդոր և խրատ է
կենդանի մնացողների համար, որ արթուն մնան և
ապաշխարեն։ Եթէ որ գուք էլ չուղղուէք, ամենքդ
էլ նոյնպէս կկորչէք։ Կամենում է ասել թէ՝ ով որ
Աստուծոյ և առաքինութեան համար չէ ապրում,
նա մահից պէտք է սարսափի՛ ինչ կերպով էլ որ գա-
լու լինի վերան. բայց ով որ ամեն ժամանակ իրան
արթուն և պատրաստ է պահում Աստուծոյ առաջը
պատասխան տալու, նորա համար մահն անդամ սիր-
տը վախ քցող մի բան չէ։ Այս յորդորը արթուն
մնալու՝ մեզ համար միշտ պէտք է. մենք մեր կեան-
քի ամեն մի օրը պէտք է մտքներիցս անցկացնենք։
որ միշտ այս աշխարհիս վերայ մնալու չենք, որ այ-
սօր՝ կամ վաղը պիտի լսենք այն ձայնը թէ՝ «Տուր
քո տնտեսութեան հաշիւը»։ Սորա համար լաւ է
մահուան և յաւիտենական կեանքի վերայ շատ ան-
դամ մտածել և երկուսն էլ աչքի առաջ ունենալ.
այնպէս ընտելանալ թէ՝ մահուան և թէ՝ յաւիտենա-
կան կեանքի հետ և ընտանի դառնալ. որ մեզ միտ-
թարող բարեկամներ լինին երկուսն էլ մեր բոլոր
կեանքի մէջ։

Տարակոյս չկայ, որ ամենից քաղցր մահն այն է,
որ մարդս երկար, բարեպաշտ ու պատուաւոր կեանք

անցկացնելուց յետոյ՝ մեռնում է, երբոր կամաց կա-
մաց ուժից ընկնում է և կեանքի վերայ մի առան-
ձին սէր չէ մնում, միայն հոգին սաստիկ ցանկա-
նում է լաւագոյն կեանքին։ Այսպիսի կեանքը բոլո-
րովին նման է կամաց կամաց հանգչելու մօտենող
ճրագին, որ այնքան երկար վառվում է, մինչեւ որ
տակը ամենեին բան չէ մնում։

Երկար ապրելուց յետոյ՝ մի քաղցր քուն մտնե-
լու նման՝ հանգիստ մեռնելը աչքը փակելով աշխար-
հին՝ զաւակների և թոռների մէջը՝ ամեն մի մար-
դու սրտի յայտնի կամ ծածուկ բաղձանքն է։ Բայց
քիչ է պատահում, որ մեր այդպիսի ցանկութիւնը
կատարուի։ Քիչ է պատահում, ասում եմ, նորա
համար, որ քիչ մարդ կայ, որ իւր տղայութեան
օրերիցը իւր համար այնպիսի՝ մի կեանք պատրաստի,
որ թէ՝ առողջ և թէ երկար ապրի։ Նատ ու շատ
մարդիկ՝ իրանց մատաղ հասակումը՝ Աստուծոյ պար-
գևած կենսական ուժի կողմանէ վատ տնտեսութիւն
են անում։ Անխնայ գործ ածելով իրանց ուժը՝ փը-
շացնում են կամ չափից գուրս աշխատութիւնով կամ
անառակ կեանք վարելով, անզգուշութիւն անելով
իրանց առողջութիւնը պահպանելու կողմանէ, կամ
իրանց կրքերին ծառայ գառնալով, որոնց անձնա-
տուր են լինում բոլորովին։ Ոչ մի բան այնպէս շու-
տով չէ մաշում մարդուս կեանքը և այնպէս սաստիկ
չէ պակսեցնում ինչպէս որ մեզսական կրքերը՝ որ-
պէս և զայրացկոտութիւնը, ատելութիւնը, նախանձը,
կենդանական ցանկութիւնը։ Սորա հակառակը պէտք
է ասենք, որ ոչ մի բան այնպէս չէ օգնում և չէ

յաջողեցնում ապահով կերպով խորին ծերութեան համեմելու, ինչպէս չափաւորութիւնն ամեն բանի մէջ, ու միանգամայն մարդուս ուրախ և անվրդով բնութիւնը բազգաւորութեան մէջ, որպէս և անդրդուելի հաւատը Աստուծոյ վերայ:

Խելքից դուրս բան է ու բոլորովին սիսալ միտք, երբոր մի մարդ՝ մի հիւանդութիւն ունեցած ժամանակը վախենում է ու կարծում, որ ահա մահն եկել է, էլ չի ապրիլ թէւ ամեն մի հիւանդութիւն ունի երբեմն իւր շատ ծանր օրերը, բայց մենք էլի գիտենք, որ մարմնաւոր ցաւերը, որ տեսակն էլ լինին իրանց մի սահմանն ունին, որ այն կողմը չեն անցնիլ: Երբոր իրանց ամենաբարձր աստիճանին են հասնում: մարդուս այնպէս են անում, որ էլ բան չի զգում և իրանց ոյժը էլ այդ միջոցին կոտրվում է: Այն հիւանդութիւնը, որ մարդուս պէտք է մեռնի, չէ կարելի ասել, որ ամենամեծ ցաւեր է պատճառում: Ինչքան մարդիկ կան, որ շատ աւելի մեծ ցաւեր են քաշում, ձեռք կամ ոտք փշրելով, կամ ծանր վէրքեր ստանալով՝ և այս կամ այն անդամիցը զրկվում են, բայց ուրիշ ամեն կողմանէ բոլորովին առողջ են: Ինչքան էլ սաստիկ ցաւեր են քաշում՝ այդպիսի մարդիկն, այդ տեսակ անբազութիւնների իրանց պատահած միջոցին, սակայն շատ անգամ հերոսի նման քաջարտութեամբ տանում են, դիմանում, և ողորդ, զարմացնում են ուրիշներին: Քանի որ այս կեանքիս մէջն ենք, միշտ մեր աչքի առաջ ունենանք թէ՝ երբոր Աստուծոյ կամքն է, մարմնաւոր ցաւեր կքաշենք, ազատ չենք մնալ նոցանից: Մարդս այն-

պէս է ստեղծուած միանգամ, որ ոչ միայն ախորժ զգացմունքներ, այլ և ցաւեր պիտի ունենայ, և մեր այդ երկու տեսակ զգացմանց մէջը միշտ տեսնում ենք այն տնօրէնութիւնների մէկը, որոնց մասին պէտք է ասենք՝ անհասկանալի են մեզ համար և անքննելի, բայց որովհետև աստուածանից են գալիս, միշտ բարի՛ են: Մեր խելքը չէ հասնում, ինչի շատ անգամ կրակի նման այրող չարչարանքներ ենք քաշում թէ՝ մեր մարմնի և թէ արիւնի սաստիկ տաքութիւն պատահելուց, բայց անտրտունջ պէտք է քաշենք, տանենք, ինչպէս Քրիստոս մեր Փրկիչն խաչի սարսափինի չարչարանքն Աստուծոյ հերոսի նման քաշեց, տարաւ: Միայն թուլամորթ աշխարհի մարդը, միայն Աստուած արհամարհողը վրդովում է և ընդիմանում՝ փորձանքներ գլխին եկած ժամանակը: Քրիստոնեան ընդունում է խոնարհութեամբ իբրև ի վերուստէն եկած մի պատգամաւորութիւն իւր բարոյն ու փրկութեանը համար: Աստուած մեր ուժից աւելի ցաւ ոչ մէկիս չէ տալիս, բայց մարդս իւր ցաւն ու նեղութիւնը շատ անգամ ինքն է շատ աւելացնում իւր անհամբերութեամբը նեղանալովը, տըխրելովը վախկոտութեամբ ու թուլասրտութեամբ: Ամենագժռւար և անտանելի ցաւը ոչ թէ մարմնոյ ցաւն է, այլ հոգունը:

Այն մահը, որ մարդս իւր հիւանդութեան անկողնում հասկանում է որ իրան պիտի պատահի անպատճառ, յանկարծ մեռնելու հետ համեմատելով՝ իւր շատ լաւ կողմերն ունի: Մահն՝ որ միշտ մի բարերարութիւն է մեր ստեղծողի կողմից — և մեր երկ-

նաւոր Հայրը միայն գիտէ թէ՝ ո՞ր մահուամբ մեռ-
նելը աւելի լաւ է այս՝ կամ այն մարդու համար—
ուրեմն պէտք է ասենք, որ կամաց կամաց մահուան
մօտենալը պակաս ողորմութիւն չէ մեզ համար:

Որչափ ևս հօգացող ու կարգասէր լինի մի
քրիստոնեայ իւր գործերի մէջ, բայց և այնպէս իւր
ընտանիքիցը բոլորովին բաժանուելուցը առաջ գեռ
շատ բան կունենան կարգի դնելու, որ իրանից յե-
տոյ մութ և խառը գործեր չթողնի գժգոհութիւն-
ներ ու անհամութիւններ չպատահին, որով վնասուել
կարող է մասսամբ իւր սեփականութիւնը և մասսամբ
իւր բարի անունը: Ո՞վ կարող է ասել, որ ինքն իւր
տան գործերը ամեն օր այնպիսի կարգի մէջն է պա-
հում, որ առանց մի վնաս պատճառելու իւրայնոց,
Աստուծոյ այս աշխարհիցս իրան կանչելը, որ ժամին
էլ որ լինի, կարող է հանգիստ սրտով սկսել այն
երկար ճանապարհորդութիւնը գէպի յաւիտենական
կեանքը: Բայց ոչ ոք հանգիստ սրտով իւր աչքը չի
փակիլ աշխարհիս, եթէ որ առաջուանից հոգս քա-
շած չլինի իւր ընտանեաց համար. եթէ որ ամեն
մէկին խզմատանքով տուած չլինի, ինչ որ կհասնի
ու եթէ բանն այնպէս խելքով բռնած չլինի, որ իւր
մահից յետոյ գժուարութիւն, շփոթութիւն, վէճ
առաջ չգայ: Բանը նորա վերայ չէ, որ մենք մերայ-
նոց մեծ կարողութիւն ենք թողնում մեզանից յե-
տոյ—որովհետեւ ամեն մի մարդ գիտուած ունեցած
չի լինիլ կարողութեան տէր գառնալու.—բանն այն
է, որ մեռնողի անուանը զարդարանք լինի՝ իրանից
յետոյ էլ՝ իւր անխարդախութիւնն—և այդ՝ ուղիղ

ճանապարհով ձեռք բերած: Ինչքան որ կարող ենք՝
անխարդախ կերպով պիտի կատարենք մեր գործերը.
մեր մահից յետոյ Աստուծած ինքը կհոգայ մնացածի
մասին, ինչ որ մենք չենք կարողացել անել: Նա է
մեր ընտանիքի Հայրն. նորա մեր ընտանեաց Հայրը
լինելուն ապացոյցն այն է արգելն, որ նա մինչեւ մեր
մեռնելը մեզ ժամանակ է տալիս ինչ որ օտարինն է՝
յետ գարձնելու, կամ ինչ որ մերն է՝ այդ մեր ու-
նեցածի մասին կտակ անելու, որոյ մէջը մենք, եթէ
ձեռքներիցս գայ, ոչ միայն մեր մերձաւոր ազգական-
ներին, այլ և մեր տան հաւատարիմ սպասաւորնե-
րին էլ չպիտի մոռանանք. ոչ միայն մեր տան սպա-
սաւորներն այլ և հասարակաց հաստատութիւններն,
որ մարդոց բազմութեանը օգուտ են բերում, պէտք
է մեր մտքերիցը ըընկնեն: Մեր մահուան անկողնի
մէջ եղած ժամանակն էլ մեր գործովը պիտի ցոյց
տանք մեր մարդասէր ու հայրենասէր լինելը:

Կամաց կամաց մահուան մօտենալը կամ յան-
կարծ չմեռնելը՝ Աստուծոյ գեղեցիկ բարերարութեան
մէկն է, որ մենք ժամանակ ենք ունենում մեր բա-
րեկամներին, մեր մահուան համար պատրաստելու:
Նորա այնպէս չեն սարսափիլ ու չեն կորցնիլ իրանց,
ինչպէս որ կլինէին, երբոր մենք յանկարծ խուելինք
նոցանից: Թէև նոցա ցաւը գարձեալ մեծ կլինի, բայց
մարդս աւելի քաջութեամբ է տանում այն, ինչ որ
առաջուանից տեսնում էր, որ պէտք է լինի, և այդ
ժամանակ միսիթարութեան խօսքերը աւելի շուտով
ու հեշտութեամբ են մտնում մեր ականջը և ներ-
գործում մեր սրտի վերայ:— Ի՞նչպէս գեղեցիկ կեր-

պով պատրաստեց Յիսուս իւր սիրելիներին, երբոր անխուսափելի մահուան առաջն էր գնում։ Ի՞նչպէս մարդու տիրտը վսեմ զգացմունքով բարձրացնող օրինակ է, որ նա իրանից յետոյ մեզ համար թողեց։

Պէտք է նոյնպէս ասենք, որ մարդս այլ և այլ բաներ ունի իւր մտքումը, որ կցանկանար անել։ Աստուած չէ թողնում, որ յանկարծ մահը նորան տանի ու իւր սրտի բարի խորհուրդները անկատար մընան։ Մարդս ժամանակ է ստանում բաւական բարի գործեր կատարելու, և իւր երկրաւոր կեանքը վերջացնելու, այնպիսի մի գեղեցիկ գործով, որ իւր կեանքի թագն ու պսակը լինի։ Մարդս իւր հոգին ուրախութեամբ կաւանդի, երբոր մտածում է, որ իւր կեանքի վերջին րոպէներումն էլ՝ իրբեւ քրիստոնէական գործ կատարեց։

Եթէ որ այնչափ հարուստ էլ չկինինք, որ մեր հիւանդութեան անկողնումը ողորմութիւններ տանք մեր մեռնող ձեռքովը—անպատճառ պէտք է հարուստ լինինք մի բարի բան անելու կողմանէ։ Միթէ միայն մի խելօք խօսքը շատ անգամ աւելի միշտարական, աւելի օգտակար, աւելի միտք բացանող և շատ բանի մէջ օգնող չէ, քան թէ մի մեծ ժառանգութիւն, որ մարդիկը թողնում են իրանցից յետոյ, այն էլ այն խօսքն, որ գուրս է գալիս մի մեռնողի բերանից իւր մահուան անկողնումը, երբոր շրմանքները արգէն գունատուել են, դողդողում են ու սառչելու վերայ են։ Այո՛, մահուան անկողինը ատենաբանութեան մի ամբիոն է, որիցը ոչ մի հառաջանք, ոչ մի նայուածք ու շարժուածք զուր տեղը չեն լինում։

Հոգեվարք հայրը, որ իւր զաւակներին վերջին օրհնութիւնն է տալիս, պատկառանքով, հաւատով ու սիրով է ունկնդրութիւն գտնում։ Նա կեանքի շէմքումը, յաւիտենականութեան բաց գոների առաջ մի ուրիշ մարդ գարձած է երեւում։ Հոգին աւանդողի բերանումը միայն ճշմարտութիւն է։ Այսպէս մայր մոնող արեգակը մեր աչքից ծածկուելուց առաջ, մէկ էլ իւր գեղեցիկ ճառագայթները փառաւոր կերպով ձգում է ամենայն կանաչ գաշտերի վերայ, որ օրուան իւր ընթացքումը լուսաւորել էր ու տաքացրել։ Այն ժամանակ կարող ենք մենք հանգիստ և ուրախ որտով հեռանալ աշխարհիցս ու դիմել դէպի միւս կեանքը, այն ժամանակ կարող ենք մենք՝ մեր օրուան գործը կատարելուց յետոյ սպասել Փրկչի աւետեաց խօսքին թէ լուսական դաշտուն։

Աստուծոյ հնազանդ մարդու համար, ճշմարիտ իմաստունի համար՝ մահը ամենեին վախենալու մի բան չունի, բայց առաւել ևս այն րոպէումը, երբոր հոգին իւր մարմնաւոր պատեանից բաժանվում է։ Նատ մեռնողների համար մի ճշմարիտ քաղցր բան է եղել խաղաղ կերպով նկատել հոգւոյ բաժնուելը իւր հողեղէն մարմնից։ Այս բանը յայտնի են արել մանաւանդ այն տեսակ հիւանդները, որոնց հիւանդութիւնը արգելք չէ եղել իրանց համար դիտելու իրանց անձի դրութիւնը։ Այդ դրութիւնը ոչ միայն երկիւղ չէր բերել նոցա վերայ, ինչպէս որ կարող էին կարծել և շատ էլ հոգս անել իրանց առողջ օրերումը, այլ ընդ հակառակն, նոքա աւելի ուրախ և աւելի վսեմ դրութեան մէջ են իրանց տեսել. այնուհետեւ

աշխարհն ու կեանքն էլ ամենեին այն գինը ունենալ չեն երեացել նոցա աչքումը, այն բարձր վիճակի հետը համեմատելով, ինչի մէջը որ իրանց մի զարմանալի կերպով փոխադրուելը զգացել են:

Մարդս՝ մեռնելու միջոցին զգում է, որ իւր մէջը սկսվում է հոգւոյ բարձր վիճակը. այդ բոպէներումը մարդուս հոգին նորա համար աւելի հասունացած վիճակի մէջ է գտնվում, որ նորա հողեղէն մարմնոյ՝ իրան ճնշող ծանրութիւնը կամաց կամաց հեռանում է իրանից: Նա մի ազատ գրութեան մէջ է ընկնում. նա ինքը իւր աչքին երեսում է որ էլ առաջուայ մարդը չէ, որ մի զօրութիւն ու մեծութիւն կայ իւր մէջ: այնպիսի մի զօրութիւն ու մեծութիւն, որ առաջ երբէք իրան յայտնի եղած չէր: Այս բանը նկատուած է շատ մեռնողների վերայ: Երբեմն նոքա՝ իրանց մեռնելուց առաջ՝ ունեն մի քանի պայծառ բոպէներ, երբոր կարող են աւելի զուարթ կերպով խօսել իրանց չորս կողմը գտնուած մարդոց հետ: Սովորաբար նոքա այն ժամանակ ոչ միայն իրանց մահուան ժամը, այլ գրեթէ բոպէն անգամ որոշ կերպով չփառեն թէ երբ կպատահի: Նոքա անում են իրանց վերջին կարգադրութիւնները՝ առանց գիտենալու առաջուանից թէ մահ երբ կը պատահի իրանց: Նոցա ուժերն սկսում են զարմանալի կերպով ազնուանալ. վաղուց անցկացած բանը իրանց աչքի առաջն է գալիս պարզ ու պայծառ կերպով. այն բանն, որ իրանց առողջ օրերումը, կարծես մտքներիցն ընկել էր, կամ հազիւ էին միտքները բերում մի մութ կերպով: Ուրիշներն ապագայ

ներին վերայ են խօսում: Սորա համար մարդիկ մեռնողների գրութիւնը շատ անգամ հիացման կամ յափշտակութեան վիճակի հետ են համեմատել կամ հոգւոյ լոյսը նմանեցրել են այն լուսին, որ՝ իւր հանգչելուց առաջ՝ դարձեալ մի անգամ և աւելի պայծառ կերպով լոյս է տալիս քան թէ երբ և իցէ պատահէլ էր այդպէս լոյս տալ: Սորանից հասկանում ենք որ հէնց մեռնելու միջոցին արդէն սկսում է մարդուս հոգւոյ վիճակի բարձրանալը: Թէև նա մարմնաւոր կեանքի կողմանէ գիտակցութիւնը կորցնում է, բայց և՝ մի և նոյն ժամանակ անուրանալի կերպով ամենապայծառ ու մեզ բոլորովին անհասկանալի մի ինքնագիտակցութեան վիճակի մէջ է մտնում: կամ փոխադրվում:

Մարդիկ շատ անգամ քունը մահուան եղբայր են ասել. բայց դորանով մի բոլորովին սխալ գաղափար են մտցրել կեանքի մէջ: Քունը համարում են մի անզգոյ գրութիւն. ինչու որ մարդս զարթնած ժամանակը չէ կարող միտքը բերել այն, ինչ որ իւր հոգին մտածում էր՝ մարմինը քնած ժամանակը: Բայց հոգին ունի միշտ իւր գիտակցութիւնը. նա երկու տեսակ կեանքով է ապրում. մէկը՝ ճաշճաշ հետ, միւսը՝ ճաշճիցն անկախ: Ինչ որ նա բայց զիտացնութեանը՝ կամ արթուն ժամանակը իւր կեանքումը տեսնում է, լսում, անում կամ լինում, այն նորա միտքն է ամեն ժամանակ և յիշել կարող է արթացն միշտ: Սորա հակառակն ինչ որ նա տեսնում է, լսում, անում լինում վակ զգացմունքներով կամ ուստի միշտ մարմնիցն անկախ, այդ նա իւր արթուն ժամանակը մարմնիցն անկախ, այդ նա իւր արթուն ժամանակը

նակը չէ յիշում, կամ միայն մուլթ կերպով այն ե-
րազներիցը, որ նա աշխատում է միտքը բերել, երբ
հոգին դարձեալ սկսում է կապակցութեան մէջ լի-
նել մարմնոյ գործարանների հետ։ Բայց մահը բոլո-
րովին դէն է գցում իրանից այն բոլոր կապերը,
որով պատել էր իրան երկրաւոր մարմինը։ Հոգին
այնուհետև էլ չէ հպատակում երկրաւոր մարմնոյ
օրէնքներին, այլ մի անհամեմատ բարձր կեանքի ու
գոյութեան շէմքումն է կանգնած արդէն։ Երբոր
մարդուս մարմինը բոլորովին մեռնում է, այն ժա-
մանակ սկսվում է՝ մեզ վերայ ծանրացող զգայական
կեանքի ամենայն կապերիցը արձակուած ու ազատ՝
մեր անմահ գոյութիւնը կամ կեանքը։ Սորա համար
մահը մեր վիճակի բարձրանալն է, մի փառաւոր ա-
զատ զրութեան համնելն է։ Սորա համար է և հան-
գըստութիւնը մեռնողների, երբոր վերջապէս սքան-
չելի կերպով գեղեցիկ րոպէն գալիս, համնումէ։ Անա-
սելի մի քաղցր բոպէ ալէտք է լինի այդ րոպէն։
Մարդս՝ շատ անգամ մեռնողների կերպարանքի գը-
ծագրութեան մէջ՝ իրանց մեռնելուց մի քանի ժամ՝
յետոյ ևո՛ կարծես տեսնում է մի գոհ և անպատ-
մելի ուրախ ժպիտ, որ նոցա լաւ գրութեան մէջ
գտնուելու մի թոյլ ու վերջին արտայայտութիւնն է։
Մարդս կարծես, նոցա երեսի վերայ կարդում է նո-
րանց վերայ կատարուած Քրիստոսի՝ մեր Տիրոջ խօս-
քը թէ՛ է՞ ինանգատացնէ՞ դարձած հոգիներին։

Այսպէս կեանքից բաժանուիլը՝ մանաւանդ արդարի համար միայն պտղաբեր է։ Երկնային ուրախութիւններով լի մի ըսպէ է, հոգին էլի վերադառ-

Նում է իրան յատուկ արժանաւորութեանը: Եթէ նա առաջ ապրել էր աշխարհիս վերայ, բայց այժմ միայն կարող է կրկին միտք բերել իւր կեանքը, մինչդեռ այդ բանն անկարելի էր նորա համար, քանի որ երկրաւորի մութ կապը պատած էր նորան և նա պէտք էր այդ կապը տանէր, որովհետեւ մարդ էր և իբրև մարդ պիտի ապրէր:

Ո՞վ Աստուած, ո՞վ իմ երկնաւոր Հայր, ի՞մ բար- յած հոգիս և Դո- հանդացնես: ԶԵ, մահուան րո- պէին իմ անձս էլ գող չի բռնիլ: Ես այն րոպէին, այն երջանկացնող հաւատովն ու յուսով կսպասեմ, որ մահին յազթող իմ Փրկիչս ինձ տուել է. այն րո- պէին առում եմ, կսպասեմ ես այն ուրախութեան, որ իրաւունք է տուել ինձ ունենալու քո անչափ սէ- րըդ:— Այն ի՞նչ հրձուանք կլինի, երբոր իմ ըոլոր կորցրածս այժմ ինձ յետ կտրուի սուրբ և վառա- ւոր կեանքումը: Այն ի՞նչ մեծ ուրախութիւն կլինի, երբոր ես, ժամանակաւոր կեանքի նեղ սահմաննե- րիցը էլ յնեղուելով՝ կատարելութեան նպատակիս կհասնեմ:

Պարգևելիք ինձ միայն զօրութիւն և կարողութիւն, ովք իմ երկնաւոր Հայր, որ ես արթուն մնամ և աղօթք անեմ, որ այստեղ հաւատի բարեզք պատերազմը պատերազմեմ և այնտեղ մի օր քո ձեռքիցդ ստանամ յաղթութեան պսակը:

Անձ այսուհետո ամեակա յառաւ և անձ և անձ
անձ քրո պազի ոչ զավու ոչ յարա առա ան
ոչ
ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ
ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ
ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ
Ե. ի՞ ծուառալ ի ի

ՊԱՏՐԸՍ ԵՂԻՐ ՄԻՇՏ.

Ջեր գօտիները ձեր մէջքը կապած լինին ու ձեր
ճրագները վառած, նման եղէք այն մարդոցը, որ
իրանց տիրոջն են սպասում, թէ երբ յետ կդառնայ
հարսանիքից, որ երբոր գայ ու դուռը ծեծի, շու-
տով բաց անեն:—Երանի ծառաներին, որոնց տէրը
կգայ ու արթուն կդտնէ:

Սաստիկ ներգործում է մեր վրայ յանկարծ
մեռնելու լուրը մի ծանօթ մարդու, որին մի քանի
ժամ առաջ, մի քանի օր առաջ տեսել էինք, խո-
սել էինք ու առողջ գիտէինք: Սարսափ է գալիս
մեր վերայ: Նատ դժուար ենք կարողանում հաւա-
տալ մեզ հասած լուրին, այնպէս կարծելով՝ իբր թէ
անկարելի բան լինի այն, ինչ որ կեանքի մէջ շատ
ու շատ անգամ է պատահում. իբր թէ Աստուած՝
կեանքի և մահուան Տէրը՝ մեզ խնայելով, բացառու-
թիւն պիտի անէր մեզ համար ու դուրս հանէր մեզ
աշխարհիս բաների սովորական ընթացքից:

Այս Ի՞նչն է մեր վերայ սարսափ բերում:—մեզ
սարսափեցնողը մեր այն մտածմունքն է, որ մի մարդ
առանց ամենայն պատրաստութեան՝ յանկարծ խըլ-
վում է իւր գործունէութեան միջից ու իւր մտքու-
մը դրածներն ու սարքածները անկատար են մնում:
Մենք կարծես, յանկարծ մեռնող մարդու դրութեան
մէջն ենք մեզ մտածում, ու զգում ենք մի խուլ
սարսափ յանկարծ պատահած զօրաւոր յեղափոխու-
թեան վերայ, որ մի քանի բոպէի մէջ մարդուն իւր
ամենօրուան գործերիցը խլեց, առաւ տարաւ անծա-
նօթ աշխարհը: Մեռնողի մեզանից յանկարծ բաժ-
նուիլը՝ առանց մնաք բարելի, առանց վերջին սիրոյ
խօսքերի՝ մեր սրտին շատ ցաւ է տալիս:

Իոլորովին ուրիշ կերպ ենք զգում մտիկ տալով
մեր մերձաւորի վերայ, որ օր օրի վերայ մեռնելու է
մօտենում իւր հիւանդութեամք, որ անպատճառ այն
վերջը պէտք է ունենայ, որ նորան մահուան տանի:
Իրաւի է, որ մենք մեր ունենալու կորուստի համար
աւելի պատրաստուած ենք, բայց էլի որ մի փոքր
լաւի է գնում հիւանդը, կամ մեզ այնպէս երեսում,
էլի յոյս ենք ունենում, թէ կարելի է կլաւանայ:
Այդ յոյսն այնչափ աւելի շուտ ենք ունենում ու
աւելի սրտանց ենք ցանկանում, որչափ որ այն անձը
մեր սրտի համար թանկագին է, որ մեր սիրտն ահ
էր գցում մեզանից բաժանուելու: Այդպիսիների
մահը մեզ պակաս խոր տիրութեան մէջ չէ ձգում,
թէ և ամեն բանն էլ սպասում էինք, որ կարող է
պատահել: Իրաւ է, հիւանդը քիչ կպատահի, որ այն-
պիսի ծանր նեղութեան մէջ լինի, ինչպէս որ մենք

մեզ նկարագրում ենք մեզ չարչարող մեր երեակայութեամբը. բայց ովկ կարող է մի ժամանակ իւր տեսած բոլորովին առողջ ու զուարթանձի անձի այժմ քաշուած մաշուած երեսը, գունատուած այտերն, նուաղած ու խոր ընկած աչքերը տեսնել ուսաստիկ կերպով չցաւել նորա վերայ. ովկ կարող է նորա հառաջանքն ու տնքտնքոցը լսել տեսնել նորա թոյլ, գտուար շունչ քաշելը, ու մտքումը չասել թէ ողորմած Աստուածը այս դրութեանը շուտով վերջ գներ ու չարչարուղին հանգստութիւն պարգևէր մահուան քնոյ մէջը:

Այսպէս ստրսափեցնում է մեզ յանկարծ մահը. այսպէս տիրեցնում, վշտացնում է մեզ կամաց կամաց դէպի մահը գնացողի վերայ նայելը:

Ի՞նչն է ուրեմն աւելի ցանկալի, եթէ որ ցանկութիւնները մի նշանակութիւն ունենային այնտեղ, ուր որ ամենայն ցանկութիւնների վերջն է գալիս հասնում. որն աւելի լաւ է, յանկարծ մեռնելը՝ թէ կամաց կամաց:

Թէև սկզբում մեզ այնպէս է երեսում, որ այդպիսի մի հարցմունք տալը անօգուտ մի բան է ու ոչինչ գուրս չի գալ գորանից, ինչու որ մեր մարդկային ոյժը ոչինչ չէ կարող որոշել այն բանի վերայ ինչ որ պիտի պատահի և պատահում է. բայց և այնպէս՝ այդ բանի վերայ գատողութիւն անելը շատ խրատական է ամենայն մի մարդու համար. այդպիսի գատողութիւնը մինչեւ անգամ բարիք բերող է. ինչու որ ոչինչ անցնում է քանի քանի նախապաշարմունքներ, որ մեր մէջը մտել են՝ յանկարծ կամ կամաց

կամաց մեռնելու մասին: Մի մասն այսպահարա կան, որ՝ յանկարծ մահն ամենամեծ անբաղդութիւն են համարում, որովհետեւ կարծում են թէ յանկարծ մեռնողը ժամանակ չէ ունենում իւր մեղքերը քաւելու և իւր մեղքերի մէջ մեռնելով գժոխքն է գնում: Մի թէ քիչ կան այնպիսի մարդիկ, որ Աստուծոյ, հէնց նորա համար են աղօթք անում, որ իրանց փրկի յանկարծ մահից, Բայց այդպիսի կարծիքը միայն պտուղ է անարժան գաղափար ունենալուն Աստուծոյ մեծութեան ու արգարութեան վերայ: Եթէ որ յիրաւի յանկարծ մեռնելը ամեն չարիքներից աւելի զարհութելին լինէր, ուրեմն ի՞նչպէս կարելի էր, որ Աստուած, որոյ զաւակներն ենք մենք անենո, որոյ ողորմութեանը մենք անենո ակնկալութիւն ունինք, մի քանի մարդոց վերայ լաւ աչքով նայէր, իսկ միւնիւների վերայ՝ ոչ: Երբոր երկրաշարժը, կամ մեծ հեղեղը յանկարծ հարիւրաւոր ու հազարաւոր մարդոց կեանքից զրկում է, միթէ նոցա մէջ չկան՝ թէ մեծ մեղաւորներ և թէ առաքինի արգարներ: Եթէ յանկարծ մեռնելը գժոխք գնալու գատապարտութիւն լինէր, ուրեմն միլիօնաւոր մարդիկ, որ իրանց անկողնի մէջ երկար ցաւեր քաշելով, իրանց հոգին փչում են, ամենողորմած Աստուծոյ աւելի մեծ շնորհացն իրանց արժանացած պէտք է համարէին:

Այո՛, ասում են, մեղաւորը իւր մահուան անկողնի մէջը ժամանակ ունի գեռ ևս իւր շատ ու շատ յանցանքների վերայ զղջալու ու սրտովն դէպի իւր Աստուածն գառնալու: Եւ եթէ կարելի լինէր,

որ ապաշխարելն, միայն իւր մահուան ժամին ամեն
բան դէպի լաւը գարձնէր, հակառակ չէր լինիլ ար-
դեօք Աստուծոյ ամենին վերայ հայրական հաւասար
խնամքին ու սիրոյն, եթէ նա մի քանիսին այն բաղ-
դաւորութիւնը զլանայ, որ ուրիշներին պարգևումէ:
Նէնց մի երկրաւոր հայր, մի մարդկային մայր իրանց
զաւակներին այդպիսի անարդարութիւն կկամենային
անել:— Ոչ, ձեր գաղափարը գերագոյն էակի վերայ
նորա համար պակասաւոր է, որ գուք սխալ գաղա-
փար ունիք մահուան անկողնի մէջ զզջման գալու
նշանակութեան վերայ: Եթէ որ չարագործը բանտի
մէջ իւր մեղքերի վերայ զզջար, ստանալու պատ-
ժիցը վախենալով, դուք նորան առանց այլ և այլի
մի և նոյն կարգը կդասէիք շատ բարեպաշտ և առա-
քինի մարդոց հետը: Մի երեխայի, որ իւր ամեն տե-
սակ անհնազանդութեամբը շատ տիրեցրել է ձեզ,
երբոր յիրաւի պատժելու լինէիք, ինչպէս շատ ան-
գամ ասել էիք իրան, վախիցը լաց լինէր ու զզջար,
այնպէս կվարձատրէիք, ինչպէս որ ձեզ միշտ հնա-
զանդ ու աշխատասէր երեխային, որ ամեն ժամա-
նակ ամենաքնքոյշ սիրովն դէպի ձեզ՝ ձեր կամքը
կատարել է:— Սրդարութեան ամեն մի զգացմունքը
այդպիսի վարմանը դէմ կվրդովուէր: Ի՞նչպէս կա-
րող էք դուք արդարագատ Աստուծոյն անարդար
համարել, որ միայն գուք կարող էիք լինել: Միթէ
երկիւղիցը բռնի յառաջ եկած մի րոպէի զզջումը
կարող է հաւասար արժէք ունենալ երկար տարի-
ներով առաքինութեամբ անցկացրած կեանքի հետ:
Քրիստոս ինքն վսեմ ու ազդու կերպով զգուշացրել

է մեզ այգպիսի սխալանքի մէջ ընկնելուց: « Նոցա
պատուղներից կճանաչեմ և նոցա», ասում է նա. ամեն՝
ինձ Տէ՛ր, Տէ՛ր՝ ասողները երկնքի արքայութիւնը չեն
մտնիլ այլ որոն+ որ՝ իմ երինաւոր Հօրո կամուլը կիտարցն:

Ուրեմն յանկարծ մեռնելուցն ամենեին վախե-
նալ պէտք չէ՝ սարսափելի չարիքներից մինը համա-
րելով. այգպիսի մահն ինչ է որ մեզ առիթ ու ժա-
մանակ չէ տալի, որ մենք զզջանք ու մի քանի ա-
զօթքներ ասենք: Դուք պէտք է այնպէս կատարեալ
լինիք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ
է: Բայց այս կատարելութեանը համում է մարդու
մշտապէս նուաճելով միայն իւր զգայական հակում-
ներն և ամենայն կերպ աշխատելով, որ մաքուր,
սուրբ վարք ունենայ և անարատ կեանք՝ Քրիստոսի
խօսքին ու հոգւոյն համեմատ:— Ուրեմն հոգոս քա-
շիր քո ժամանակաւոր կեանքիդ մէջ մշտապէս ամ-
բիծ խզջմտանք ունենալու, որ քո մահուան նեղու-
թեան մէջ յոյս ունենաս Աստուծոյ յաւիտենական
ողորմութեանն: Եթէ որ այս աշխարհումն քո նպա-
տակիցդ շատ հեռու ևս մնաս, յոյսդ մի կտրիլ
զզջալու երբ և իցէ, և արդարանալու: Աւազակին
անգամ, նորա սրտանց զզջումը տեսնելով՝ խաչի
վերայ բարձր ձայնով ասաց Փրկիչը, « Այսօր դու ինձ
հետ դրախտումը կլինիս »:

Իմաստուն մարդը շատ պատճառներ ունի թէ
յանկարծ և թէ կամաց կամաց եկող մահը ցանկալի
համարել. բայց երբէք պատճառ չունի մի կամ միւս
տեսակ մահից վախենալու:— Քո փտելուցդ, հող գառ-
նալուցդ մի վախենալ. թէ՛ շուտ պատահի, թէ՛ ուշ՝

մէկ է։ թէ կամաց կամաց հիւանդութիւնից ուժից ընկնելով՝ կամ ծերութիւնից զօրութիւնդ պակասեւուց ես մեռնում՝ թէ շուտ գեռ ևս ոյժգ վերադ ու կեանքի քաղցրութիւնները վայելելուդ միջոցին։ մի անակնկալ ու կարգէ գուրս անբաղդութիւնով։ Թէւ դու կարող ես առաջուանից հասկանալ քո մեռնելդ, ինչպէս որ մարդս առաջուանից գիտէ, որ երեկոյին պէտք է քնի։ բայց միայն մահդ որ գայ, դու այն ժամանակը չես իմանալ, ինչպէս որ քունի գնալուդ րոպէն չես իմանում։ Որոնք որ քո մեռնելդ տեսնում են, նոքա գիտեն և դող ու սարսափի է ընկնում նոցա վերայ։ Դող ու սարսափի է ընկնում նոցա վերայ նորա համար, որ կեանքը բնականապէս սիրելի ու քաղցր է և այդ զգացումն Աստուած ինքն է դրել կենդանի արարածների և մանաւանդ բանական մարդուս մէջ։ կետնուր ալլելու, կամ կեանքը քաղցր լինելու այդ ռժացուն է, որ ոչ մի կենդանի, կամ մանաւանդ մարդ մեռնել չէ կամենում, մահուան դէմ վրդովում է։ Դու քո նուազած աչքերդ չես տեսնում։ դու չես սարսափում քո գեղնած, ոսկորները գուրս ցցուած երեսիցդ, կամ թէ անդամներդ սառելուցը։ այս գրութիւնը միայն քո չորս կողմդ կանգնած մերձաւորներիդ երեւակայութիւնն է զարհուրելի պատկերներով վրդովում։

Մի վախենալ մեռնելուցդ, ինչու որ գիտես թէ՝ ով քեզ վրկեց, Յէսուս Քրիստոսն է քո աղատարարդ, որ քեզ երկնքի ճանապարհը ցոյց տուեց ու քեզ յայտնեց երկնաւոր Հօր կամքը։ Զափազանց վախենալը մեռնելուց ոչ միայն քրիստոնէին այլ և ոչ քրիս-

տոնէին անարժան է։ Պատճառն որ, այս զուր տեղն ինքն իրան տանջելը՝ ցաւեր է աւելացնում մարդուս վերայ, և այնքան աւելի մեծ ցաւ, որ մահը բնաւ չէ պատճառում։ Մահից վախենալը իսանգարում է մեր բանականութիւնը, զրկում է մեզ ամեն ուրախութիւնից, էլ ոչ մի բանով չենք կարողանում ուրախանալ։ թէւ ցանկանում ենք, բայց սիրտներս չէ բացվում, սեացած է ու սեացած։ բայց ուրախութիւն ասած բանդ է, որ մեր առողջութիւնն ու կեանքը պահպանում է մի սննդարար կերակուրի նման, որ մեզ ոյժ է տալիս, և որով կարողանում ենք մեր կեանքը պահպանել ու շարունակել։ մի մեծ վնասն էլ որ մեզ տալիս է, այն է, որ մեր մարմինը թուլացնում է այդ մեր վհատուած ու իսանգարուած գրութիւնն ու մեր աւելի շուտ մեռնելու պատճառ է լինում։ բոլորովին հակառակ մեր ցանկութեանն, որ մահի ձեռքից վախելը ազատուել ենք կամենում։ Յայտնի է, որ սաստիկ վախենալուցն աւելի վտանգաւոր թոյն չէ կարող գտնուիլ։ Վախ ասած բանդ հէնց ինքը մարդուս կեանքը յեղաշրջող ու խանգարող է։ Ով որ անգագար վախում է մահից, անգագար էլ մեռնում է։ ամեն օր էլ կարծում, որ մահն եկել է, մօտենում է։ իսկ իւր մահուան ժամն չի էլ զգալու իւր մեռնելն։

Ով կարող է իմանալ թէ՝ ինչ մահով կմեռնի։ կարող ենք իմանալ որ յանկարծ՝ կամ կրակի մէջ կայրուենք, կամ կտրից քար կընկնի մեր գլխին ու կսպանի, կամ ջրի ալիքների մէջ կխեղդուենք, կամ կաթուածը մեզ կտանի, կամ ով գիտէ, ինչ պա-

տահմունքով յանկարծ մեր կեանքից կզրկուենք:—
Սորա համար առանդ հրաման պառար, այսինքն է՝ ամեն
բանդ այնպէս կարգի գիր, որ եթէ շատ էլ յանկարծ
բաժանուիս քո բարեկամներիդ շրջանիցը, քո մա-
հիցդ յետոյ ամեն բան կարգին գտնեն, պակաս, ան-
հասկանալի ու խճուած բան չմնայ: Քեզանից յետոյ
ապրողները գովասանքով կխօսեն քո վերայ: Քո ըն-
տանիքիդ քեզ օրհնենքով յիշելն յետելիցդ կդայ,
կհասնի, մինչեւ յաւիտենական կեանքն. ինչու որ
դու կատարել ես ամենտսուրբ պարտականութիւննե-
րիցդ մէկը քո սրտիդ համար թանկագին ընտանեացդ
համար, որոց հետը կապուած էիր արենակցութեան
կապով: Միշտ կարելի է ենթագրել թէ՝ ով որ իւր
տան գործերի ու կառավարութեան մէջ կարգ է
պահպանում, իւր միւս մեծակշիռ յարաբերութիւն-
ների մէջն ես, Աստուծոյ հետ ունեցած յարաբե-
թիւնների մէջն ես նոյնը կիբնի, և մահը նորան անպատ-
րաստ չի գտնիլ ու վերան յանկարծ եկած չի լինիլ:
Այնպէս կեանք վարիր ու գործդ այնպէս բոնիր ամեն
օր, որ քո մահից յետոյ, եթէ այս ժամկիս էլ յան-
կարծ պատահէր, ոչ քո ընտանիքդ տիսրութիւն քա-
շի, ոչ էլ քո անուանդ ամօթ բերի ու քաշքշեն: Ին-
չու որ մեռնողի անունը պէտք է լինի միշտ՝ իրանից
յետոյ թողած այն պատուական բանն, որ ամենքն
էլ օրհնելով յիշեն: Քո գործերդ ու ամեն բանդ այն-
պիսի մի կարգով, կանոնով պահիր տուած ուղղու-
թեամբդ, որ իմացուի թէ՝ դու մտածել ես միշտ, որ
ամեն մի ժամ օտարների աչքի առաջ կարող են բա-
ցուիլ ու յայտնուիլ, ինչպէս որ մեռնելուց յետոյ ամեն

ժամանակ շատ կամ քիչ պատահումէ սովորաբար:—
Տանդ համար պատուելու պար:— Եթէ ամեն ժամա-
նակ քո կեանքիդ մէջ անարատ ես ապրել, մարդա-
սէր բնութիւն ես ունեցել, կուր, նախանձ, ատելու-
թիւն, ոխակալութիւն քո սրտիդ մէջը տեղ չեն ու-
նեցել, և այնպէս ես ապրել, ինչպէս որ քո Փրկիչդ,
քո Յիսուս Քրիստոսդ սորվեցրել է, քեզ ապրել՝ այն
ժամանակ յանկարծ մեռնելու քեզ համար մի բարիք,
մի բարերարութիւն է, որ քեզ յանկարծ հասած կը
լինի: Ի՞նչ պիտի վախենաս Աստուծոյ առաջը գուրս
գալու, որ միշտ նորա աչքի առաջն ես: Դու քո
ծնած օրիցդ նորա զաւակներից մէկն ես, որ քեզ
իւր ձեռքի վերայ է պահել սիրելով, աչքը վերադ
է եղել ու քեզ պահպանել է:— Անշուշտ գու վա-
խում ես նորա դատաւորական նայուածքից: Նա
ճանաչում է քո սխալանքներդ. բայց և գիտէ քո
սրտանց ջանք անելու գէն դնելու քո արած պակա-
սութիւններդ: Գիտէ նոյնպէս քո ուղիղ մտքով աշ-
խատելու նորան արժանի լինելու համար՝ մեղքի մէջ
ընկնելու փորձանքների յաղթելու, գիտէ, որ դու
շատ անգամ քո բարկութիւնդ, ժլատութեան ու
շուայլութեան հակումներդ զսպել ես ու քո մէջդ
խեղդել. գիտէ, որ դու քո ամեն մի սխալու աշխա-
տել ես աւելի լաւ գործերով ուղղել: Միթէ մի երե-
խայ պիտի վախենայ, երբոր իւր ամեն սխալանքները
գէն դրած ես լինի, իւր գէպի ինքն սիրով լցուած
հօրն առաջը դուրս գալու: Միթէ՝ Յիսուս այսհօր ան-
սահման ողորմութիւնը, համազուելու խօսքերով մեզ չէ
յայտնել: Միթէ մեզ չէ ապահովացրել նորա գիտու-

թեան ու ողորմութեան համար, որով մեզ ներում է։
Ով որ ամեն ժամանակ Յիսուսի սիրող մտքովն
է մանդալիս ամենատես ու ամենագէտ Աստուծոյ
առաջը, նա նորա երեսը երբոր տեսնի, չի դողայ։
Յանկարծ մեռնելը մահուան ամենամեծ դառնութիւ-
նից մեզ ազատում է։ Սրտի սիրեկանների ու մօտիկ
բարեկամների լացը, մեզ տանջող մտածմունքը թէ՝
ինչ խոր տիրութեան մէջ պէտք է ընկնեն մեր հե-
ռաւորները, չէ դժուարացնում Աստուծոյ անփոփո-
խելի օրէնքով մեր համար սահմանած մահն ու հե-
ռանալը այս աշխարհիցս։ Բայց և այնպէս մեր մա-
հուան համար լացը ու տիրութիւնը մի դիւրազգաց
սրտի համար ամենատիրալի բանն է, որ մահը կա-
րող է մեռնողին պատճառել։ Ո՞վ է այն մարդը, որ
կարողանայ առանց սիրով սաստիկ լցունլու, տես-
նել իւրայնոց խոր տիրութիւնը, թէև շատ էլ ծած-
կել աշխատեն իւր առաջն։ ո՞վ կարող է չըրդովուել
սաստիկ, երբոր մերոնք մեզ մօտենում են՝ վերջին
անդամը՝ իւրեանց հարազատ սիրոյ վերջին զգաց-
մունքը մեզ յայտնելու։ — Երբոր նոքա աղօթք անե-
լով մեզ համար՝ խոր խոցուած սրտով՝ շրջապատում
են մեր մահուան անկողինը։


Մինչև անգամ այս ու այն հանդիսաւոր պատ-
րաստութիւնները տեսնելը մեզ համար եթէ որ մեզ
մահ պատահի, վախով փափալը մեր սիրելիների՝ մեր
ամեն շարժմունքների ամեն մէկը ուշադրութեամբ
դիտելով, ամենայն հանգամանքները որ սովորաբար
շրջապատում են մեռնողին՝ կեանքի այս վերջին րո-
պէն շատ դժուարացնում են։ Այդ պատճառով Աս-

տուած իւր զաւակներից մի քանիսին ուղարկում է
յանկարծ մահ։ Աղատում է նոցա անձամբ տիսուր
վկայ լինելուցը, իրանից յետոյ մնացողների անպը-
տուղ ու շատ անգամ չափեցը գուրս ցաւիցը։

Մահը իսկապէս ննջելը՝ դառն չէ։ Մահը ինքն
իրան ցաւ քաշել չէ ու չէ ես կարող լինել։ ինչու
որ ամենայն ցաւերի վերջն է։ Միայն հիւանդու-
թիւնն է դառը բանը։ բայց հիւանդութիւնը մահ չէ,
մահին մօտեցող է։ Ում որ Աստուծած յանկարծ այս
աշխարհից, կանչում է, նա հիւանդութեան անկողնի
նեղութիւններիցը ազատ է մնում։ Նա մեռնում է
առանց մահ ճաշակելու։ Իւր երկրաւոր ու երկնաւոր
կեանքի մէջը հաղիւ մի րոպէ կայ։ Առանց հոգսի,
առանց վախի, առանց ցաւի այս անցաւոր կեանքիցս
դէպի լաւագոյն աղնուագոյն վիճակն է գնում։ ինչ-
պէս որ երազ տեսնող մարդը զարթնում է ամեն
բան պարզ տեսնելու։

Այսու յանկարծ պատահած մահը ես ոչ թէ Աս-
տուծոյ պատիժ եմ համարում, այլ նորա ամենա-
գեղեցիկ բարերարութիւններից մէկը։ Դորա համար
ես կոպասեմ նորան ոչ իբրև մի թշնամու, այլ իբրև
մի բարեկամի, որ գալիս է ինձ տանելու աստուա-
ծային հայրական տան աւելի մի գեղեցիկ բնակա-
րանը։ Մահը մեզ զարհուրեցնող գեւ չէ, այլ լուսոյ
հրեշտակ։ նա չէ քանդում, այլ շինում է, չէ խա-
ւարեցնում իբրև անմիտար մութ գիշեր, այլ պայ-
ծառացնում է յաւիտենական փառքի համար։ — Ան-
վրդով սրտով կոպասեմ ես իմ վերջին ժամին։ թո՛ղ
գայ, համնի, երբ էլ որ և ինչ կերպով էլ որ Աս-

տուծոյ հաճոյ է։ Բայց առաջուանից էլ կպատրաս-
տուեմ մահուան, իմ կեանքիս ամեն մի օրում, որ
Տէրը ինձ արթուն գտնի, երբոր գալու լինի։ Ինձ
համար էլ ստիպողական լինի այն յորդորը թէ՝ մէ^շ
ինայիք զզ մէ մինչ հիւանդանալը։ Այլ աւաղիք ուն,
այսում ոյ դէւ մէջ ընկնէլ հարող է։



Զ.

ՃՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԶՈՐՈՒԹԻՒՆԸ.

Երկնքի պատգամաւո՞ր, սուրբ Ճշմարտութիւն, յուսոյ
աստղ՝ ամպամած գիշերը մութ միջոցին դու լոյս ծագեցիր,
կասկածանքի միջոցին միմիթարութիւն բերիր։ Ինչ որ կեղծ է
ու մօտենում է քո լուսին, ոչնչանում է, իմաստուների
կեղծ ճարտարութիւնը քո զօրութիւնից հալածվում, անհե-
տանում է։ Ստեղծողի վառած կրակը թող շարունակ լոյս տայ
սրտերի մէջ, մինչև որ մարդիկ սերտ կապուած միմեանց հետ,
միայն Աստուծոյ խօսքին հնազանդին։ Ո՛վ Ճշմարտութիւն. սըր-
տանց կցանկամ ես քո կողմէ լինել, քեզ համար կռուելով,
մաքառելով՝ քեզ հաւատարիմ մնալ. թող աշխարհս աշխար-
հով անց կենայ, դու հօյաւիտեան կմնաս։



Պարզոյ որդին Յիսուս Քրիստոս այս խոր միսք
ունեցող խօսքերն ասաց Նիկոդիմոս անունով Հրէից

այն իշխանին, որ գիշերը եկել էր աստուածային ու-
սուցի մօտ ճշմարտութիւն սորվելու։ « Բայց այս է
գատաստանն, որ Լոյսն աշխարհ է եկել և մարդիկ
խաւարը աւելի սիրեցին քան թէ լոյսը, պատճառն
որ իրանց գործերը չար էին։ Ով որ չար բան է
անում, ատում է լոյսը, որ իւր երեսին չասեն գոր-
ծերը. բայց ով որ ճշմարիտն է անում, նա դէպի
լոյսն է գալիս, որ իւր գործերը յայտնի լինին, թէ՝
Աստուծով գործուեցին »։ Նազովրեցի աստուածային
իմաստունի այս ասած խօսքերի մէջ մի գեղեցիկ՝
շատ անգամ՝ միակ միմիթարութիւն կայ ազնիւ հոգ-
ւոյ տէր մարդոց համար։

Ազնիւ հոգւոյ տէր մարդոյ համար մի գեղեցիկ
միմիթարութիւն է, որ իրանք վերջ ի վերջոյ ականա-
տես և ականջալուր վկաները պէտք է լինին օրուայ
լոյսը ծագելուն՝ ընդհանրապէս վայրենացած վարքի,
խաւարի գործերի վերայ. կտեսնեն ճշմարտութիւնն,
որ վերջապէս կյաղթի երկար ժամանակ աստուածա-
ցուցած սուտին, հպարտ կեղծաւորի երեսի վրայ դրած
դիմակը կհանի, գէն կրծքի, հաւատի վերայ անտեղի
սրախօսութիւններ ասող ու ծիծաղողի անհամ ու
անմիտք խօսքերը ջարդ ու փշուր կանի, իշխանու-
թիւն բանեցնել սիրող խորամանկ փարիսեցուն հողի
հետ կհաւասարեցնի։

Ազնիւ հոգւոյ տէր մարդոյ համար մի գեղեցիկ
միմիթարութիւն է, որ ճշմարտութիւնը վերջապէս կը
յաղթի և անարդուած ու ծաղր եղած իրաւունքն իւր
տեղը կտնի այն ժամանակ, երբոր լաւ հոգւոյ տէր

մարդիկը իւրեանց ազքովը կտեսնեն, որ երկնքի ու երկրի վերայ այլ ևս սուրբ բան չմնաց. երբոր կը-տեսնեն ուսումն առած ու լուսաւորուած մարդոց Քրիստոսի վերայ ծաղը անելու կերպով նայելն և հաւատից ամաչելն այնպէս, ինչպէս որ մարդ իւր արած երեխայութիւնից է ամաչում. երբոր կտեսնեն թէ՝ ինչպէս աւելի մեծ բաղմութիւն մարդոց բարձի թողի եղած կառավարութիւնների և ուսուցիչների կողմից՝ ու իրանց գլխին մնացած, սիրտ չդիմանալու թերահաւատութեան, խոր ու թանձր տգիտութեան մէջ իրեւ ցեխի մէջ խրուած ու թագուած են, ոչ իրանց մարդկային արժանաւորութիւններն են ճանաչում, ոչ Աստուծոյ վերայ մի արժանաւոր գաղափար ունին, և ոչ իրանց յաւիտենական կոչման մասին. երբոր կտեսնեն թէ՝ ինչպէս եկեղեցականներն, Աստուծոյ խօսքը Յիսուսի տուած ուսման քարոզիչներն իւրեանց կոչման սուրբ պարտականութիւնները միայն հացի համար են կատարում, իրեւ մի արհեստ բանեցնում, երբոր կտեսնեն թէ՝ ինչպէս հասարակ ժողովրդին՝ իրանց տգիտութեան մէջ հաստատում են, այն տգիտութեան մէջ, որոյ վերայ իրանք ծիծաղում են ու ծաղը անում. մարդասիրութիւն են քարոզում, ու մի և նոյն ժամանակ իրանց իրաւունք են տախոս ուրիշներին ատելու, նոցա որոգայթ գնելու, դաւաճանութիւն անելու. ամբարտաւանութեան ատող, ու հակառակ են ձեւանում, բայց սիրտները իշխանութիւն բանեցնելու կրակովն այրվում է, և այն մարդուն, որ իրանց անարդ ու ծործերը անահանում է, հա-

լածելով մինչև բանտն են տանում:

Ազնիւ մարդոց համար մի գեղեցիկ միսիթարութիւն է գիտենալը թէ՝ վերջապէս կգայ, կհասնի այն օրերը, որ ճշմարտութիւնը կյայտնուի իբրև վրէժինդիր իրան անարգողներին և կխայտառակի թէ ժամանակիս և թէ ապագայումն աշխարհքումս ապրող մարդոց առաջը ազգերի իրաւունքները բռնաբարողներին, գերեբար կեղծաւորողներին և աստուածացնողներին այն մարդուն, որ մի կարծ ժամանակ յալթանակ է կանգնել. ժողովրդեան արիւնը ծծողներին, որոնք երկիրների սահմաններ են փոխում, որ լիութեան մէջ փառաւոր ապրեն. խարդախ դատաւորներին, որոնք իրաւանց և արդարութեան ոչ թէ ծառաներն են, այլ վաճառողներն. անհաւատարիմ պաշտօնեաններին, որոնք իրանց ձեռքի տակի մարդոց հետ խստութեամբ են վարվում ու նեղութիւններ տալիս. Ահաւոր դատաստանի օր կայ այն մարդոց առաջն, որոնք իրանց քրիստոնեայ են ասում ու քրիստոնէութեան նշան չկայ վրաները, որոնք Աստուծոյ տեղ իրանց սեպհական օգուտն են պաշտում: Բայց այս է բարագագագանն որ լոյս աշխարհն է եկել: Այո՛, եկել է: Զուր էք յոյս կապել ձեր արարմունքն վարպետութիւնով աշխարհի աչքիցը ծածկելու: Զուր տեղն էք յոյս կապում ձեր ունեցած անունովն, աղդեցութիւնով և իշխանութիւնովն, որ այժմ ունիք, ձեր խարդախութիւններն արդէն հասկացած համորձակ մարդոց աչքը վախեցնելու: Ի զուր էք աշխատում ձեզ հետ կապելու բարեկամութիւնով, պարգևներով, վարձատրութիւններով այն մարդոց, որ

ձեր գաղտնի ամօթալի գործերը գիտե՞ն: Կլուսանայ
այն օրը, որոյ մէջ ձեր ժամանակի ու ձեզանից յե-
տոյ ապրող մարդիկը ձեր գատաստանը կանե՞ն,
Մարդու, առում է Յիսուս, իսաւաշն աւելի՝ ուրեցին
+ան նէ բյուլուց առանց քովելը չե՞լ էն: Երբոր
Յիսուս աշխարհ եկաւ, մարդոց աւելի քան թէ մեծ
մասը ոտոր զգայականութեան մէջ կորել էին: Ազա-
տութիւնն աշխարհիս երեսից բարձուել էր. միայն
բռնակալներ ու անկամք գերիներ կային: որոնք իրանց
յանդուգն, ամբարտաւան, քմահաճոյ իշխողներին
խունկ էին ծխում: Իշխողները միայն իրաւունքների
տէր էին, իսկ հպատակ ազգերը միայն պարտակա-
նութիւններ ունէին կատարելու: Բռնակալների գո-
ռոզութեան համար ազգեր պէտք էր անվերջ պա-
տերազմների մէջ արիւն թափէին: Հազար ու մի
աստուածների սեղաններ էին կանգնել, բայց դէպի-
տիեզերքի անտեսանելի կենդանի Աստուածն քիչ
մարդիկ էին հոգւով ու մոքով բարձրանում: Դպիր-
ները վիճում էին սուրբ գրքի ամեն տեսակ մեկնու-
թիւններ տալու վերայ այլ և այլ ծայրայեղութիւն-
ների մէջ ընկնելով. բայց Աստուածոյն հոգւով և ճշ-
մարտութեամբ երկրապատութիւն անելն և նորա մար-
դիկ երջանկացնելու պատուիրանները պահելն ու
կատարելը երկրորդական բան էր երեւում: Փարիսե-
կատարելը տաճարների մէջ բարեպաշտութիւն էին վրա-
ցիքը տաճարների մէջ բարեպաշտութիւնով. ամեն կերպով
վըրդին առերեսոյթ առաքինութիւնով. ամեն կերպով
յորդորում էին զոհեր անելու, պասեր պահելու և
ուրիշ արտաքին աստուածպաշտական գործեր կատա-
ռուից արտաքին աստուածպաշտական գործեր

քելու. բայց իշխող մոլորութիւններից մարդոց սիրտը
մաքուր պահելուց հետու էին: Ժողովութը աւելոր-
դապաշտութեան և տգիտութեան խաւարի մէջն էր:
Ով որ համարձակվում էր օրէնքի լուսաւոր մեկնու-
թիւնը տալու, ատվում էր հալածվում, բանտ մըտ-
նում կամ թունաւորվում էր, և երբեմն՝ կրօն ա-
նարգողի անուն էր ժառանգում, երբեմն ժողո-
վուրդը ճանապարհից հանող հրատարակվում, եր-
բեմն էլ մարդոց գլխից իսկապէս հանող խռովարար
համարվում: Ինչու որ մարդիկ խաւարն աւելի էին
սիրում՝ քան թէ լոյսը, որովհետեւ իրանց գործերը
չար էին:

Բայց Յիսուս, ճշմարտութիւն յայտնողը, եկաւ
և խաւարի մէջը լոյս բերեց: Նա մարդկային իրա-
ւունքների և պարտաւորութիւնների, նշանակութեան
և յոյսերի ճանաչումը ոչ միայն մի քանի գիտուն-
ների սեպհականութիւնն արեց, այլ տարածեց ամե-
նայն ազգերի մէջը: Ամենաաղքատ մարդն անգամ
հասկացաւ նորա ասածներն ու պատուիրածները:

Այն ժամանակ մարդկային—թագ ու պսակ հա-
մարուած մոլութիւնները գողացին. ինչու որ տեսան
թէ՝ իրանց վերջը եկել է: Այն ժամանակ աշուգողի
մէջ ընկած բռնակալները սարսափեցին, ինչու որ
վախենում էին, որ ճշմարտութեան հետ ազատու-
թիւնը աշխարհք կմտնի: Այն ժամանակ կատաղեցան
սուտ քահանայքը, ինչու որ այժմ ամեն մէկը նո-
րանցից ճանաչեց իւր անարժանութիւնը, և թէ ճշ-
մարիտ քահանայութիւնը հագուստի մէջ չէ, այլ
իմաստութեան ու հոգւոյ սրբութեան մէջ: Այն ժա-

մանակ կատաղեցին չարագործները, ինչու որ բռնութեան խօսքերն ու հրամանները էլ տեղ չի պիտի ունենային, ինչու որ էլ կարելի չէր մեղքերի թողովիւն ստանալ Երկնաւորից՝ միայն արտաքին բարեպաշտական գործերով։ Սորա համար նոքա հալածեցին Յիսուսին, որ աշխարհքի լոյս էր դարձել և քաշաքաշ տարան խաչելու։ Պատճառը ո՞ր զար Գործէ աէլլը լոյսը էացանի, ո՞ր է-ը Գործելովը ոչ պատճեն։

Բայց ի զուր:—Այս է ճշմարտութեան զօրութիւնը, որ նա աշխարհի բռնակալին իւր աթոռից ցած կձգի ու պատերազմի զօրքերի գէնքերը ցած դնել կտայ, հազար տարուայ շղթաները կկոտրի սուտ իմաստունների կախարդութեամբ սարքած խօսքերն ու աղօթքները կխայտառակի աշխարհքի առաջներուստաղէմի տաճարը կործանուեց, հեթանոսութեան սեղանները քանդուեցան, երկրիս վերայ տիրող հռոմէական գաւազանը փշրուեց, հին թագաւորութիւնները ջնջուեցան, նորերն առաջ եկան—բայց այս ամեն յեղափոխութիւնների մէջ յաղթող ու հաստատ մնաց իւր տեղն Յիսուսի տուած ուսումը: Երկինքն ու երկիրն էլ որ անցնեն՝ երջանկացնող ճըշմարտութիւնը յաւիտեան կմնայ:

Բայց խաւարի որդիքը շարունակ պատերազմում էին Աստուծոյ լոյսն աշխարհիս մէջ տարածուելու դէմ։ բարբարոս ազգերի բրտութիւնն ու տգիտութիւնն օգնութիւն հասան նոցա։ Դորա վերայ ուրախացան նոքա, որոնք որ խաւարը սիրում էին։ Հինգարերումն՝ ինչ բարի, մեծ ու գեղեցիկ բան՝ որ յառաջ էր եկած, փշացրին, ոչնչացրին։ Մարդոց արած

մանմտութիւնները մին մինի ետևից անց կացան, մոռացուեցան.—բայց կեանքի ճշմարտութիւնը յաւիտեան կմնայ:

Դեռ այսօր էլ Յիսուսի տուած ուսման լոյսը կովում է բարբարոսութեան գիշերի հետ և անյաղթելի ճշմարտութիւնը՝ մոլորութեան հետ։ Եթէ Յիսուս այսօր էլի ման գար երկրիս վերայ իւր աստուածային կերպարանքովն, Նա, սկզբնատիպն ու խսկական պատկերն ամբիծ առաքինութեան, անձառելի խոնարհութեան, որ յօժարում էր զրկել իրան քոլորովին այն բանից, ինչ որ աշխարհասէր մարդս պատվումէ, իբրև իւր ցանկութիւնների, փափագածի ամենափառաւոր նպատակը՝ քրիստոնեաներից քանիսը արդեօք նորա վերայ մտիկ կտային։ Երկրիս մեծերից քանիսներն արդեօք, որ դէպի նորա սեղաններն են գնում, իրանց աշխարհակալութեան սէրը կթողնէին և ազգերին աւելի բաղդաւորեցնել կաշխատէին՝ քանի թէ նոցա արիւնը թափելով փառաւորուել։ Քանի քանիսներն արդեօք այն մարդկանցից, որ խաչուած Յիսուսի քարոզիչներ են դրել իրանց անունը, իրանց ունայնասիրութիւնից ձեռք կքաշէին, որ իրանց փարդապետի նման սուրբ և ազնիւ լինին։ Ի՞նչքան կեղծաւորներ, որքան անառակներ, ինչքան վաշխառուներ արդեօք իրանց մոլութիւնից կհրաժարուէին, որ նորան հետեւեն, նորա գնացած ճանապարհովը գնան։ Քանի քանի ունեսորներ արդեօք իրանց ունեցած կարողութիւնն աւելի լաւ բաների վերայ գործ կածէին, որ նորա ճշմարիտ աշակերտները լինին։ Եւ երբոք Յիսուս մեր մէջն իւր անմեղութեան մեծ վայելչու-

թիւնովն իւր ձայնը բարձրացնէր Աստուծոյ տաճարոները պղծելուն զէմ առերևոյթ բարեպաշտութիւնով ու սովորական արարողութիւններ կատարելով երբոր նա վրէ ժխնդիր մարդուն բարձր ձայնով ասէր սիրեցէք ձեր թշնամիներին. երբոր նա կոյր ամբոխին ասէր՝ այս ժողովուրդը բերանովն է ինձ մօտենում ու իւր զրթունքներովն է ինձ պաշտում բայց սրտովն ինձնից հեռու է, ի զուր են ծառայում ինձ, պատճառն ոք այնպիսի ուսումներ են սորվեցնում, որ մարդկանցից պատուիրած են. — երբ որ նա այս բաներն ասէր, այսօր էլ արդեօք չէին ասիլ նորա համար թէ՝ երազատես է, կամ ժողովուրդը գլխից հանող է, կամ յայտնի թշնամի է սովորական աստուածպաշտութեանը, հերիտիկոս է Աստուծոյ սեղանին ու թագաւորական աթոռին հակառակ՝ փոխանակ պատուելու: Արդեօք չէ՞ գտնուիլ կատաղած մի ժողովուրդ, որ էլի մի անգամ գոռար թէ՝ խաչեցէք դորան:

Այս գեռ ևս այսօր էլ ճշմարտութեան յոյսը մըցում է՝ մոլորութեան խաւարի և ինքնասիրական ցանկութիւնների գէմ՝ և այս պատճառաւ այսօր ևս չարը գործող՝ ատում է լոյսը, որ իւր գործերը չպատժուին: Բայց Աստուծոյ խօսքը կմնայ յաւիտեան, ճշմարտութիւնը կյաղթանակի: Ճեր թագաւորութիւնները կկործանին, Ճեր գպրոցական իմաստութիւնը կմոռացուի, Ճեր կեղծ բարեպաշտական մեծամութիւնը կոչանայ: ճշմարտութիւնը դատում է Ճեղ իբրև անաջառ գատաւոր. Ճեղ կդատի մեռելոց գատաւորի բերանովը, յաւիտեանական կեան-

քի ահ ու արհաւիրքներով: ճշմարտութիւնը չէք կարող բռնի բանտարկել ոչ էլ շղթայել կամ հալածական անել հոգիների թագաւորութիւնից տանջանքներով, կամ աքսորանքով: ճշմարտութիւնը խոստովանողին մեռյրէք բայց հոգին չէք կարող սպանել, ու ճշմարտութիւնը անմահ կմնայ:

Բայց ով ով ճշմարտութիւն է անում, նա դէպի յայս է ժայկուած ով իւր գործերն յայտնի լինին, Ան Աստուծութիւն գործութիւնների անում է, և Աստուծութիւնը հետն է և Աստուծուած է նորանով գործում: Նա գէպի լոյսն է գալիս, մարդոց գատաստանից չէ վախում, նորա գործերը Աստուծով են գործուած: Ինչու համար նա մարդկանցիցը պիտի քաշուի: Ճըշմարտութեան բարեկամն ինքն ամենեւին վախ չունի, բայց սարսափելի մարդ է ամեն մի չարագործի համար, որ վախենում է՝ իւր արարմունքները չբացուին, խայտառակուին:

ճշմարտութեան զօրութիւնը այնպիսի մի բան է, որ իւր բարեկամին ոգեսորում է, նորան մի վսեմ՝ աստուծային՝ աներկիւղ սիրտ է տալի ու սորվեցնումէ՝ մահուան ամեն արհաւիրքները արհամարհել: Տկարին հոգւոյ ոյժ է տալի, որ համարձակ և անվախ աշխարհիս հզօրի երեսը գայ, կանգնի: Ամենամարարակ մարդուն մի վսեմութիւն է տալի, որից իւր մեղքը ճանաչող բռնակալը գողում է: Տգետին ճառարարախօս է անում, որ խորամանկութեան ամենայն համոզիչ վարդապետութիւնները նորա լեզուի առաջը խայտառակուին: ճշմարտութեան լուսի ճառա-

ուագայթը զարմանալի արագութիւնով ամեն հոգիների մէջ թափանցում է և յաղթում է ամենին, որոնք նորան դէմ դնել են ուղում:

Ով որ մարդկային ազգին մի նոր ճշմարտութիւն
է բերում. աւելի մեծ յաղթութիւն է անում՝ քան
թէ այն աշխարհակալը՝ որ իւր զենքի գօրութիւնովը
մի համաշխարհական թագաւորութիւն է կանգնում։
Ինչո՞ւ ես գողում դու ով փոքրոգի մարդ, քու պար-
տականութիւններդ կատարելումը, տանջուելով մըտ-
քումդ, որ դու գայթակղեցնես ուրիշներին քո պար-
տաճանաչութիւնովդ։ Ինչո՞ւ ես ամաչում աշխարհի
առաջը այնպէս անխարդախ, ճշմարիտ, արդար ու
բարեպաշտ լինելուցդ, ինչպէս որ կարող էիր լինել
այնպէս ճանաչելու, ինչպէս որ դու յիրաւի քու մէջդ
մտածում ես, որ ես։ Դէպի լոյսը եկ, որ քո գոր-
ծերդ յայտնուեն, թէ Աստուծով են գործուած։

Ուրեմն մի լքանիր, ով գու ճնշուած ազնիւ հոգի, քո անմեղութիւնդ գուր տեղն է գիշերուան խաւարի մէջ թաղվում։ Ճշմարտութեան ճառագայթը լուսաւորում է մինչև անգամ գերեզմանները։ Եթէ կենդանի մարդիկն էլ լոեն, Աստուած մեռելներին լեզու կտայ՝ քո արդարութիւնդ լոյս աշխարհ հանելու համար։ Մի՛ լքանիր։ գեռ ևս Աստուած առաքինութիւնը բոլորովին կորչել չէ թողել։ արդարութիւնը իւր պաշտպանը կգտնի մինչև այն մարդոց խղճմուանքի մէջն, որ երդուել են քո կորուստգ տեսնել։ — Մի՛ լքանիր գու, որին աշխարհքն չէ ուզում ճանաչել ու զրպարտում է, եթէ ճշմարտութիւնն ես արել, քո գործերդ կյայտնուին, որովհետեւ Աստու-

Ֆով Են գործուած:

Երկնից դուստր, սուրբ ճշմարտութիւն. իմ աստ-
զըս էլ եղիր դու և տար, անցկացուր ինձ կենաց
ամենայն մոլար ճանապարհների միջով։ Երբոր ուղ-
ղութեամբ սրտի պատերազմած կլինիմ այս աշխար-
հիս ամենազնիւ գանձուն համար, այն ժամանակ մի
օր մօտենայ թող իմ մահուան անկողինքիս այն եր-
շանկացնող զգացումը թէ՝ զուր չեմ ապրել։ Այն
ժամանակ գաս, երբ ես ինձ կգտնեմ լի միսիթարու-
թիւնով. դու ի վերուստէն եկած պատգամաւոր, այս
անցաւոր երկրիցս առնելու, տանելու ես կատարե-
լութեան աշխարհն, որոյ մէջը իմ այստեղ կցկտուր
կերպով իմացածս՝ յաւիտենական կենաց ճառագայ-
թովը պայծառանալու է։ Հոգի ճշմարտութեան, հոգի
իմ Փրկչիս Յիսուսի Քրիստոսի, ինձ հետ եղիր։ Մի
թողնիր ինձ՝ ու քեզ յաւիտեանս հաւատարիմ կը-
մնամ։

ԽՈՂԱՄՏԱՆՔԻ ԶՈՐՈՒԹԻՒՆԸ

ԽՂԱՄՏԱՆՔԻ ԶՈՐՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս որ մարդուս ստուելն իւր ետևից գնում է ան-
բաժան, այսպէս և չար գործն ամեն մի յանցաւորի սրտից
ամեններն չեն հեռանում, հանգիստ ու դադար չեն տալի՛. Յան-
ցաւոր մարդն, որոյ սիրտն որդնի պէս կրծում է իւր արած
մեղքն, ուր ուղի՝ թողի փախչի՛, ամենահեռաւոր անապատ՝
անմարդաբնակ տեղ թող գնայ, ուր ոչ մի ձայն, ոչ մի խօսք
չեն լսվում, ուր որ յաւիտենական մի լոռւթիւն է թագաւո-
րում, իւր յանցանքի դառն յիշատակը՝ հազար և մի յանդի-
մանութիւն կթափի նորա գլուխն, հազար ու մի իրաւացի մե-
ղադրանքներով նորա սիրտը կվիրաւորի ու կսեացնի. Յանցանքին
տէր մարդն՝ ուղենայ՝ սարեր ձգի իւր արածների վերայ, որ
ծածկի, թաղի, բայց ինչպէս որ հրաբուխ սարի բերաններից
քանի քանի անդամ էլի կրկնվում է կրակ դուրս դալն, այս-
պէս ևս նորա սիրտն՝ իւր արածների կրակովն միշտ պիտի այ-
րուի, միշտ մուէւը գլխիցը պիտի դուրս գայ, Ուղենայ ծովի
անդունդքի մէջը ձգի իւր արածն, որ տակը գնայ, թաղուի,
էլ դուրս դալու հնարը չլինի, բայց մի ալիք էլի երես կհանի
ու ափը կրերի՛ իւր վատ գործը. Մինչեւ անդամ երկրիս ամեն-
նազօրեղ իշխանութիւնն, որ մարդուս մահն է, մահն անդամ
չէ կարող սրբել, ջնջել պին, ինչ որ իբրև գործ կատարուել է:
Գերեզմանն էլ, որ ամեն մի ցաւ բժշկում է, գերեզմանն էլ

չէ կարող բնաւ յետ բերել կորցրած անմեղութիւնն ։ Գերեզմանների մէջ պառկածների վերայ ևս յաւիտենական գատաւորը կայ, արդարագան Աստուած. բայց իմ սրտիս համար այս է մնում մսիթարութիւնն որ գատողս Աստուած է, Արքանսահման սէրն ամենածանր յանցանքի տանջանքից ու հալածանքից) մարդուս տչքերը սեացնող մաշուան սպանիչ հարուածից անհամեմատ կերպով զօրաւոր է, իմ երկնաւոր Հօրսայս յաւիտենական սէրն, որ թագաւորում է երկրիս խաւարի ու երկնի լուսաւոր աստղերուն վերայ, զիջանի, քաղցրանայ, գթայ սխալական աղամորդուն ու ների նորա վատ գործերն որ արել է այս աշխարհիս վերայ։

Ամեն մահկանացու մարդոց սրտում հնչում է
մի սուրբ ձայն, ու այդ ձայնը հասնում է, ընկնում
է ամենի ականջին, ինչ հաւատքից ուզում է լինի՝
մինչև անգամ կռապաշտ, որ չէ արժանացել դեռ
ևս յայտնութեան լուսին Քրիստոսի փրկարար վար-
դապետութեան աշակերտ լինելու։ Այդ սուրբ ձայնն
հնչում է ու հնչում, ոչ շողոքորթութիւնը, ոչ դրժ-
կամակութիւնը կամ բարկութիւնը և ոչ խելք ծա-
խելն կարող է այդ ձայնը կտրել։

ի զուր է հաւատք ծաղրողն իւր անխոհեմ թե-
թեամտութիւնովն դէս ու դէն ման գալիս ու ամեն
բան գիպուածի գործ քարոզում, բարեպաշտ հա-
ւատքը՝ հասարակ ու անհասկացող ժողովրդի խելքի
բան, քրիստոնէութիւնն՝ կրօնականների հնարած մի
ուսումն բիրտ ժողովուրդին սանձելու համար. ի զուր
չէ ուզում հաւատալ. որ առաքինութիւն կայ, այլ
առաքինութիւնը համարում է խելացնորութիւն կամ

կեղծաւորութիւն. ի զուր է ուզում ինքն իրան համոզել թէ՝ ամեն բան լաւ է, ինչ որ մարդուս հնարագիտութիւնը, խորամանկութիւննն ու անձնական շահն ասում են թէ՝ արած. ի զուր կցանկար նա ուրանալ աշխարհս ու ամեն բան ստեղծող Աստուծուն ու ամեն մի մարդու իւր գործին համեմատ հատուցանող երկնաւոր Դատաւորին.—ներքին ձայնն, որ մեր սրտի մէջ կայ, բարձր ձայնով ասում է թէ՝ սուտ ես ասում, ով մարդ:

Երկիրը շարժում է, տաճարներ ու պալատներ են փուլ գալիս ընկնում. մտերիմ, սիրելի բարեկամներ մահուան գունով գեղնած, գագաղ մոնում. աարսամիելի կերպով կատաղած տարերքից սրտումն աշխարհք է բռնում ու կայծակներ է որ՝ մին մինի ետելից խփում է երկրիս վերայ այս ու այն տեղ։ Ծաղրողը զարհուրումէ. կայ Աստուած, ասում է իւր ներքին ձայնն՝ այո՛ կայ Աստուած, ասում է ինքն ես, լեզուն կապկապուելով ու սիրտը դող ընկած։

Ի զուր ծաղրում է չարագործն երկար ժամանակ իւր սրտի սուրբ ձայնն ու իւր կրթութեան հետեւանք համարում, իւր մանկութեան օրերում լսած առասպելների արձագանք անուանում։ Ուզում է իրան բարձր ու ազատ ցոյց տալ այս ամեն բանից, ինչ որ իրան թվում է թէ՝ նախապաշարմունք է, և ծածուկ շարունակում է այն յանցանքներն, որ գործում էր։ Արհամարհանքով իւր չորս կողմն է մոխկ տալիս ու հարցնում. ով է այն հզօրն, որ ինձ պատժի։ Իւր ներքին ձայնն ասում է իրան. ուղևասա, մէշնարկութիւնն է յէլիւ յէլ ու մէշնարկութիւնն է յէլիւ յէլ։

ուշ կյայքնութիւն, ինչպէս արեգակն լուսի աւագն ու Տէ բան կը ծածկիվում։ Զուր է ինքն իրան տալիս աշխարհային ծայրայեղ զուարձութիւնների. միշտ ծխում է նորա սրտում խանձողն, որ պիտի կպչի ու վառուից գա մի գժոխային կայծ է, որ իրան այրում, մրկում է։ Զուր է ուզում նա աշխարհիս սուրբ կարգից կտրուել գուրս գալ այն կարգից, այն օրէնքից որով մարդս այն պիտի հնձի, ինչ որ ցանել է. մի անյայտ զօրութիւն քաշում, տանում է նորան իւր հետն ու կապում է իւր գործերի հետն աշխարհիս այս յաւիտենական և անփոփոխ օրէնքի ու կարգի հետ։ Իւր կորուստն է տեսնում նա իւր ծածուկ մեղքերից գէմ գնել չէ կարողանում. միշտ ինքն իրանից փախում է. անհանգստութիւնը խաւարեցնում փչացնում է իւր կեանքը. ներքին ձայնն ասում է իրան. Ասում է իւր կեանքը ամեն-լուկան է։

Ի զուր, զրպարտող նախանձ, հալածում ես գունամարտութիւնն և ուզում ես արժանաւոր մարդու իւր արժանաւոր գործերով ստացած թագը գլխիցը բռնի հանել։ Ի զուր ես աքսորում գու, անխիզմ բըռնակալ, անմեղին, որ քո չարագործութիւնները ծածուկ հանել, անմեղին, որ քո չարագործութիւնները լարում, որուկես. Ի զուր ես նորան թակարդներ լարում, որուգայթ ձգում սուտ վկաներով, կաշառած գատաւորներով, քեզ ամօթ ու նախատինք բերող բանտերով, ամեն տեսակ տանջանքներով. չես կարող նորան կոտրել ու քո կամքիդ բերել։ Նա համարձակ կծիծաղիքներ երեսիդ. իւր քաշած ցաւերից արտասուք կեղծաւոր երեսիդ. իւր քաշած ցաւերից արտասուք թափած ժամանակն անգամ քեզ ամաշեցնելով, կոտրեցելով կյաղթի, մինչդեռ դու քո գահիդ վերայ քցելով կյաղթի, մինչդեռ դու քո գահիդ վերայ

Նստած ժամանակդ, կտեսնես, որ գողում ես գլխիցդ մինչեւ ոտքդ. նա իւր բանտի մէջ նստած է ուրախ արտօվի, մինչդեռ զու մեծահաց սեղան նստած, վայելութիւն ես քաշում բայց անհանդիստ բոլորովին ու սաստիկ երկիւղ քաշելով. ուզես, քաշաքաշ տար նորան մահապարտներին սպանելու տեղը, նորա մահն՝ իւր յաղթութիւնը կինի, իսկ նորա յաղթութիւնը քո գատապարտութիւնը:

Այս է խղճանչի զօրութեան, որ մի աներեւոյթ հրեշտակի նման մահկանացու մարդոց ժողովի մէջ մոնում է ու չէ թողնում, որ ստորանայ ճշմարտութիւնն, արդարութիւնն ու անմեղութիւնը. որ չարագործին բռնում է, ինչ մուլթ ու ծածուկ տեղ էլ որ փախչի, ու յանցաւորին գետինը փռում, թէս մի ամբողջ ժողովուրդ նորան աստուածացրած լինի:

Ասպութոյ յահանական օւենչը գրութ է ամենայն ժարդաց որպահը. սորա համար մեր ներքին ձայնը միշտ կայ ու լավում է ու երբէք չէ կտրվում. և մեր մըտքերն իրար հետ կռուելով, իրար հակառակելով մեր ամեն մի գործի համար մեզ կամ դատապարտում են, կամ արդարացնում:

Խղճմտանքը սորվեցնում է մինչեւ անդամ անգէտին՝ թէ ինչ պէտք է անի: Ոչ ոք չէ կարող իրան արդարացնել, իւր յանցանքները՝ թէ՝ աշխարհի, թէ իւր խղճի և թէ մանաւանդ ամենագէտ. Աստութոյ առաջը նորանով թէ՝ զգիտէր, ինչն է ուղիլը և ինչն է ծուռը, ինչն է իրաւացի և ինչն է անիրաւ բան:

Խղճմտանքը չէ կաշառվում, նա արդար դատաստան անող է: Եթէ որ բարին անելու այս սուրբ

զգացմանց հետեւես, ոչ մի ժամանակ դիտմամբ չես գուրս գալ ուղիղ ճանապարհից ու չես սխալուիլ. երբէք գիտութեամբ վատ բան չես անիլ, ու ինքդ քեզ հետ հաշտ և ինքդ քեզանից գոհ կապրես. լոիր այս վարժապետի ասածին, սորա խօսքից գուրս մի գոլ որքան էլ որ քո զգայական հակումներդ գուան, գոչեն թէ՝ գորա ասածը չենք ընդունում: Կաիր գորան այն կասկածելի գիպուածներումն, երբոր գումիմեանց հակառակ հակումներից պիտի քո ճանապարհ կորցնես, մոլորուես այն տեղ, ուր քո շահդպիտի լինի ուրիշների վնասովը, ուրիշների գէմ՝ արած անարդարութիւնովք: Դու մտածում ես վրէժ առնել մի մարդուց, որին բարի չես կամենում: Բայց քո խղճմտանքդ ասում է քեզ նորանից ազնիւ եղիր և ամաչեցուր քո հակառակորդիդ քո մեծահոգութիւնովդ:

Անվայել ցանկութիւնները վրդովում են քո ըգգացմունքներդ. մարմնոյ հեշտութիւնը քեզ հրապուրում է մի ծանր յանցանք գործելու, բայց քո խղճմտանքը ասում է քեզ բարձր ձայնով. անպատկառ, միթէ ուզում ես թոյնն անմեղի սիրութափել: Միթէ ուզում ես յանդգնել գլուխ բարձրացնել Աստութոյ գէմ՝ ու մի գրախտ քանեել, ոչնչացնել: Աչքդ գրել ես ուրիշի ունեցածի վերայ, որ խարէութեամբ կարող էիր ձեռքդ ձգել, բայց քո խղճմտանք ասում է քեզ պարզ մտիկ գլխիցդ հանիր այդ քըդ ասում է քեզ պարզ մտիկ գլխիցդ հանիր այդ պիտք, կորչի գնայ այդպիսի շահն, որ պէտք է ունենաս, քեզ քո իսկ առաջդ ընդ միշտ անարժան մարդ պիտի համարի:

Խղճմտանքը մեզ բան է սորվեցնում, և սորվեցնում է լուրջ կերպով այն բանն, ինչ որ արդարն և ուղիղն է. եթէ որ նորա քեզ տուն տուածովը քրգնաս, քեզ համար ուրիշ ճանապարհ չկայ բաղդաւորութեան հասնելու։ Ոչ ոքի մի լսիր, մի մտածիր թէ՝ միթէ ուրիշ ճանապարհ չկայ, միթէ մի ուրիշ հնարք չեմ կարող գտնել, որ իմ՝ թէև անվայել ցանկութիւններիս հասնեմ. ծուռ ես մտածում. քեզ հրապուրում է մի չար գործ և այդ գործիդ ետևից ծածուկ քո ճանապարհդ է մտիկ տալի զղջումն իւր կարիճի խայթոցներովն. խղճմտանքդ ոչ մի կերպով քեզ հետ չի համաձայնիլ, քո ասածիդ, ուզածիդ կամք չի տալ։ Դու ուզում ես նորա հետ սակարկութիւն անել, զուր է խեղճ հողեղէն տկար մարդ, սխալվում ես. այդ գատաւորին չես կարող կաշառել։

Խղճմտանքը սորվեցնում է աստուածային զօրութիւնով. նա ասում է. այս բանն արա՛, այն՝ մի անիլ, որովհետեւ ուղիղ՝ կամ ծուռ է. բայց այդ ասում է ոչ թէ նորա համար, որ դու շահ՝ կամ անարգանք պիտի ստանաս։ Դու պէտք է բարին անես նաև այն ժամանակն, որ մի օգուտ չունիս ամենենին մինչև անգամ այն տեղն էլ, որ վնաս պիտի գոյքեզ քո արած գործիցդ։ Այսպէս է ասում Յիսուս Քրիստոս. «Ի՞նչ օդուած ճաշդուած, ենէ որ բալը աշխարհու յեւած բերէ ու իւր հագուստն անցած լինի։»

Խղճմտանքն զգուշացնում է։ Արդէն երեխայ ժամանակներս մեր՝ այս՝ այն խաղը արած միջոցին կամ մեր՝ այս՝ այն տան բանն արած ժամանակը՝ վախ էր ընկնում մեր սիրտն, երբոր մտքներիցս անց

էր կենում՝ թուլանալով, խարուելով, ուրիշներից օրինակ առնել, նոցա արած չգովելու գործին հետեւ կամ թէ ինքներս մի վատ հակումից դրդվում էինք մի վատ բան անելու։

Գողը՝ գեռ իւր ձեռքը չտարած ուրիշի սեպհականութիւնը վեր առնելու, սուտ երդումն ուտողը՝ գեռ իւր չարագործ մատը չբարձրացած, անհաւատարիմ մարդը՝ իւր բարեկամին գնալ մատնելուց դեռ առաջ՝ ինչպէս անհանգիստ են լինում; ինչպէս սիրտները խփում է։ Երկիւղն, որ ընկնում է իրանց սիրտներն, ինչ սարսափելի ու ծանր կերպով հասկացնում է ու ստիպում, որ իրանց մտքումը գրած չար գործիցը յետ կենան. և որչափ աւելի սաստկանում է այդ անհանգստութիւնը, քանի որ մեղք գործողն աւելի է մօտենում իւր նպատակին։

Մարդուս կուռելն իրան զգուշացնող իւր խղճմտանքի հետն՝ իւր բարի հրեշտակին հետ գոտեմարտելուն է նման, որ իրան պինդ բռնելն և ոչ թէ վայր ընկնել թողնելն է ուզում։ Այս, ինչպէս շատ անգամ այս հրեշտակի դէպի բարին ազդու կերպով մեզ յորդորող սրտաշարժ խօսքը զուր է անց կենում։ Զար գործն, որ մտքումը դրել էր, կատարում է մարդս։ Մեղք գործողն այստեղ ու այնտեղ կորցնում է պատիւն մարդոց առաջն, և միշտ աւելի տիսուր և աւելի կամաց գալիս է այն աստուածային պատգամաւորի զգուշացնող ձայնն, որ իրանից հեռանում է։

Մահկանացու մարդս մի անգամ որ մեղքի ծառայ գարձաւ՝ ու սիրտն որ քանի գնաց, աւելի ու

աւելի քարացաւ, խղճմտանքը մի մի անգամ, կարծես, իւր՝ մի ժամանակ ունեցած՝ իշխանութիւնը բոլորովին կորցնում է. պատահում է, տարիներ են անց կենում բայց նա չէ շարժում կարծես մեռել է. մինչև անգամ այնպիսի. օրինակներ կան պատմութեան մէջ, որ ցոյց են տալի մեզ մարդուս խղճամտանքի բոլորովին մեռնելն ու էլ չզարթնելը, իւր բոլոր կեանքի մէջ և մինչև իւր մահն: Այսպէս պատմում է գուքս Ալբայի վերայ, որ Նիդերլանդում բողոքականներին հալածելու ժամանակ՝ 13,000 մարդուց աւելի՝ իբրև հերետիկոս՝ սպանել է տուել, թէ իւր անկողինքումը հեշտ ու հանգիստ է հոգին տուել: Արդեօք մոլեռանդութիւնն այն աստիճան կուրացրել էր նորան, որ իւր սարսափելի եղեռնագործութիւնն աստուածահաճոյ բան էր համարում: ու յիրաւի հաւատում էր, որ երկնքի արքայութեան մէջ տեղումը կլինի: Կամ թէ այնքան մեծ վարպետ էր ներսից ջոկ մարդ լինելու՝ իսկ դրսից ջոկ մարդ երեալու կողմանէ, որ ներսից քաշած տանջանքները մինչև իւր կեանքի վերջին վայրկեանը աշխարհի աչքից ծածկել, թագցնել կարող էր: Այս, կան մարդու կերպարանք ունեցող այնպիսի հրեշներ, որ Աստուծոյ բնութեան մէջ դրած օրէնքը կարողանում են այն աստիճանի ուրանալ, որ իրանց համար, կարծես, ոչ մի բան չկայ, ուրեմն ինչ կուզեն, կամեն: Այդ ամենագէտ Աստուծոյն միայն յայտնի է և Աստուած է միայն դորա ամենարդար Դատաւորը: Մենք մաշկանացու մարդիկս իրաւունք չունինք նախախնամութեան ճանապարհները քննելու: Այնքան միայն

մեզ համար բաւական համարենք իմանալու, որ այդ-
պիսի օրինակները միայն շատ հազուագիւտ բացա-
ռութիւններ են ընդհանրապէս ընդունուած կարգ
ու կանոնից։ Սորա հակառակ իրողութիւնները թէ՝
պատմութեան մէջ և թէ մեր կեանքի մէջ պատա-
հած փորձերովը՝ անդադար կրկնվում են և նորից ու
նորից հաստատվում։ Ամեն մի արած անիրաւ ու
վատ գործը մեր սրտի խորքումն իւր արձագանքն
ունի։ Այս արձագանքը կարող ենք գուցէ առ ժա-
մանակ մի այլ և այլ ու անընդհատ վայելչութիւն-
ների, զուարձութիւնների ու զբաղմունքների մէջ
բռնի խեղզել ու չլաել. մենք կարող ենք մի ծածուկ
երկիւղի, սրտի մի անհանգստութեան զգացումը, որ
մեր մէջ զարթնում է իւր մեղադրանքներովը մեր
դէմ, բանի տեղ չդնել. բայց միշտ չե՞նք կարող այդ-
անել։ Ամեն մի միայնակ անցկացրած ժամը, ամեն
մի անքուն անց կացրած գիշերն ընդդէմ մեր կամ-
քին միտքներս է ձգում մեր արած վատ գործն ու
մեզ տանջում։ Ամեն մի սիրտ շարժող պատահմունք
մեր կեանքի մէջ, շատ անդամ միայն մի աննշան
դիպուած, որ անդամ ուրիշ մարդու աչքին չէր ընկ-
նիլ, նորից զարթեցնում է վրէժինդիր ոգիներին։
Որչափ երկար ժամանակ կարողացել ենք ամենայն
կերպով աշխատել, որ մեր արած վատ գործը մըտք-
ներս չըերենք ու մեր սրտի հանգստութիւնը չխան-
գալու, այնչափ աւելի սարսափելի կերպով յարձակ-
գարուի, այնչափ աւելի սարսափելի կերպով յարձակ-
գարում է դէպի մեզ մեր մեղքի դառն լիշտակը՝ մի
չեղեղի նման, որոյ ընթացքի առաջ մի թումբով՝
կտրել, փակել ուղենար մարդ, ու այդ չուրը, քանի

գնար, բարձրանար, ուռչէր, որպէս զի՝ երբոր ժամանակը գայ, հասնի, յանկարծ մի թունդ քամիով ամեն ըան հեղեղի, ծածկի, տանի, փշացնի:

Խղճմտանքը պատժում է: Կարողանայինք մի անբաղդ մարդու իւր միայնակ եղած ժամանակը տեսնել, երբոր նստած տանջուռում է իւր խղճմտանքից. ինչպէս նա Աստուծոյ երեսից ընկած, մարդոց աչքից ընկած, ինքն իրան ատում է ու արհամարհում. ինչպէս՝ մի արդար մարդ տեսած ժամանակն՝ զգում է իւր չարագործ, գարշելի մարդ լինելն. ինչպէս մինչեւ անգամ միամտութեամբ տուած մի խօսքը դաշոյնի հարուած է գառնում նորա սրտին. յիրաւի՞ շատ լաւ կլինէր այն խոր տպաւորութիւնը մեր մըտքումն էլ անմոռանալի ու անջնջելի մնար ու մեզ համար մի զգուշացնող հրեշտակ լինէր մեր կենաց վրոքութիւնների մէջն:

Անդադար դողում է իւր մեղքը ճանաչող մարդու սիրտն այն բոպէից, որ իւր գաղտնիքը կարող է լոյս աշխարհի առաջը հանուել: Բայց երկիւղի և խղճմտանքի խայթոցի մշտական տանջանքները վերջապէս այնքան զօրանում են և աւելանում, որ այս ու այն մարդն, իւր սրտի մէջ եղած դժոխյին երկիւղից ազատուելու համար, ինքը վազում, գնում է ու իւր յանցանքը խոստովանում: Ինչպէս որ մարդկայ, որ մարդ է սպանել՝ ու էլ չէ կարողանում հանգույց, որ մարդ է սպանել՝ ու էլ չէ կարողանում հանգույց, որ մարդ է սպանել, մինչեւ որ չգայ ու իւր յանցանքը գստութիւն դաստաւորին չյայտնի: Ինչպէս այս ու այն խաթեաց գատաւորին չյայտնի: Այսպէս այս ու այն խաթեաց գատաւորին չյայտնի: Այսպէս այս ու այն խաթեաց գատաւորին չյայտնի: Այսպէս այս ու այն խաթեաց գատաւորին չյայտնի:

Հում իւր խաբած մարդուն, կամ նորա զաւակներին ու իւր մեղքը չէ խոստովանում ու թողութիւն ստանում ու ապա հանգստանում: Այնպիսի մարդ կայ, որին կատաղութիւնը խելագարութեան աստիճանին է տարել հասցրել: Կայէնն, առաջին եղբայրասպանն, կատաղութիւնից թափառում էր երկար ժամանակ՝ ոչ մի տեղ հանգստութիւն չէր գտնում. Յուդա Խոկարիովտացին, Քրիստոսի մատնիչը, իրան տանջող կատաղութիւնից ազատուելու համար, ինքն իրան սպանեց: Դեռ այժմ էլ կան այնպիսի կարեկցելի ու խղճալի մարդիկ, որ կայենից ու Յուդայից շատ հեռու չեն՝ ու գժանոցներումն իրանց նմանների կարգումն են և կան, առ իս այնպիսիներն, որ իրանց ձեռքով իրանց սպանում են, որ սրտի անտանելի տանջանքից գերեզմանում հանգստութիւն գտնեն: Այս է խղճմտանքի սարսափելի զօրութիւնը:

Բայց մաքուր խղճմտանքն էլ նոյնպէս աստուածային մի վարձատրութեան է մեզ արժանացնում, ինչպէս որ արհամարհուած, անարդուած առաքինութիւնն սարսափելի կերպով վրէժխնդիր է լինում: Ով որ մաքուր, հանգիստ խղճմտանք ունի, նա ամեն իրան պատահած մարդոց մէջ իւր բարեկամներն, իւր սրտին մօտիկ մարդիկն է միայն տեսնում: Նա ոչ ոքից հեռու չէ փախչում, նա ուրիշից ծածկելու, թագյնելու բան չունի, որ քաշուի: Նորա սիրտը միշտ հանգիստ է, միշտ ուրախ: Այն ուրախութիւնն, որ բերում է նորան փոխուող ժամը, նա լիովին վայելումէ, և այն անբաղդութիւնը որ յանկարծ նորան պատահում է, նա տղամարդի սրտով է տանում.

նա այս զգացմունքովն է միտթարվում ու զօրանում, որ խօսքով էլ ասում է ինքն իրան. այն նեղութիւններն, որ դու քաշում ես, քեզանից, քո մեղքից չե՞ն. Աստուած հետդ է, քաշածներիցդ սիրտդ թող չկոտրի ամենելին: Մտիկ տուէք հալածուած անմեղին. իւր մաքուր խղճի ուրախութիւնով թողնում է, երբոր բանն այնպէս է եկել, իւր հայրենիքի բաղդառորութիւնն և ընտրում է իւր համար մուրացկան աղքատի ցուալը. աստուածային մի հանգիստ սրտով ասում է նա իւր հալածողներին, ինչպէս Յիսուս միժամանակ Գեթսեմանիումն ասաց իրան բռնելու եկողներին. « ում որ պտուտմ էք, այն ես եմ»: Աշխարհիս անարգանքն, որ նա կրում է, աշխարհումն անմեղաբար նորա կրած խայտառակութիւնն իրան անպատուաթիւն բերել, կամ պատուից ձգել չե կարող. ամեն անբաղդութիւն, որոյ մէջն ընկնում է՝ կամ ընկել է, ամեն փորձանք, որ նորա գլխին գալու լինի, կամ արդէն եկել է, չե կարող խլելով զըրկել նորան այն երկնաւոր խաղաղութիւնից և անդորրութիւնից, որ նորա սրտի մէջ լնակում է: Մաքուր և արգար խղճմուանքը մի երկինք է մարդուս սրտի մէջ, իշխանութիւն է տալի նորան չարերի վերայնեղութեան մէջ մի պաշտպան աստուած է, մրրկի ժամանակը խարիսխ է նորա համար և ամենափափուկ բարձ, որոյ վերայ հանգիստ կարող է նա հոգի տալ:

Ո՞վ սուրբ Աստուած, երանի թէ մաքուր խըզն-
մտանքի այս անձառելի ուրախութիւնն իմ սեպհա-
կանութիւնս լինէր միշտ, որ ես ոչ մի ժամանակ ոչ

Քո և ոչ իմ առաջին ամօթու կարմբէի իմ արած-ներիս պատճառով։ Որ իմ սիրտս երբէք չզգար ոչ անմաքուր խղճմտանքի արհաւիրքն և ոչ զլջման օձի խայթոցը։

Յիրաւել՝ ես անզօր ու տկար արարած եմ ու
իմ նուաստութիւնս զգում եմ ու ճանաչում։ Կա-
րելի է, որ իմ թեթեամտութիւնսից շատ սխալ քայլ
անեմ կարելի է, որ յուզուած կրքիցս տարուելով՝
քո սուրբ կամքդ մտքիցս քցեմ։ Ա'ս, այն, այն ժա-
մանակն, ովք իմ խղճմտանք, լինիս իմ առաքինու-
թեանս, անմեղութեանս ու սրտիս հանգստութեան
պահապանն։ Ինձ առաջնորդ լինի ճշմարիտ և ազնիւ-
բանի աստուածային զգացմունքն, որ ինքս ինձ անար-
ժան զինիմ ու աստուածանից չհեռանամ, չօտարա-
նամ։ և ոչ Քեզանից, ովք իմ Փրկիչ, իմ երկնաւոր
ուսուցիչս։ Որոյ խօսքովն ես սրբութեան պիտի կա-
րողանամ համնել։

ԶԵ՛, չԵ՛, ով իմ Աստուած, զուր տեղ չես գրել
իմ սրտումն իմ մտքերիս, խօսքերիս ու գործերիս
դատաւորը: Խղճմոտանքի ձայնը Քո ձայնդ է. միթէ
ես արհամարհել կարող եմ երբէք: ԶԵ՛, եթէ շատ
դժուար ես լինէր ինձ համար յաղթել իմ չար ցան-
կութեանցս, ով Աստուած, լսիր իմ հրապարակաւ-
արած ուխտս: Ես պիտի մաքուր ու յանդիմանու-
թիւնից ազատ կեանք ունենամ: Աւելի ուրախու-
թեամբ կտանեմ բոլոր աշխարհի ինձ արած ծաղրը,
աւելի ուրախութեամբ կտանեմ աղքատութիւն,
քաղց, թշուառութիւն, պատրաստ եմ մինչև անգամ
մեռնել, քանի թէ հէնց մի մեղքի տէր լինիմ: որ ինձ


պատուից պիտի ձգի հենց իմառաջս: Միայն կարողանամ պարզերես ու համարձակ աչքերս երկինքը քցել դէպի Քեզ, ի՞նչ են որ ինձ համար այնուհեաւ աշխարհիս ժամանակաւոր նեղութիւնները: Միայն իմանամի որ Քեզ հաճոյ եմ արդէն երջանկութեան հասած ինձ կհամարեմ: Դու զօրացուր ինձ և առաջնորդիր Քո սուրբ Հոգւոյդ զօրութիւնովն իմ կենաց ճանապարհների մէջ: Դու փրկիր ինձամենայն չարից:



¶

Խ Ո Հ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն.

Մարդը մէկ՝ խօսքը մէկ. խօսքը մէկ՝ մարդը մէկ. օրհնուի նա որ ժամանակին լռելն էլ գիտէ: Մարդուս ամեն գործի մէջը վերջին աստիճանի պարզութիւն պէտք է երեխ, իսկ հարկաւոր ժամանակին՝ անպատրուակ ճշմարտութիւն: բայց ինչ որ մի բարեկամ բարեկամին ասում է, հաւատալով որ խօսքը մօտը կմնայ, այդ ասածի և ոչ մի վանկը պիտի լսուի:



« Լաւ խօսելը մի արուեստ է, բայց լռելու արուեստը աւելի՝ մեծ է»: « Մենք ամենքս, ասում է Յակովոս առաքեալը, սխալվում ենք տեսակ տեսակ»: բայց ով որ և ոչ մի խօսքի մէջ չէ սխալվում՝ նա է կատարեալ մարդը, ու կարող է իւր բոլոր անձը սանձած պահել:

Խօսիր՝ որտեղ կարող է օգուտ ունենալ. բերանըդ փակիր մի խօսիր ամենեին՝ որտեղ խօսելու կարող է վնաս բերել: Այս փոքր խօսքերի մէջ քո առաջը դրած է թէ պարզութեան գեղեցիկ առաքինութիւնը և թէ խօսիլ մէջ ունենալու խոհեմութեան նոյնչափ գեղեցիկ առաքինութիւնը:

Մի առ մի աչքից անց կացնենք մեր ունեցած ընկերական յարաբերութեանը ամեն հանգամանքները, ո՞րչափ և ո՞րքան անհաւատարմութիւն կգըտնենք ամեն տեղ: Ի՞նչպէս ամենայն ուշադրութիւնը լարած ու անհանգիստ սրտով գիտում է մէկը այս տեղ միւսի ամեն մի ասած խօսքը, արած շարժմունքը, ինչքան վատ կասկածների ու կարծիքների մէջ է ձգում միւսին այնտեղ մէկի կերպարանքը իւր շարժումներով: ուստի՝ արդեօք մարդոց առ միւմեանս ունեցած այս պակասութիւնը սրտաբացութեան կողմանէ: Նորանից է որ, մարդ կայ՝ երբոր տեղը չէ, ժամանակը չէ՝ չի բացվում, և երբոր տեղը չէ ու ժամանակը չէ՝ բացվում է և ամեն բան անտեղի ու անխոհեմաբար ասում է ու խօսում:

Քանի քանի գերգաստաններ, որ երբեմն սերտ յարաբերութիւն ունէին միմեանց հետ ու մտերիմ բարեկամութիւն, մէկ էլ տեսնում ես իրարից հեռացան, պաղեցին, օտարացան, իրար սկսեցին ատել՝ թշնամութիւն անել: բայց և այնպէս ոչ մէկը նոցանից չէ խարել միւսին՝ նորա սեպհականութեանը կամ ունեցածին վնաս հասցնելով: ոչ մէկը միւսին գիտութեամբ, նենգութեամբ, խարդախութեամբ, կամ չարամտութեամբ այնպիսի փորձանքի ու անբաղդու-

թեան մէջ չէ ձգել՝ որից վրկութիւն չլինի։ Ի՞նչ էր պատճառը, որ նոյս բաժանեց իրարից։ — Անզգոյշ բացաբերանութիւնը։

Դու գանգատում ես, որ ճշմարիտ բարեկամութիւն չկայ, որ մարդիկ քեզ հետ սառն են վարվում։ Դու գանգատում ես որ չես կարողանում մի խօսք բերանիցդ հանել որին իսկոյն չար մեկնութիւն չըտային ուրիշները։ Դու չես իմանում՝ թէ ինչո՞վ ես արժանացել ուրիշների քեզ հետ ունեցած այդպիսի վարմանը։ Դու աւելի համոզուած ես թէ՝ ամեն մի մարդու լաւն ես ասում, որ դու ուրախութեամբ օգնում ես երբոր մի մարդ քո օգնութեանդ կարութէ, որ դու ամեն մի մարդու հետ բարեկամական ու քաղցր վարմունք ես ունեցել։ Քո կարծիքով մի այնպիսի բան չկայ, որ քեզ մեղադրել տար, բայց և այնպէս տեսնում ես որ մարդիկ իրանք իրանց քեզանից բաւական հեռու են պահում։ Ինչից է այս Ա՝ խ, կարելի է, որ մի քառորդ անխոհեմ ժամիցն է, որ դու քո լեզուդ ամենեխն քեզ չպահեցիր, ու այնպիսի բաներ հանեցիր բերանիցդ, որ քո բարեկամիդ քեզ հակառակորդ դարձրեց։ Կարելի է որ ամենեխն միտդ էլ չէ քո առած խօսքերը ու այն ձախ քառորդ ժամը։ Կարելի է որ վաղուց մոքիցդ ընկել են բոլորովին այն խօսքերը, կամ բանի տեղ չես դրած այն ժամանակը, երբոր անզգոյց բացաբերանութիւնովդ խօսում էիր, թէև չար մտքով չէին ասածներդ ամենեխն։ Թուրը ձեռքին առած դաշտի մէջ պատերազմող մարդը շատ հեշտութեամբ է մոռանում։ Թէ ումն է վէրք տալիս, թէև դորա վե-

բայ շատ անդամ են մտածում նոքայ որոնք վէրք
են ստացել և քանի որ աչքները ձգում են իրանց
ստացած վէրքերին:

Սորա համար ամեն մի քրիստոնէի օրէնք լինի՝
մարդոց վարման մէջ Սուրբ Գրոց այն ոսկեղէն խրա-
տըն իմաստնոյն Սողոմոնի, որ գրում է՝ վարչէր ու
դաստի ընկերէր հէտո, բայց ուրեմն գաղտնիքը մէ՛ յայտնելը՝
(Սռակ. գլ. ԻԵ. Համ. 9):

Սովորաբար բոլորսին սխալ գաղափար են կազմում մարդիկ խօսքի և վարման մէջ՝ մեր ունենալու խոհականութեան վերաբերմամբ, երբար խոհականութիւն ասելով, հասկանում են միայն ծածուկ պահել այն՝ ինչ որ մէկը մեղ հաւատացել ասել է՝ թէ իւր գիտաւորութիւնների, թէ իւր հանդամանքների և թէ իւր ունեցած կապերի մասինու Բայց այնպէս չէ, չարաշար սխալվում են: Գաղտնիք է իմաստուն մարդու համար այն ամեն բանն, որ իւր նման մարդոց ամեն մէկը կցանկար՝ ուրիշները չիմանան, չհրատարակուի, ու որ և իցէ առիթ չգառնայ իրան համար, վտանգի մէջ ընկնելու: Այդպիսի բան հրատարակել երբէք իրաւունք չհամարես քեզ, թէ որ աւելի բարձր ու մեծ պարտականութիւններ քեզ չհրամայեն այդ մասին ճշմարիտն ասել ու խօսել:

Այստեղ տեղի ունին ոչ միայն այլ և այլ դիտաւորութիւններ, որ եթէ ժամանակից առաջ յայտնուին՝ կունայնանան, այլ և տան մէջ պատահած անցքեր, ընտանեաց վերաբերեալ գործեր, ինչքի ստացուածքի ու կարողութեան հանգամանքներ և ուրիշ բաներ, որ մարդ երբէք չի ցանկանալ, որ ու-

քիշներն իմանան, որովհետեւ ըստ ինքեան անմեղ քանն ևս հեշտութեամբ կարող է ի չարն մեկնուիլ, և այս կամ այն չարամիտ մարդը կարող է իւր լածն չ չարն գործածել ու մի վնասակար բան գուրս բերել: Յետոյ՝ տեղ ունի նաև այն, ինչ որ ամեն մարդ ծածուկ է պահում, օրինակ՝ իւր պակասութիւնները, սխալանքներն և թուլութիւնները՝ որոնցից ամաչում է, ու չէր ցանկալ երբէք, որ շատերի ականջն ընկնէր հրատարակուելով, նոյնպէս և այն խօսքերն ու գատողութիւնները, որ մարդ իրան մերձաւոր շրջանի մէջ ասում է ու յայտնում, որոնք կարող են շատ ճշմարիտ լինել բայց բերնէ բերան ընկնելով՝ կարող էին վնասակար հետեանքներ ունենալ:

Այս մոքով խոհականութիւն գործ դի՞ր թէ՛ ուրիշների գաղտնիքների մասին և թէ քեզ վերաբերեալ գործերիդ մէջ:

Ունչնելի ժողժերի մէջ խոհականութիւն ժողժ դէ՛՝ թէ՛ թէ՛ ինքդ հասկացած լինիս, և թէ՛ քեզ հաւատալով ասած լինին՝ որ իմացածդ քո մօտդ մնայ. ոչ մի մարդ իրաւունք չունի ուրիշների մասին այն բանը յայտնելու, ինչ որ իրանք յայտնել չեն կամենում: Ինչ որ գաղտնիք չէ, կարող ես ասել, խօսել, բայց ով որ առանց ուրիշի կամքին բերնից հանում է նորա մասին չասելու բանն ու այդպիսով հրապարակ է ձգում, այն մարդը ճշմարտապէս մի գողութիւն է անում ուրիշի վերաբերմամբ:

Սովարաբար բացաբերանութիւնը թեթեամուռ թեան հետեանք է. աւելի շատ անգամ հետեանք է այն ձգտմանն, որով ցանկանում է մէկը ուրիշների

առաջը շատ բանի տեղեկութիւն ունեցող, շատ բան իմացող ոմն երեել, ու իւր տուած կարծիքներով փայլել ուրիշների առաջ. շատ անգամ ևս հետեանք է չարամիտ՝ կամ խարդախ բնաւորութեան:

Զգոյշ կաց, որ և իցէ վաստիա դատապահներն ուրիշների վերայ՝ առանց լաւ մտածելու, որպէս զի անխոհեմաբար խօսած զինիս. նոցա խօսքերը, նոցա կարծիքները, մինչև անգամ քո ամենամուերիմ բարեկամացդ մէջը չինչեն, եթէ գու ու իցէ կերպով կարող ես մտքիցդ անցկացնել թէ ասածդ բերնէ բերան ընկնելով՝ կարող է վնասակար լինել:

Եթէ որ ընկերութեան մէջ ուրիշների վերայ վատ կարծիքներ ու գատողութիւններ ես լսում այդ խօսակցութեան մէջ ն' արնիւ, ն' մասնակցիւ, եթէ որ չես կարող համեստութեամբ ու հիմնաւոր կերպով պաշտպանել նորան, որի վերայ սխալ գատողութիւն են տալիս: Նատ անգամ լրելն էլ ճարտարախօսութիւն է՝ և խելօք մարդոց առաջին համարում ու համակրութիւն է գտնում: Անհնար է որ՝ շուտ թէ ուշ՝ ականջը չհամնի այն մարդուն՝ ուրիշների իւր պակասութեանց, կամ իւր ընտանեկան հանգամանաց վերայ տուած վատ գատողութիւններն, և նաքը խելօքութիւնով ու խոհեմութիւնով լռութիւն պահելն ու նոցա խօսքերին չգառնալը լսելով, քեզ սրտանց չպատուի: Այստեղ գու՝ մի երկրի նուաճելու նման՝ մի սիրտ վաստկեցիր առանց բերանդ բանալու:

Անկարելի է որ մարդս իրան այնպէս կարողա-

նայ պահել, որ ուրիշների գործերի վերայ ամենևին քերան չբանայ ու չխօսի: Այդպիսի դիպուածներում քեզ համար պարտականութիւն համարիր թէ՛ ընկերութեան մէջ և թէ մոերիմ մարդոց հետ ունեցած խօսակցութեան մէջ՝ յիշել ու յիշեցնել այն բարի գործն, որ ուրիշների մասին իմացել ես. մի քաշուիլ յիշել նոցա լաւ յատկութիւնները, նոցա բարեկամական ու բարեմիտ դատողութիւններն այլոց վերայ, նոցա այս և այն բարի գործերը: Այն գովասանքն, որ գու տալիս ես լսողների վերայ այն ներգործութիւնն է ունենում՝ որ նոքա յարգանք են ունենում թէ՛ դէպի այն անձը, որոյ մասին լսում են ասածներդ՝ և թէ՛ դէպի քեզ. գու մարդոց մէջ աւելացնում ես իրար հետ ունեցած բարեկամութիւնը, համաձայնութիւնը և իրար հետ սիրով ու հաճոյական վարմունք ունենալն, և քո վերայ է դառնում քո պատճառած բարւոյ մի մասն: Զգուշացիր մինչեւ անգամ գաղտնիքներ իմանալու հետաքրքրութիւնից, պատեհութիւնն էլ որ ունենաս՝ մի ցանկանար: Ինչ քան որ քիչ բան իմանաս՝ այնքան աւելի սիրտդ հանգիստ կլինի և այնչափ էլ աւելի սրտի պարզութեամբ ուրիշների հետ կտեսնուիս: Նատ անգամ ուրիշի գաղտնիք իմանալը մեզ մեծ վտանգի մէջ է ձգում այն կողմանէ, որ մի նայուածքով կամ կերպարանքի մի շարժմունքով ինքներս ակամայ մեզ մատնում ենք: Նատ անգամ մի գաղտնիք իմանալը մեզ ամենաանախորժ դրութեան մէջ է ձգում, որովհետեւ դորանով մի պարտականութեան տակ ենք մասնկում այն գործի մէջը մեր անկախ գործունէու-

թեամբ մէջ տեղ դուրս գալ: Եթէ մենք այն գաղտնիքը չիմանայինք՝ թէ մենք և թէ ուրիշները, բաւական մտատանջութիւնից ու գժուարութիւններ քաշելուց ազատ կլինէինք: Իսկ թէ քաղաքական ընկերութեան մէջ քո ունեցած դիրքովդ այնպիսի բաների մասին տեղեկութիւն ունիս, որ քեզ պէս մի մարդ ծածուկ է պահում՝ կամ իւր յատուկ բարւոյն համար պէտք է ծածուկ պահի ու չյայտնի, մտքիցդ նորա մասին իմացածդ այնպէս հեռացուր, որպէս թէ ամենևին չփիտես, Մինչեւ անգամ ինքը քեզանիցն էլ ծածկելու պէս արա խոհականութիւնովդ, և զգոյշ մնա որ և իցէ՛ առիթ տալուց, որ կասկածներ կարող էին յարուցանել՝ թէ գու գիտես: Ամենամտերիմ բարեկամիցդ անգամ ծածկիր, որովհետեւ ապահով չես՝ որչափ երկար ժամանակ ևս՝ քո բարեկամդ կմնայ:

Ուրիշների գաղտնիքը յայտնելն այնտեղ և այն ժամանակ միայն թոյլատրուած է, մինչեւ անգամ անհրաժեշտ է, ուր որ աւելի բարձր պարտականութիւններ մեզ հրամայում են չծածկել. այս բանն այնտեղ և այն ժամանակն է հարկաւոր, երբոր օրէնքն ու իշխանութիւնը պահանջումեն հասարակաց բարւոյն համար: Այնպիսի տեղ այնպիսի ժամանակ իսոհականութիւնը տեղ չունի ու բերանը խուփ պահանականութիւնը տեղ պահուի պահանականութիւնը տեղ և յանցանքի մէջ հելով զմրել չարագործութիւն և յանցանքի մէջ մասնակցութիւն է: Պարտականութիւն է գաղտնիք չափանիք, այլ պարզ պարզ յայտնել, երբոր այդ մեր չպահել, այլ պարզ պարզ յայտնել, երբոր այդ մեր իմացած գաղտնիքն ուրիշների վնասուն համար իմացած գաղտնիքն ուրիշների վնասուն համար նիւթած չարամիտ գիտարութիւններ են. կամ

Երբոր մենք գիտենք թէ՝ ումանց ունեցած այլ տեսակ մտածմունքն՝ ուրիշները՝ թեթևամտութիւնից, տգիտութիւնից, կամ բարեմտութիւնից կարող են ի բոլոր սրտէ ընդունել, սաստիկ հաւատ ընծայելով, գորանով վատ վիճակի մէջ ընկնել։ Այստեղ մարդոց ճշմարիտ բարեկամը պէտք է առաջ դուրս գայ՝ զգուշացնելով, և որոնք մօտ են վտանգի ընկնելու, զգուշաւոր կերպով իսկապէս բարի ճանանապարհը սորվեցնի։ Պարտականութիւն է լոյս աշխարհ հանել վատութիւնն, երբոր լոելը միայն այն նշանակութիւնը կունենար՝ որ յայտնի մարդիկ իրանց անպիտանութեան, իրանց կրքոտ չարամտութեան։ Իրանց նեղսրտութեան մէջ հաստատուեն, և այլոց միայն վնասակար լինին իրանց սեփական շահուն համար։ Այսպիսի տեղ այլոց ծածուկ չար միտքը չյայտնելը, չհրատարակելը միշտ ամենայն արհամարհանաց արժանի մի անարդ հաճութիւն ու հաւանութիւն տալ է չար բանին՝ բարւոյ վնասուն համար։

Բայց կան և այնպիսի մարդիկ, որ ուրիշ ամեն բանի համար լաւ լոել գիտեն, իսկ իրանց սեփական գործերի համար բացբերան են, պիտի անպատճառ ուրիշներին ասեն, պատմեն։ Զափազանց պարզորտութիւնից, որովհետեւ կարծում են թէ՝ ինչ որ իրանց է վերաբերում, ուրիշների համար էլ մեծ նշանակութիւն ունի, կամ վատ սովորութիւնից, որ արել են, միշտ իրանց վերայ խօսելու, ասում են ամեն մի մարդու, ով որ իրանց լսում է, խօսածներին ուշադրութիւն դարձ-

նել է ցոյց տալի՝ պատմում են թէ ինչ են արել ու չեն արել. ինչ գիտաւորութիւններ ունին, որ ուղում են առաջ տանել. ինչ բաների մէջ խելօք են գտնուել, ինչ բաների մէջ յիմարութիւն են արել. ինչպէս արհամարհելի է երեսում մեզ միշտ մի այդպիսի անխոչեմ շատախօս մարդ։

Կայ նոյնողէ առ մշակուած խոհական բնիւն ի՞նչ է առաջնային մէրայ։ Այս խոչականութիւնն այն պարտականութիւններից մէկն է, որով մարդու պարտական է իւր բարօրութեան ու հանգստութեանն։ Թէեւ բացասրտութիւնը մի առաքինութիւն է, բայց մի առաքինութիւն, որ խոչեմութեան հետ միտցած չէ, իւր պատուաւոր անուան իսկապէս արժանիա չէ։ Աթէ կուղեօ իսկապէս բազգաւոր լինել սովորիր բաղդաւորութիւնդ սրտիդ խորքի մէջը պահէլ։ Զգոյշ եղիր, որ ուրիշներին, առանց վերջը մոտածելու՝ իւր սիրտդ ուրախացնելու և հանգստացնելու համար՝ շուտ քո կարողութեան հանգամանքը չյայտնես պարծենալու մոքով։ Դուք վեզ վտանգի ես ենթարկում, քեզի դէմ ուրիշի չկամութիւնն ու նախանձը շարժելով այնտեղ, ուր գու գրեթէ չէիր կարծել։ Զգուշացիր քո հանգամանքներիդ մասին, երբոր վատ են՝ առանց մոտածելու, ուրիշներին մի բան իմացնելու, որովհետեւ գու վնաս կբերես այն հաւատարմութեանն, որ մինչեայն ժամանակ ունէիր. լեզուգ քեզ չպահէլով՝ այն միջոցներից կզրկուես որոնցով գեռ քեզ կարող էիր օգնել։ Զգոյշ կաց ուրիշներին քո ծանրակշիռ դիտաւորութիւններդ անխոչեմարար իմացնելու, որով-

Հետեւ նոցանից շատերն իսկ դորանով տեսնում են իրանց նպատակները ունայնացած, երբոր չարախնդաց մարդիկը ժամանակից առաջ իմանում են: Լեզուդ քեզ պահիր ու բերնիցդ բան մի հաներ քո իսկ սխալանացդ մասին: Առանց այն էլ մի ունայն պարծանք է, երբոր մի մարդ իւր արած յիմարութիւններն իրեւ իրան համար մի պարծանք է պատմում: Բայց շատ անգամ պատահում է, մանաւանդ միամիտ ու պարզասիրո մարդոց մէջ, որ պարզ պարզ խօսում են այդ մասին օտարների առաջ: Ազնիւ մարդն, որ այդպիսի խոստովանութիւնները լսում է, թէև համեստութեամբ ձայն չէ հանում, բայց անազնիւ մարդն ընդհակառակն առիթ է ստանում յաղթանակ կանգնել մեր դէմ՝ մեր մասին աւելի զօրաւոր կերպով վնասակար բանը խօսելու: Նա ուրիշների հետ մեր վերայ խօսելու ժամանակ, վերադիր անելով, մեր արած փոքրիկ թուլութիւնները յիմարութեան չափ է մեծացնում, ու մեր սխալանքները՝ մոլութեան հաւասար երեւացնում:

Եթէ մի գաղտնիք ունիս, ամեն բան էլ քեզ համար գաղտնիք լինի, որոց յայտնուիլը ոչ ոքին օգուտ չի բերիլ, բայց քեզ միայն վնաս կհասցնի. որպիք նոյնպիսի զգուշութեամբ քո սրտումդ պահել, ինչպէս որ դու ուրիշի գաղտնիքը բերնիցդ չհանելու պարտական ես: Ով որ իւր սրտի միջինը յիմարաբար բերնիցը հանում է ու աշխարհի աչքի առաջը բաց գնում, թէ՛ իւր անձը, թէ՛ իւր բաղդաւորութիւնը, թէ՛ իւր հանգստութիւնը և թէ՛ իւր ապագան՝ ուրիշների կամայականութեանն է յանձնում, նա այ-

նուհետեւ այլ և ազատ չէ, որպիշետեւ կորցրեց իրան, և ով որ լիակատար ազատութեամբ գործել այլ ևս չէ կարող, այնպիսի մարդը երբէք զօրաւոր կերպով գործ չէ տեսնում: Մի հաւատար երբէք քեզանից ջոկ մի երկրորդ ու երրորդ մարդու աւելի՝ քան թէ քո անձինդ պէտք է հաւատաս:

Պարզ պարզ ասելն՝ առանց մի բան թաքցնելու՝ վայելուչ է միայն այնտեղ, ուր որ ծածկելը յանցանք է, ուր որ պարտականութիւն է, առանց ծածկելու իւր միտքը, իւր կարծիքները, իւր դատողութիւնը, իւր նպատակներն ու իւր հանգամանքները ուրիշներին յայտնել որպէս զի նոքա չխաբուին իրանց՝ մեր վերայ ունեցած ամենալաւ և ամենավատ կարծիքովը: — Քո գործերիդ մէջ խոհականութեամբ լռութիւն պահիր ու մի խօսիր, բայց բոլորովին էլ բերանդ մի զմրիլ: Ուր որ դու բարւոյ սիրովն ես միայն խօսում, մեծ վտանգի չես հանդիպիլ. բայց մինչեւ անգամ անտարբեր բաների մէջը բերանը փակելն ու չխօսելը, մի արգար ու բարի բանի վերայ, վատ կասկած է յարուցանում քո բնաւորութեանդ այդպիսի յատկութեան վերայ:

Մարդկային կենաց մէջ րոպէներ կան, որ լռելը ցաւալի ու կորած մարդու թուլասրութիւն է: Այսպէս կարող են մի թագաւորութեան մէջ մեծ շարժումներ լինել՝ թէ՛ քաղաքի և թէ՛ հաւատոյ վերաբերեալ գործեր, ուր որ ամեն մի մարդ սուրբ պարտականութիւն ունի իւր գոյնը յայտնի անելու: Ինչ որ մեր համոզմանքն է, նորա վերայ հաստատ պիտի մնանք և աներկիւղ ամեն մի ժամանակ իրեւ քրիս-

տոնեայք՝ առանց մնապարծութեան, առանց նենգաւոր ծածուկ մտքերի և առանց կրքու տաքութեան, բայց և առանց սաստիկ կերպով կշռելու մեր անձնական օգուտն։ Երկու երեսանի մարդիկ, որոնք ոչ մէկի հետ վատամարդի լինել չեն ուզեցել, միշտ եղել են ու եղել աշխարհում։ Արդէն քրիստոնէութեան նոր տարածուելու ժամանակն, երբոր ամենայն մարդոց հոգիքը զգացուած էին զօրաւոր կերպով, արեգակի նման ծագող ճշմարտութիւնից, այն ժամանակն ես անհաստատ և յերկուս հետս կազացող մարդոց մասին յիշողութիւն է լինում, որոնց մասին Սուրբ գիրքը բարձրածայն ասում է։ Աս + Եղ Քէ էմ, որովհետո դու = ու պաշ ես և ու պատօ։ Եւ ինչպէս որ այն ժամանակն էր, այնպէս էլ այժմն է։ Մենք այնպիսի մարդոց համարում ենք ժամանակաց մէջ ամենից արհամարհուածների կարգումն։ Որոյ սիրու չէ տաքանում մի աւելի բարձր գաղափարով, որ գերազանց լինի իւր համար քան թէ իւր տունն ու իւր գործերը, նա ցոյց է տալիս պարզ կերպով, որ իւր համար սէրը գէպի իւր հայրենիքը, սէրը գէպի մարդկութիւնն ու աստուածայինը գատարկ խօսքեր են՝ զօղանջող ծնծղաների նման։ որ նա իւր ինքնասիրութեան մէջ քարացած է։ Ամենայն բան իւր ժամանակն ունի՝ նէ լունը և նէ խօսէլը։ «Խորագէտ լինել օձերի նման և միանգամայն միամիտ՝ աղաւնիների նման», քո աշակերտացդ այս պատուիրեցիր, և Յէսուս Քրիստոս, դու, կեանքի մեծ Ռւսուցիչդ, և զգում ես՝ թէ որչափ մեծ կշռու ունի մեր համար՝ որ մեծ ուրիշ մարդոց բաղդաւորութեան համար մեր լեզուն

իմաստուն կերպով գործածենք. ժամանակին ու տեղին համեմատ խօսենք, ժամանակին ու տեղին մոլիկ տալով, լուենք։ Զգում եմ՝ թէ ինչպէս առաքինութիւն չէ ամենելին անխորհուրդ բացասրտութիւնը, որպէս և որչափ անարգ ու գտրովելի՝ իւր համոզմանը մատնիչ լինելը։ Ուրեմն իմ քրիստոնէական պարտականութեանս առաջինը լինի մարդոց հետ իմ ունեցած յարաբերութեանցս ու վարմանցս մէջ թէ զգուշաւոր լուութիւնը և թէ ճշմարտութեան համար համարձակ խոստովանութիւնս իւր ժամանակին ու տեղին։ Վասն զի իմ պարտականութիւնս է, ով իմ Փրկիչ, իմ աստուածային տիպարս, քո տուած օրինակին հետեւելով, իմ շուրջու եղած աշխարհը բաղդաւորեցներ որչափ որ ոյժս հասնի գործելու։ Սորգաւորեցներ ինձ այն անելի ինչ որ դու արի՞ր, Յոյց տուրինձ իրաւանց և արդարութեանց շատիլը, որ ես մուժ հանգամանացս օրերի մէջ ևս քեզ արժանի կերպով ընթանամ։ Ինձ քո իմաստութեան հոգւովը լից, որ ես ամեն տեղ թէ խօսելու և թէ լուելու ժամանակը չափ ու սահմանից գուրս չգամ։

四

ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ ԽՕՍՔԻ ՄԷջ.

(Կողման 4. 6.)

Ամենայն բան, ինչ որ մտածում ես, մի խօսիր. մեծ
մասը քեզ համար պահի՞ր, ինչու որ, նետը, որ մի անգամ
ձգուեց, այլ ևս երբէք իւր ընթացքից չկ' նոտորիլ։ Բայց
երբոր պարտաւոր ես խօսել, պինդ ու հաստատ կանգնիր իրբե
տղամարդ։ Ծառն՝ իւր պտուղներով կդատեն. մարդուն՝ իւր
խօսքերով։

A decorative horizontal line consisting of a thin black line with a series of small, dark diamond shapes placed at regular intervals along its length.

Ասոսքե՞րն էլ գործեր են. իմ խօսքերիս համար
նոյնպէս հաշիւ պիտի տամարտերը քննող Դատաւորին,
ինչպէս որ իմամեն գործերիս համար արդար դատա-
ւորին հաշիւ պիտի տամ: Խօստելն էլ գործեր են:
Խօսքով աշխարհի մէջ մեծ ու նշանաւոր բաներ ենք
անում. յառաջացնումենք շատ ու շատ բարի գործեր,
ու շատ անգամ պատճառում ենք մեծամեծ չարիք: Ոչ

Հարստութիւնն, ոչ ծագումն և ոչ քաղաքական նշանաւոր դիրքն, այլ խօսքն է մարդուս մեծ զօրութիւնն ու կարողութիւնն, որով նա գործում է: Ոչ թէ թուրքն, այլ խօսքն է շատ ամուր և զօրաւոր զէնքն, որով մենք կարող ենք վիրաւորել պաշտպանուիլ կամ պաշտպանել:

Մեր խօսքը բալասան է, որ մենք իբրև ամոքող ու թեթևութիւն տուող գեղ լցնում ենք ցաւած սըր-տի վերայ. բայց խօսքը մահաթոյն էլ է, որով մենք ամքողջ մի ընտանիքի անփրդով բարօրութիւնը խանգարում ենք: Խօսքով է, որ մենք ինքն իրան կորցրած կամ յուսահատուած մարդուն ոիրտ ենք տալի ընկած տեղից վեր հանում՝ ու հպարտին այնպէս կոտրում ենք, որ ընկնում է: Լեզուն է, որ թըշնամութիւն է սերմանում և նոր բարեկամներ ձեռքբերում: Լեզուն ամենայն բան իրար հետ կապն է, որ մարդկային ընկերութիւնն իրար հետ միութեան մէջ է պահում: Խօսքով՝ վիշտը ամոքվում է, հոգուը փարատվում, ուրախութիւն աւետվում, սուրբ ջերմեռանդութիւն աւելանում. — բայց և խօսքով է բարկաւթիւն շարժվում, անմեղութիւնը ճամբից հանվում, չարութիւնը ոյժ ստանում առաջանալու, ճշմարտութիւնը ոչնչանում, աշխարհի վերայ գժոխք շինվում:

Եթէ իմաստուն մարդու համար իւր կենաց մին-
չև անգամ չնշին մի գործն էլ իւր ուշադրութեան
արժանի պիտի երևի, եթէ նա մինչև անգամ մի
ամենափոքր գործ անելու ժամանակը պիտի կշռի
առաջ և ասի իրան թէ՝ քեզ վայելո՞չ է—ուրեմն

որքամն կշիռ պէտք է ունենայ նորա առաջ խօսքը,
որ իւր կենաց ամենօրեայ գործն է: — Խօսքն եմ
ասում, որով պիտի իմանան մարդիկ իրանց մտածո-
ղութեան կերպն և որով պիտի յայտնուի իրանց
սրտի արժանաւորութիւնն, կամ ցածութիւնն ու ան-
պիտանութիւնն:

Երբոր ես խելքի տակ եմ քցում ու մէկ մէկ
միտք եմ անում այն ամեն բանը ինչ որ ես, իմ
մոքերս յայտնելով՝ բարի կամ չար բան առաջաց-
նելու պատճառ պիտի լինիմ, պէտք է սարսափիմ
թեթևամոռութիւնից, որով շատ անգամ իմ հրա-
մաններս եմ տուել, իմ ցանկութիւններս յայտնել,
իմ կարծիքներս իմացրելու կամ դատողութիւններս
տուել:

Տեսնում եմ ու հասկանում, որ այդ ժամանակ
շատ անգամ իմ ամենայն կշիռս ու պատիւս կորց-
րել եմ, որոնց ետևիցն եմ ընկնում. տեսնում, եմ
որ ինքս եմ մեղաւոր, որ իմ ունեցած մեծ պատիւս
շատ պակասել է իմ ծանօթներիս, քաղաքակիցնե-
րիս առաջ. մինչեւ անգամ այն պատիւը չունիմ իմ
ազգականացս մէջ, որ շատ ցանկալի էր ինձ ունե-
նալ: Իմ լեզուս շատ քիչ անգամ իւաղաղ սրտիս և
ընտրող ու զգուշաւոր մոքիս գործիքն էր, ինչպէս
որ ես կցանկայի լինէր միշտ. այլ աւելի շատ անգամ
գործիք էր իմ վրդոված սրտիս բարկութեան, իմ
շարախնդացութեանս հակմանը, իմ ունայնասիրու-
թեանս ձգտմանը, իմ պարսաւելի ցանկութեանցս,
իմ իշխանասիրութեանս իմ շահասիրութեանս:
Ի՞նչպէս կարող եմ Աստուծոյ առաջին պա-

տասիսան տալ որին յայտնի են իմ ամեն մոտծ-
մունքներս: Ի՞նչպէս հանդիսաւոր կերպով ասաց եր-
բեմն Փրկիչն այս յորդորական խօսքը. « Ասում եմ
ձեզ՝ որ մարդիկ պէտք է համար տան ամեն մի դա-
տարկ խօսքի համար, որ իրանց բերանից հանել են.
Քո խօսքերովդ կարգարանաս, քո խօսքերովդ կը
պարտաւորուիս»:

Ուրեմն ինչ որ անում էք խօսքով կամ գործով
այն ամեն բանը Փրկի՛ անունովն արէք. այնպէս ա-
րէք՝ ինչպէս ինքն Յիսուս կանէր, երբ որ նա ձեր տեղը,
ձեր հանգամանաց մէջը գործելիս լինէր:

Եւ միթէ այնքան գժուար է այս մեծակշիռ պար-
տաւորութիւնը, — այն պարտաւորութիւնը, որոյ կա-
տարման համար պատիւ եմ ստանում. Աստուծոյ և
մարդկան առաջը, իբրև հատուցումն ու վարձատրու-
թիւն:

Միթէ գժուար է իմ լեզուս սանձած պահել,
որ իմ բանականութեանս ամենամեղմ ակնարկու-
թեանը հնազանդում է: — Թէև մի քանի անգամ ար-
դէն ամեն բան կարողացել եմ իմ վերայ անել. ո՛ր-
շափ շատ անգամ արդէն իմ խօսակցութեանցս ու
դատողութեանցս մէջ շատ զգուշաւոր եմ գտնուել
որ մի վտանգ հեռացնեմ, կամ մի օգուտ ձեռք բե-
րեմ: Մարդոց շրթունքից դուրս եկած խօսքը դա-
տարկ շունչ չէ, որ երբոր գուրս եկաւ ու օգում ցըն-
դեց, մոռացուի. նա մի նետ է սլաքաւոր, որ սրտի
մէջ մտնում է ու մնում:

Ուշե՞ն խօսէլ մէջ խոհմաննիւնը Քրիստոսի ճըշմա-
րիտ աշակերտի մեծակշիռ յատկութիւններից մէկն է:

Այս խոհեմութիւնը ձեռք է բերված իւր վերայ ունեցած մշտական ուշադրութեամբ, ու միշտ գործ գնելով վերջապէս սովորութիւն է դառնում և վարձատրում է մեզ նորանով, որ մենք սրտով ինքներս մեզանից գոհ ենք լինում, այո՛ մինչև անգամ մեզ պահպանում է ու պաշտպանում հազար տեսակ դրժգոհութիւններից ու անախորժութիւններից, որոց պատահում ենք ուրիշ անգամ մեր թեթևամտութիւնովն ու անմտածողութիւնից:

Բահականութեան այս արթուն հսկողութիւնը նորանումն է, որ իւր դատողութիւնների, կարծիքների և ցանկութիւնների մէջ ոչ մի գրգռուած կըրքից, որպէս և հաճոյական կամ անհաճոյ բանի սաստկութիւնից չէ տարվում: Այս այն աստուածային անվրդով հոգւոյ դրութիւնն է, որ Քրիստոս իւր կենաց ամեն բոպէների մէջ ցոյց տուեց:

Անկարելի է ենթադրել խօսքի մէջ խոհեմութիւն, երբոր բանական հոգին իշխանութիւն չունի իւր վերայ, իւր հողեղէն բնութեան վերայ, իւր զգացմանց վերայ, որ իւր մարմնոյ պտուղներն, իւր արեան և իւր գրգռուող ջղերի ներգործութիւնն են: Թէև բանական հոգին բարկութեան բորբոքուազ աւելքը չէ կարող արգելել բայց երբոր արիւնը ալէկոծվում է, պէտք է իրան բռնի, որ հեշտ բան չէ, չայլայլի, չչփոթուի, «— մէ գործի չէ չպահի: Նա պիտի համբերի հաստատ կամքով՝ մինչև իւր հանգստութիւնը գտնի և այնուշետե որոշի՝ թէ ինչ պիտի անի: Անմաքուր ցանկութիւններ կարող են զարթնել մարդուս մէջ. բայց Քրիստոսի աշակերտը նոցա գե-

րին չէ: Նա ոչ մի որոշում չէ անում, քանի որ այդ ցանկութիւնները նորանում կատաղի դրութեան մէջ են. նա նորանց ոչնչացնում է իւր կամքի հաստատութիւնովը՝ մինչև որ նա ինքն իւր իշխանութեան տէրն է դառնում և այն ժամանակ նա անում է այն որոշումն, ինչ որ պէտք է: Մի նշանաւոր շահեցողութեան հրապոյրը կարող է մի բոպէ նորա պատոյ զգացման վերայ ընկճող կերպով ներգործել, բայց իմաստունը չէ թողնում իրան ձնշուիլ այն հրապուրովն, ու ակամայ մի ծուռ գործ անել: Նա չէ թողնում իւր բերանից խօսք գուրս գայ, իւր ձեռքը մի գործի կազի, մինչև որ իւր պարտականութիւնը լաւ կշռի և իւր մէջը պարզ կերպով հասկանայ, թէ արգեօք իւր գործ գնելու միջոցներն, որոնցով ինքն նպատակի պիտի հասնի՝ յարգելի են:

Մշտապէս մեզ կրթելը մտածելով բան անելու և մտածելով խօսելու՝ մեզ համար երկրորդ բնութիւն է դառնում: Եւ ահա սորա ետեւիցն է, որ մենք պէտք է ընկնենք, այդ կրթութեանը պիտի մենք ձգտենք միշտ իրեւ Աստուծոյ որդիք: Մինչև անգամ աւածինունեւը մեր հոգւոյ արքունիքնեւը պիտի դառնան, այն ժամանակ մօտենում ենք մենք արքունիքնեւան: Առաքինութիւնն էլ այնտեղ է տեսնվում միայն, երբ որ հոգին իւր մէջը մեղսական կամքի դէմ պատերազմում է ու յաղթում: Բայց այնտեղ, ուր որ մաքուր կամքը տէր գարձաւ, այնպէս որ մեզ այնուհետեւ գժուար կինէր ուրիշ կերպ գործել, այն ժամանակ հոգւոյ սրբութիւնը ձեռք բերինք. «Ով որ մի խօսքով չի սխալուիր, նա է կատարեալ մարդը»:

Եթէ քեզ համար մեծ կշիռ ու նշանակութիւն
տնի համելն քո կատարելութեան այն աստիճանին,
որ դու Աստուծոյ արարածոց մէջ ամենանարգ ստեղ-
ծուածների մէկը չմնաս, — Եթէ քեզ համար կշիռ
տնի, որ դու հոգւոյ այն վսեմ արթնութեանը
ձգոիս, որով դու միշտ կարող կլինիս քո վերայ և
քո լաւագոյն կամաց վերայ իշխող մնալ, ուրէն ամեն
աւել իօսիր ոիրոն վ:

Ով որ միշտ սէրով և ոիրոն է խօսում իւր նման
մարդոց հետ, նա առաքինութեան լաւագոյն ճանա-
պարհի մէջն է: Նա իրան չի թողնիլ, որ կրքից տա-
րուի ու մատնիչ գառնայ իւր մերձաւորի ուրախու-
թեանը, հանգստութեանը, բարօրութեանն, ապահո-
վութեանն ու պատւոյն: Ինչպէս որ սէրը բոլոր
քրիստոնէական կրօնի կնիքն է, նոյնպէս է միանգա-
մայն իսկական քրիստոնէի ամենայն դատողութեանց,
կարծեաց, և խօսակցութեան հիմն: Այն բերանը, որ
սովորել է միայն օրհնել չի կամենալ իւր հակառա-
կորդի դէմ նզովք հանել. այն բերանն, որ ուզումէ
միայն օգտակարը յաջողեցնել ու յառաջացնել ու-
րախութիւն տարածել և օգնել, ցաւ, վիշտ քաշող-
ներին մսիթարել, ու հոգսերի, մտատանջութիւնների
մէջ ընկածներին բարի ճանապարհը ցոյց տալ իւր
խորհուրդներովն՝ այն բերանը չի բացուիլ, որ ըն-
տանիքների վերայ զրպարտութիւններ թափի, երկ-
պառակութիւններ քցի, պատուաւոր և բարեխիզմ
մարդոց խարի: Ով որ սիրուց և սիրով է խօսում,
իւր մերձաւորի դէմ ոչ մի վատ բան չի ասիլ: Միշտ
մի հաստատ ու անկասկած նշան է՝ մի մարդու ճըշ-

մարտապէտ բարի լինելուն՝ երբոր տեսնում ենք, որ
նա ուրիշների վերայ խիստ դատողութիւն չէ տալին
այլ ամոք և մեղմ կերպովէ խօսում: բայց նա, որոյ
լեզուն ամեն մի դիպուածում ատելի բաներ է թա-
փեցնում անխնայ, աւելի ինքն իրան է ամօթ ու
նախատինք բերումն քանի թէ այն եղբօրն, որի վերայ
չարախոսում է: « Զեր խօսքը », այսպէս է ասում
Սուրբ Գիրքը՝ « միշտ սիրով ու աղով համեմած լինին
որ իմանաք թէ՝ ինչպէս պէտք է ամեն միս մարդու
պատասխան տալ :

Մարդուն ճանաչում ես իւր խօսքերից, որ թա-
փանցիկ, բարակ քողի նման են, որոց մէջ քեզ լաւ
երեսում է նորա հոգին. իւր խօսքերին մափի տա-
լով, նորա վերայ դատողութիւն ես անում ու հաս-
կանում ես, թէ ինչ մարդ է. ու իւր բերնից դուրս
եկած խօսքերովն նա քեզ գրաւում է. կոշտ ու կո-
ղիտ խօսքերը ցոյց են տալիս, որ բերնից հանող
մարդու հոգին և սիրուց ու անտաշ է. որ պակառա-
ւոր է նորա կրթութիւնը, որովհետեւ վայելն ու ան-
վայելը չգիտէ. ամօթ, պատկառանք, պատիւ իւր
համար անձանօթ բան է. մոքին ու բերնին եկածը
գուրս է տալի, առանց կշռելու. իւր համար ազնիւ
կանոնների հիմն ու գաղափարը չունի, քնքոյշ զգաց-
ման համար ինչ է տանելի կամ անտանելի, նորան
անյայտ է, նորա համար մի և նոյն է ու տարբերութիւն
չունի: Արդ՝ ինչպէս որ գու ուրիշների վերայ դատու-
զութիւն ես անում ու մոքիդ որոշումը տալիս, նո-
զութիւն ես քո իսկ խօսքերովդ քեզ կդատեն: Քո խօ-
սկանք ես քո իսկ խօսքերովդ քեզ կդատեն մէջն ինքդ ես տալի նորանց ձեռ-

քրն այն չափն, որով պիտի չափեն քո արժանաւութելինդ ու անարժանութիւնդ։ Եթէ որ քո խօսքերիդ մէջ ուրիշների դէմ սէր, բարեկամութիւն, խիղճ, արդարութիւն, չափաւորութիւն, խնայողութիւն չկայ, ի՞նչպէս կարող ես կարծել որ ուրիշները՝ քեզ դատած ժամանակը՝ բարեկամաբար՝ կամ արդարութեամբ դատեն։ Եթէ որ դու քո արած դիտողութիւնների, նկատողութիւնների մէջ՝ ամենեին աջ ու ձախը չես մտիկ տալիս, վճռաբար ասում ես ասելիքդ, սուր գանակով կտրում՝ պրծնում, քեզ վերայ մեծ կարծիք ունենալով իբրև կատարեալ ու անսխալական ոմն՝ ի՞նչպէս կարող ես դու հաւատալ, որ քեզ նման մարդիկ սրտով կյարին քեզ։ — Մարդիկը քեզ համար միշտ այն են, ինչ որ դու ես նորանց համար։

Մարդոց հետ մշտ ճշարկելու խօսէ՛ր ու անկեղծ սրբութ Սուտ ասելով, սուտը խօսելով, քո քաղաքացիներիդ ձեռին անուղիղ չափ մի տալ քո արժէքդ չափելու։ Ասելի է մարդու խօսքերի մէջ խորամանկ զգուշաւորութիւնը, որոյ նպատակն է ուրիշներին խաբել ու այնպիսի զգացումներ կեղծել, որ իւր մէջը չկայ։

Կեղծաւորի հոգին մի մշտական չարագործ է, որ լոյսից վախենալով, իրան խաւար խոր փոսերումն է ծածկում, որ չգտնեն. միշտ քողով ծածկուելու է կարօտում, որ ուրիշների աչքից ընկնի, ասելի չդաւանայ։ Ու այդպիսի ողորմելի մարդն ի՞նչ յարգանք պիտի ունենայ դէպի ինքն, որ չէ կարող համարձապիտի ուրիշների պատճեն այնպէս յայտնի երեխի ու կուիլ առանց ծածկուելու այնպէս յայտնի երեխի ու

րիշների առաջն, ինչպէս որ է ի՞նչպէս կարող է նա գոհ լինիլ իրանից, երբոր իւր ծածուկ պահածցածութեանը պատճառով միշտ պիտի դողայ՝ աշխարհի աչքը իրան ու իւր անարդ գործերը տեսնելուց խմանալուց։

Նատ մարդիկ իւելօքութիւն են համարում իրենց խօսքերի մէջ աւելի քաղցր, աւելի պատուաւոր, աւելի սիրելի, աւելի բարի կամեցող, աւելի բարեսէր, աւելի մեծահոգի, աւելի համբերող ու տանող երեւելու, քան թէ իսկապէս են. բայց այսպիսի իւելօք ութիւնն ամեն ժամանակ դէպի խորխորատներ է տարել։ Նուա՝ թէ ուշ՝ ցած է ընկնում ամենախորամանկ խաբերայի երեսից՝ իրան աւելի սիրուն ցոյց տուող դիմակն, ու մարդ սարսափում է, մի սիրելի մի հաճելի երեւեցող կերպարանքից. որոյ ետև ինքնասիրութիւն ու նենգաւոր խորամանկութիւնն էին հանգամանաց մուած. այսպիսի մարդու մի ժպիտն անգամ մեզ վտանգաւոր է երեւում, որովհետեւ այդ ժպիտի տակը ծածկած չարութիւն կայ։

Ոչ մի իւելօքութիւն չկայ, որ կեանքի ամենայն հանգամանաց մէջ աւելի հաստատ ճանաչուած լինի, քան թէ անխարդակ ու պարզ բնաւորութիւնն։ Աշխարհը միայն նորան է հաւատում, որին որ ճանաւում է, նորան է մարդս իւր սրտինը հաւատում, ով որ սիրան ազատ ու ազնիւ կարող է ցոյց տալ որ իւր սիրան ազատ ու ազնիւ կարող է ցոյց տալ անկեղծաբար. բայց խորամանկ մարդուն դէմ, խորամանկութիւն ու անհաւատարմութիւն են գործառնում։ Նաև կարելի է ասել իւր խաղը դեռ ևս զնում։

չսկսած, արդէն շատ բաժինը կորցրել է, ու տաճելէ
տուել:

Ուրեմն իւլօւն-նիւնը իւթուի մէջ՝ այն կեղծու
մեղմ կերպարանք ու վարմունք ունենալը չէ, որով
մենք մեզ աւելի ենք խայտառակում, ինչու որ, այն-
քան անպատիւ լինելու մարդիկ չէինք, կարծես. այդ
խաբերայութիւնն, որ անում ենք աշխարհի մէջ ու
սորան, նորան խաբում, այդ իսկ մեր խաբերայու-
թիւնովն մենք մեզ իսկ չարաչար կերպով ենք խա-
բում, ու գորա ցաւն մեր սրաբն ամենասատիկ կեր-
պով է ներգործում. խօսքի մէջ խոչեմութիւն ունե-
նալն այն է, որ մենք ակն յայտնի կերպով ցոյց
տուած լինինք մեր արած դատողութիւնների մէջ չափ
ու սահման պահելներս, իսկական խղճի ու կարեկ-
ցութեան հետ միասին, որ բոլորովին անխնայ ու
անխիզմ կերպով վարուած լինինք այնտեղ, ուր որ
ամօք վարմունքը վնաս չի բերի. առանց մտածելու
և կշռելու բանի դրութիւնն ու հետեանքը պարզու-
թիւնով ու բացաբերանութիւնով խօսելուց զգոյշ
մնանք, ուր որ վնաս պիտի յառաջանայ. տեղին ու
ժամանակին խօսենք, որ մեր խօսքերը մարդոց կամ
օգուտը առաջ բերենա կամ գալու վնասին առաջն
առնեն: Բայց աւելի շատ անգամ ևս ճշմարիտ խե-
լօքութիւնը խօսքի մէջ նորանումն է, որ մարդ գի-
տենայ տեղին ու ժամանակին լու:

Որչափ որ ճշմարտասիրութիւնը քրիստոնէի զար-
դըն է, նոյնչափ ևս նորա անունը կոարում է ու իւր
պատուից ձգում նորա ծայրայեղ նախանձախնդրու-
թիւնը ճշմարտութեան համար, կամ ճշմարտամոլու-

թիւնն, որպէս և ասելն, առանց պահելու և առանց
աջ ու ձախ նայելու՝ այն ամեն բանն, ինչ որ գիտէ,
ու մտածում է: Ճշմարտութիւնը մի անեղծելի սրբու-
թիւն է, մի ազնիւ ծաղիկ է, որոյ քնքոյշ ու գեղե-
ցիկ բաղադրութիւնը կոշտ ձեռքով բռնողից շուտ
աւերպում է: Այստեղ պէտք է ճշմարտութիւնը խօ-
սել միայն, ուր որ խօսքի նպատակը արդարութիւն
ու խաղաղութիւնը պիտի լինի: Բայց խկոյն այդ ճշ-
մարիտ խօսքի տեղ պէտք է բոնի լուսութիւնը՝ երբոր
խօսելով վնաս պիտի յառաջանայ, ուր որ ընտանիք-
ների կամ մասնաւոր մարդոց հանգստութիւնը զուր
տեղը պէտք է կորչի. այնտեղ ևս պարտակա-
նութիւն է խօսք բերնից չհանել, ուր որ մեր խօ-
սելը մեր արժանաւորութիւնը պէտք է ստորացնի:
Երբոր Յիսուս Հրէից մեծ ատենի առաջը կանգնած
էր և իւր վերայ ամեն կողմից ու շատ բերաններից
զրպարտութեան խօսքեր էր, որ իւր դէմը կտեղա-
յին, ասում է Սուրբ Գիրքը՝ նա լուս էր, ամեննեին
չէր խօսում: Նորա լուսը այսպիսի ըոպէի մէջ՝ իւր
անմեղութեան ամենաճշմարտախօս վկայութիւնն էր:
Բայց երբոր նորան քահանայալետը վերջապէս ստի-
պեց խօստովանել իւր առաքման մասին իշրե Մե-
սիս, այն ժամանակն ասաց նա արձակ համար-
ձակ՝ ես եմ. թէ և իւր բերնից հանած այդ խօսքը
նորան մատնեց չփրկուելու և ամենաչարաչար մա-
հուան:

Կեանքի ամեն մի զրութեան մէջ՝ մեր անելիքը
սորվեցնում է մեզ մեր քրիստոնէական զգացմունքը:
Մի բան մարդուս համար անհամեմատ կերպով աւելի

դիւրին է, այսինքն է՝ խելօք կերպով մի գործ անել,
քան թէ իմաստուն և ազնիւ կերպով։ Մեր անելու
գործի մէջ խելօք կերպով շարժելու ստիպում է մեզ
աշխարհս ու նորա մէջ մեր արած ամենօրեայ փորձը,
բայց իմաստուն և ազնիւ լինելու համար ճանապարհը
չէ, այլ այն, որ տանումէ մեր հայեցուածքը գէպի
Աստուած և յաւիտենականութիւն։ Ամենից իմաս-
տունը միայն նաև է, որոյ խելօքութիւնն ամենապատ-
ղաբերն է սրտի համար։ Բայց թէ՛ մեր իմաստութիւնն
և թէ խելօքութիւնը ցոյց ենք տալի մենք միայն
խոհեմութիւնն է։ Խօսքերն էլ գործեր են, որ Աստուած
է գատում։ սորա համար այն միայն խօսենք, ինչ որ
օգտակարն է, ինչ որ մեզ նման մարդոց վերայ այն
ներգործութիւնն է ունենում, որ նորանք ուղղվում
են լաւանում, ուր որ խօսելու տեղն է անպատճառ
և ախորժ է ականջների համար լսելու։

Ով Աստուած, այն բերանն, որ քեզ փառաբանում է ու պաշտում՝ այն բերանն, որ երկիւղի ժամերումը հառաջանքով քեզանից օգնութիւն է խնդրում, տուր՝ որ այդ բերանն իրան երբէք չպղծի անմաքուր խօսքերով, երբէք չպղծի իրան՝ չարախընդդաց ծաղրածութեան խօսքերով, զրպարտիչ ատելութիւնով, արած անգութ դատաստանով մեզ նման մարդոց մէջ տկարներուն վերայ:

Ով ամենասուրբ էութիւն, ինձ ևս արժանի
արած սուրբ պահել ինձ՝ թէ իմ զգացմանցս, մոտած-
մանցս ու ցանկութեանցս մէջ՝ և թէ իմ բերնից հա-
նած խօսքերիս մէջ։ Արժանի արած ինձ այն պար-
գևիդ՝ որ ճշմարտութիւնն ու սէրն՝ թէ ուրախու-

թեան և թէ տրտմութեան ժամերումն իմ խօսքերիս վերայ իշխեն, որպէս զի ասածներս ամեն տեղ իբրև բարի սերմն ընկնեն, սրտերի վերայ, բարերար ներգործութիւն ունենան, բարօրութիւն, սըրտի գոհութիւն և ուրախութիւն յառաջ բերեն ամեն իմ եղբարց սրտի ու հոգւոյ մէջ:

ուղում նի Շն աղջուկ մատենական ՀԵ և մատե
րիա օվալ սպասում զբ սիրու ունչեց բազմի ուժ
առ բազմի պահան ունչեց Շնու հայու այս
ուղ մատենական ՀԵ և մատենական բազմի ունչեց
բան Հենդու կամա աղջուկ աղջուկ աղջուկ աղջուկ
ՅԱՆԿ
Երես

Ա. Աշխարհիս մարդոց ինելօքութիւնն ու քրիս-	3
տոնէի իմաստութիւնն	
Բ. Յաւիտենական կեանքի մասին ակնարկու-	20
թիւններ	
Գ. Վերջին կամք	38
Դ. Յանկարծ մեռնելն է լաւ, թէ երկար հի-	
ւանդութիւններ ու նեղութիւններ քաշելոց	
յետոյ	53
Ե. Պատրաստ եղիք միշտ	66
Զ. Ծշմարտութեան գօրութիւնը	78
Է. Խղճմուանքի գօրութիւնը	90
Ը. Խոհականութիւն	104
Թ. Խոհեմութիւն խօսքի մէջ	120

914
915
916
917
918

«Ազգային գրադարան




NL0027650

«Ազգային գրադարան



NL0027649

«Ազգային գրադարան



NL0027648

«Ազգային գրադարան



NL0027647

«Ազգային գրադարան



NL0027646

